NMC Ազգային Հիփոթեքային Ընկերություն	**ԱԶԴԱԳԻՐ** «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

ԱԶԴԱԳԻՐ

Թողարկողի ֆիրմային անվանումը՝	**«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն**
Կազմակերպա-իրավական ձևը՝	**Փակ բաժնետիրական ընկերություն**
Տեղեկություններ թողարկողի վերաբերյալ՝	**0010, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան Հանրապետության 22, 7/1 հեռ. (+374 10) 56-07-41 էլ. փոստ՝ info@nmc.am ինտերնետային կայք՝ www.nmc.am**

Արժեթղթերի դասը՝	**անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս**
Արժեթղթերիձևը՝	**Ոչ փաստաթղթային**
Արժեթղթերի քանակը՝	**350,000 (երեք հարյուր հիսուն հազար) հատ**
Արժեկտրոնային եկամտաբերությունը՝	**Ֆիքսված՝ տարեկան 7.5 (յոթ ամբողջ հինգ տասնորդական) տոկոս**
Շրջանառության ժամկետը՝	**36 ամիս (3 տարի)**
Տեղաբաշխման ձևը՝	**Երաշխավորված**
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	**10,000 (տասը հազար) ՀՀ դրամ**
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	**3,500,000,000 (երեք միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ**

Տեղաբաշխողի ֆիրմային անվանումը՝	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Կազմակերպա-իրավական ձևը՝	**Բաց բաժնետիրական ընկերություն**
Տեղեկություններ տեղաբաշխողի վերաբերյալ՝	**0010, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Պուշկինի 19, հեռ. (+374 10) 59 23 23, էլ. փոստ՝ araratbank@araratbank.am ինտերնետային կայք՝ www.araratbank.am**

«ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 4

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 6

1.1. Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ 7

1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 14

1.3. Կազմակերպության գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ 18

1.4. Կազմակերպության աուդիտ իրականացնող անձ 18

1.5. Կազմակերպության կառավարման մարմինների կազմի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն 19

1.6. Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները 20

1.7. Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը 21

1.8. Այլ էական տեղեկություններ 23

1.9. Ամփոփ ֆինանսական տվյալներ 23

ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 25

2.1. Ռիսկային գործոններ 25

2.2. Հիմնական տեղեկատվություն 28

2.3. Տեղեկատվություն առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ 28

2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները 40

2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 46

2.6. Լրացուցիչ տեղեկություններ 47

ԲԱԺԻՆ 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 48

3.1. Անկախ աուդիտորները 48

3.2. Ռիսկային գործոններ 48

3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին 55

3.4. Բիզնեսի նկարագիրը 58

3.5. Կազմակերպության կառուցվածքը 64

3.6. Կազմակերպության հիմնական միջոցները 66

3.7. Կազմակերպության զարգացման վերջին միտումները 66

3.8. Կազմակերպության շահույթի կանխատեսումը 67

3.9. Կազմակերպության կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները 70

3.10. Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունը 77

3.11. Հսկող անձինք 80

3.12. Տեղեկատվություն Կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին 80

3.13. Լրացուցիչ տեղեկատվություն 81

3.14. Էական պայմանագրեր 82

3.15. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն 83

3.16. Այլ տեղեկատվություն 83

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 84

NMC Ազգային Հիփոթեքային Ընկերություն	ԱԶԴԱԳԻՐ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

ստորագրող անձինք՝

Արթուր Ջավադյան
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ
Խորհրդի նախագահ _____ 14/10/2019

Արմենակ Դարբինյան
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ
Խորհրդի անդամ _____ 14/10/2019

Անդրանիկ Գրիգորյան
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ
Խորհրդի անդամ _____ 14/10/2019

Էդմոնդ Վարդումյան
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ
Գործադիր տնօրեն _____ 09/10/2019

Արամ Կարապետյան
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ
Ֆինանսական տնօրեն/Գործադիր տնօրենի տեղակալ _____ 09/10/19

Լիլիթ Դունամալյան
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ
Գլխավոր հաշվապահ _____ 09/10/2019

NMC Ազգային Հիփոթեքային Ընկերություն	**ԱԶԴԱԳԻՐ** «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

/ **Աշոտ Օսիպյան**
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն _____ 10/10/2019թ.

Ստորագրությունների իսկությունը հաստատում եմ՝

Էդմոնդ Վարդումյան
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ
Գործադիր տնօրեն _____ 14/10/2019թ

Կ.Տ.

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԹՈՂԱՐԿՈՂ ԿԱՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳՐԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԱԶԴԱԳԻՐ) ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, և ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով Թողարկողի և/կամ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Տեղաբաշխող) ինտերնետային կայքերում՝ www.nmc.am , www.araratbank.am:

2017-2018 թվականների դրությամբ ներկայացված ֆինանսական տվյալների աղբյուրն են հանդիսանում Կազմակերպության աուդիտ արված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, իսկ 2019թ. դրությամբ ներկայացված տվյալներինը՝ աուդիտի չենթարկված հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

Սույն Ազդագրում ներկայացված տեղեկատվությունը, բացառությամբ տարեկան ֆինանսական հաշվետվությունների, անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

1.1. Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ *«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն:*
ռուսերեն՝ *«Национальная Ипотечная Компания» Рефинансирующая Кредитная Организация Закрытое Акционерное Общество.*
անգլերեն՝ «National Mortgage Company» Refinancing Credit Organization Closed Joint Stock Company.

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ
ռուսերեն՝ «Национальная Ипотечная Компания» РКО ЗАО
անգլերեն՝ «National Mortgage Company» RCO CJSC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 22, 7/1:
Կազմակերպության պետական գրանցման համարն է՝ 26:

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 22, 7/1,

Կապի միջոցները՝

հեռ. 56-07-41, 56-09-71
ֆաքս 56-07-41
էլ. Փոստ՝ info@nmc.am,
ինտերնետային կայք՝ www.nmc.am:

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապվել Կազմակերպության Ֆինանսական տնօրեն/Գործադիր տնօրենի տեղակալ Արամ Կարապետյանի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ /+374 10/ 56-07-46 (նրք.՝ 112):

1.1.1. Կազմակերպության համառոտ նկարագիրը

Կազմակերպությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2009թ. հունիսի 3-ին՝ որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն: ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ նաև ՀՀ ԿԲ) խորհրդի 2009թ. հունիսի 16-ի թիվ 182Ա որոշմամբ Կազմակերպությունը գրանցվել է և ստացել թիվ 86 գրանցման վկայական (գրանցման համարը՝ 26): 2011թ. հոկտեմբերին Կազմակերպությունը փոխել է տեսակը՝ ունիվերսալ վարկային կազմակերպությունից վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպության, ինչը առավել ճշգրիտ է բնորոշում Կազմակերպության գործունեության բնույթը:

Կազմակերպությունը ստեղծվել է ՀՀ հիփոթեքային շուկայի զարգացմանն օժանդակելու նպատակով, որն իրականացվում է բանկերին և վարկային կազմակերպություններին երկարաժամկետ միջոցների տրամադրմամբ՝ վերջիններիս կողմից ֆիզիկական անձանց տրամադրված հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման միջոցով:

Կազմակերպության առաքելությունն է՝ Հայաստանի հիփոթեքային շուկան դարձնել իրացվելի, կայուն և հասանելի:

Կազմակերպության նպատակն է՝ հիփոթեքային շուկայում ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի վարկերը հասանելի լինեն բոլոր այն ընտանիքների համար, ովքեր ունեն միջին եկամուտ և հիփոթեքային վարկավորման միջոցով կարող են բարելավել իրենց բնակարանային պայմանները:

Կազմակերպության հեռանկարային նպատակն է՝ համակցել բնարականային վերաֆինանսավորումը և կապիտալի շուկան՝ հիփոթեքային արժեթղթերի միջոցով, ինչը կաջակցի Կազմակերպության նպատակներին ու առաքելությանը:

Գործելով երկրորդային շուկայում՝ Կազմակերպությունն անմիջապես չի աշխատում հաճախորդների հետ, այլ համագործակցում է բանկերի և վարկային կազմակերպությունների հետ՝ տրամադրելով նրանց մատչելի պայմաններով

երկարաժամկետ վարկեր: Կազմակերպության կողմից տրամադրված միջոցների հաշվին համագործակցող Ընկերությունները ՀՀ քաղաքացիներին առաջարկում են հիփոթեքային վարկեր՝ բնակարանային կարիքները բարելավելու նպատակով:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը 2019թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 26,902,988 հազ. դրամ: Համաձայն Կազմակերպության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 2,631,099 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,225 դրամ անվանական արժեքով: 2019թ. ընթացքում Կազմակերպությունը չի ավելացրել բաժնետիրական կապիտալը և Կազմակերպության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Կազմակերպության միակ հիմնադիրը և բաժնետերն է ՀՀ Կենտրոնական Բանկը:

1.1.2. Բիզնեսի համառոտ նկարագիրը

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել վերաֆինանսավորող վարկային կազմակերպությանը բնորոշ բոլոր ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը:

Կազմակերպությունը գործունեությունը սկսելուց ի վեր իր բնույթով հանդիսանում է վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն: Մասնավորապես, որպես իրացվելիության երկրորդային շուկայի օպերատոր, ֆիզիկական անձանց չի տրամադրում հիփոթեքային վարկեր, այլ համագործակցում է ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հետ (այսուհետ՝ Գործընկեր ֆինանսական հաստատություն կամ ԳՖՀ)՝ վերաֆինանսավորելով վերջիններիս կողմից տրամադրված հիփոթեքային վարկերը: Ներկայումս Կազմակերպությունը համագործակցում է 23 ԳՖՀ (16 առևտրային բանկ և 7 վարկային կազմակերպություն) հետ:

Հիփոթեքային վարկավորման գործընթացը ստանդարտացնելու նպատակով և ռիսկայնությունը նվազեցնելու նպատակով Կազմակերպությունը վերաֆինանսավորում է այն հիփոթեքային վարկերը, որոնք համապատասխանում են իր կողմից սահմանված պահանջներին: Կազմակերպությունը վերաֆինանսավորումն իրականացնում է ինչպես

սեփական կապիտալի, այնպես և ներգրավված միջոցների հաշվին: Իր առաքելության շրջանակներում Կազմակերպությունը մասնակցում է ՀՀ հիփոթեքային շուկայում իրականացվող տարբեր ծրագրերին: Մասնավորապես, ՀՀ կառավարությունից ներգրավված միջոցների հաշվին Կազմակերպությունը մասնակցել է ՀՀ հիփոթեքային վարկերի շուկայի վարկավորման ծրագրի իրականացմանը, իսկ 2011թ. հուլիս ամսից մասնակցել է նաև Գերմանական KFW Entwicklungsbank բանկի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում – երրորդ փուլ» վարկային ծրագրի իրականացմանը: 2013թ. հունիսից Կազմակերպությունը օգտագործել է «Հայաստանում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում» առաջին և երկրորդ փուլերի միջոցները, իսկ 2016թ. մարտի 31-ին ստորագրել է եռակողմ վարկային պայմանագիր ՀՀ Կենտրոնական Բանկի և Գերմանիայի Դաշնության KfW զարգացման Բանկի հետ «Հայաստանի բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում 4-րդ փուլ» ծրագրի շրջանակներում՝ ընդհանուր 20 մլն Եվրո գումարի չափով:

2013թ. դեկտեմբերի 17-ին Կազմակերպությունը 13.7 մլն ԱՄՆ դոլարի վարկային գծի պայմանագիր է ստորագրել Ֆրանսիական զարգացման գործակալության հետ՝ բնակարանային էներգոարդյունավետության բարձրացման և միկրովարկերի ֆինանսավորման ծրագրի իրականացման նպատակով:

2017թ. Կազմակերպությունը կնքել է 2 մլրդ. ՀՀ դրամի վարկային պայմանագիր՝ Սևծովյան առևտրի և զարգացման – Black Sea Trade & Development Bank (BSTDB) բանկի հետ՝ գործընկեր ֆինանսական կազմակերպությունների ֆինանսավորման նպատակով:

Իր գործունեությունը ֆինանսավորելու համար լրացուցիչ միջոցներ ներգրավելու և կապիտալի շուկայի զարգացմանը աջակցելու նպատակով Կազմակերպությունը սկսած 2011թ. նոյեմբեր ամսից թողարկում է պարտատոմսեր: Ընդհանուր առմամբ Կազմակերպությունն իրականացրել է թվով 17 տեղաբաշխում: Ընդ որում, Կազմակերպությունը պարտատոմսերի բոլոր տեղաբաշխումներն իրականացրել է աճուրդի

միջոցով (Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ նաև՝ Բորսա) տեղաբաշխման համակարգով):

1.1.3 Ակտիվների համարժեքությունը և պիտանելիությունը

2019 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով Կազմակերպության զուտ շահույթը, համաձայն աուդիտի չենթարկված հաշվետվությունների, կազմել է 999.2 մլն. ՀՀ դրամ[1], իսկ կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունը կապիտալի միջին մեծությանը)՝ 2.83%: Լևերիջի գործակիցը (ընդհանուր պարտավորությունների միջին մեծության հարաբերությունն ընդհանուր կապիտալի միջին մեծությանը) 30.06.2019թ. դրությամբ կազմել է 0.84:

2019 թվականի հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության կողմից վերաֆինանսավորվել է ընդհանուր առմամբ 10,966 հատ վարկ՝ 94.3 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր պայմանագրային գումարով:

Ստորև ներկայացվում է Կազմակերպության ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը.

հազար ՀՀ դրամ	30.06.2019	2018	2017
Ակտիվներ, այդ թվում՝	**64,666,101**	**65,291,992**	**58,151,892**
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	**60,612,900**	**59,173,574**	**54,826,654**
Վարկեր ֆինանսական կազմակերպություններին	*40,571,960*	*41,489,868*	*42,308,330*
Վարկեր աշխատակիցներին	*8,084*	*11,780*	*15,491*
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	*774,423*	*1,067,864*	-
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ (ավանդներ և բանկային հաշիվներն այլ բանկերում)	*19,258,433*	*16,604,062*	*12,502,833*
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	***93.7%***	***90.6%***	***94.3%***

[1] 2019թ տվյալները ներկայացված են հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից և աուդիտի կողմից ստուգված չեն:

1.1.4 Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը

Կազմակերպությունը որևէ խմբի անդամ չէ:

Ստորև ներկայացվում է Կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը.


Ընդհանուր ժողով
Վերստուգող
Խորհուրդ
Գործադիր տնօրեն
Ռիսկերի կառավարման բլոկ
Գործառնական բլոկ
Ֆինանսական բլոկ
Վաղչական բլոկ
Գործառնական տնօրեն/ Գործադիր տնօրենի տեղակալ
Ֆինանսական տնօրեն/ Գործադիր տնօրենի տեղակալ
Ռիսկերի կառավարման բաժնի պետ
Վարկերի վերլուծության բաժնի պետ
Գլխավոր հաշվապահ
Ռիսկերի կառավարիչ
Մոնիտորինգի մասնագետ
Մոնիտորինգի մասնագետ
Վարկերի վերլուծաբան/ առաջատար
Վարկերի վերլուծաբան/ առաջատար
Վարկերի վերլուծաբան
Վարկերի վերլուծաբան
Վարկերի վերլուծաբան
Գլխավոր հաշվապահի տեղակալ
Հաշվետար
Ակտիվների և պարտավորությունների կառավարիչ
Գործավար/HR/PR մենեջեր
SS մասնագետ
Իրավախորհրդատու
Տնտեսվար
Վարորդ

1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Ինչպես բոլոր տնտեսվարող սուբյեկտները, Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ: Ներդրողները մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը պետք է տեղյակ լինեն այդ ներդրման հետ կապված ռիսկերի մասին:

Ընդհանուր առմամբ, պարտատոմսերում ներդրում կատարողները բախվում են ինչպես թողարկող կազմակերպության գործունեության հետ կապված, այնպես էլ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից առաջացող ռիսկերի և պարտատոմսերի հետ կապված ռիսկերի հետ:

1.2.1. Թողարկողին առնչվող ռիսկեր

Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների հետ և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Կազմակերպությունը մշտապես զարգացնում է իր ֆինանսատնտեսական վիճակին սպառնացող ռիսկերի կառավարման արդյունավետությունը և որպես հիմնական ռիսկեր դիտարկում վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, գործընկերոջ (Counterparty Risk), գործառնական, տնտեսության վիճակի և օրենսդրության փոփոխություններով պայմանավորված ռիսկերը:

Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները գնահատելու համար ներդրողները կարող են օգտվել Կազմակերպության ինտերնետային կայքում հրապարակվող ֆինանսական հաշվետվություններից՝ www.nmc.am:

Թողարկողի կողմից որպես առավել էական ռիսկեր են դիտարկվում.

- *Վարկային ռիսկը* Կազմակերպության վարկառուների, փոխառուների և վերջինիս նկատմամբ պարտավորություններ ստանձնած անձանց կողմից պայմանագրային պարտավորությունները ժամանակին և սահմանված չափով կամ մասամբ չկատարելու

հավանականությունն է, ինչը կարող է վնաս հասցնել Կազմակերպության կապիտալին: Վարկային ռիսկի արդյունավետ կառավարումը Թողարկողի կարևորագույն խնդիրներից է:

- *Իրացվելիության ռիսկը,* երբ Կազմակերպության ազատ դրամական միջոցները բավարար չեն ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ դրամական ներհոսքի կրճատման, ներգրավման աղբյուրների սահմանափակման, մակրոտնտեսական իրավիճակի փոփոխության, օրենսդրական փոփոխությունների, նորմատիվային դաշտի փոփոխությունների և այլ պատճառներով: Իրացվելիության ռիսկի հետևանքով դժվարություններ կարող են առաջանալ Կազմակերպության ակտիվներն արագ և շուկայական գնով իրացնելու ժամանակ, հետևաբար նաև խնդիրներ կարող են առաջանալ պայմանագրային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու հետ կապված:
- *Տոկոսադրույքի ռիսկը,* երբ շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վրա, տոկոսային եկամուտների և արդյունքում նաև կապիտալի վրա:
- *Արտարժութային ռիսկը,* որը սահմանվում է որպես փոխարժեքի փոփոխության հետևանքով Կազմակերպության ֆինանսական արդյունքների և կապիտալի վրա ունեցած բացասական ազդեցության ռիսկ:
- *Գործընկերոջ ռիսկի* սահմանաչափն իրենից ներկայացնում է մեկ ֆինանսական հաստատության գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող է ունենալ:
- *Ընդհանուր տնտեսության ռիսկեր,* երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության վրա, մասնավորապես կարող է ուղեկցվել Կազմակերպության կողմից սպասվող

եկամուտների նվազմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարություններով:

- *Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը,* որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա:
- *Գործառնական ռիսկը,* որը կարող է ի հայտ գալ ներքին գործընթացների, համակարգերի խափանման, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների ազդեցության արդյունքում, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ Թողարկողի կապիտալի և/կամ շահույթի վրա: Գործառնական ռիսկի հետևանքով կարող է վտանգվել նաև Թողարկողի համբավը:

1.2.2. Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Տվյալները ներկայացվում են առանց Կազմակերպության տեսակետը արտացոլող մեկնաբանությունների՝ խրախուսելով ներդրողների ինքնուրույն ուսումնասիրությունը:

Ներդրողը պետք է գիտակցի, որ Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով: Այնուամենայնիվ, Թողարկողը տեղեկացնում է նաև, որ իր գործունեությամբ

նպաստելու է պարտատոմսերի շուկայի զարգացմանն՝ ակտիվություն ցուցաբերելով պարտատոմսերի թողարկման և ֆոնդային բորսայում դրանց ցուցակման շնորհիվ:

Հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել.

- ✓ *Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը,* որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:
- ✓ *Արտարժութային ռիսկը:* Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Սույն ռիսկը, հատկապես առնչվելի է այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերի ձեռքբերման և մարման դիմաց ստացվող գումարները փոխանակելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:
- ✓ *Տոկոսադրույքի ռիսկը:* Շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գնի և եկամտաբերության վրա, քանի որ պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:
- ✓ *Վարկային/դեֆոլտի ռիսկ:* Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:
- ✓ *Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը,* որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

Ֆիզիկական անձ ներդրողներին հայտնում ենք, որ
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

1.3. Կազմակերպության գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Կազմակերպության գործունեությունը մշտապես գտնվում է Կազմակերպության խորհրդի և Կազմակերպության գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Կազմակերպության գործունեությունը շուկայի պահանջներին, ինչպես նաև նվազեցնելով տարբեր ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը:

2018թ. ընթացքում Կազմակերպությունն ավելացրել է բաժնետիրական կապիտալը 6,000,020 հազար դրամ գումարով (2017թ.-ին՝ 2,000,010 հազար դրամով):

Կազմակերպության բաժնետիրական կապիտալը 2019թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 26,902,988 հազ. դրամ: Համաձայն Կազմակերպության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 2,631,099 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,225 դրամ անվանական արժեքով: 2019թ. ընթացքում Կազմակերպությունը չի ավելացրել բաժնետիրական կապիտալը, և Կազմակերպության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաները ուժի մեջ են:

Կազմակերպության դեմ դատական հայցեր առկա չեն, բացակայում են և չեն սպասվում կազմակերպական փոփոխություններ:

1.4. Կազմակերպության աուդիտ իրականացնող անձ

Կազմակերպության 2009, 2010, 2011, 2012 և 2013 թվականների անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, որի հասցեն է ՀՀ ք. Երևան 0012, Վաղարշյան

8/1, հեռ.՝ (+374) (10) 26-09-64, ինտերնետային կայք՝ http://www.grantthornton.am, կազմակերպության տնօրեն-բաժնետեր՝ Գագիկ Գյուլբուդաղյան: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեշնլի» անդամ:

Կազմակերպության 2014թ. անկախ աուդիտն իրականացրել է «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ն, որի հասցեն է ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 26/1, հեռ.՝ (+374) (10) 56-67-62, ինտերնետային կայք՝ http://www.kpmg.am, կազմակերպության գործադիր տնօրեն՝ Տիգրան Գասպարյան: «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է «Քեյ-Փի-Էմ-Ջի Ինտերնեշնլ» կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ:

Կազմակերպության 2015, 2016, 2017 և 2018 թվականների անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի՝ 2017-2018թթ. եզրակացությունները ներկայացված են Ազդագրին կից Հավելվածներում:

Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Կազմակերպության աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

1.5. Կազմակերպության կառավարման մարմինների կազմի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Կազմակերպության կանոնադրությունով սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողովը (միակ բաժնետերը), այսուհետ նաև ժողով,
- Խորհուրդ,
- Գործադիր տնօրեն:

Կազմակերպության խորհուրդը բաղկացած է երեք անդամից.

Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը

Արթուր Ջավադյան	Խորհրդի նախագահ	33 տարի
Արմենակ Դարբինյան	Խորհրդի անդամ	37 տարի
Անդրանիկ Գրիգորյան	Խորհրդի անդամ	18 տարի

Թողարկողի կառավարմանը մասնակցող անձինք են.

Անուն Ազգանուն	**Պաշտոն**	**Փորձառությունը**
Էդմոնդ Վարդումյան	Գործադիր տնօրեն	13 տարի
Արամ Կարապետյան	Ֆինանսական տնօրեն/գործադիր տնօրենի տեղակալ	19 տարի
Վասակ Գրիգորյան	Գործառնական տնօրեն/գործադիր տնօրենի տեղակալ	13 տարի
Լիլիթ Դունամալյան	Գլխավոր հաշվապահ	9 տարի
Արթուր Գրիգորյան	Վերստուգող	9 տարի

2019թ. հունիսի 30-ի դրությամբ կազմակերպության աշխատողների թվաքանակը կազմել է 21 մարդ:

Կազմակերպության միակ բաժնետեր է հանդիսանում ՀՀ ԿԲ-ն:

1.6. Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները

Սույն Ազդագրով ներկայացվող առաջարկն ուղղված է ներդրողների բոլոր խմբերին:

Տեսակը	Անվանական, արժեկտրոնային
Ձևը	ոչ փաստաթղթային
Փոխարկելիությունը	ոչ փոխարկելի
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը, արժույթը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ

Թողարկման ընդհանուր ծավալը	3,500,000,000 (երեք միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր քանակը	350,000 (երեք հարյուր հիսուն հազար) հատ
Տեղաբաշխման ձևը	Երաշխավորված
Տեղաբաշխման օրը	ՀՀ ԿԲ կողմից պարտատոմսերի ազդագրի գրանցմանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում: Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը սահմանվում է Կազմակերպության գործադիր տնօրենի որոշմամբ
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	Կիսամյակային
Տարեկան արժեկտրոնի մեծությունը	Տարեկան 7.5 (յոթ ամբողջ հինգ տասնորդական) տոկոս
Շրջանառության ժամկետը	36 ամիս (3 տարի)
Շրջանառության ձևը	բացառապես կարգավորվող շուկայում ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսերի ապահովվածությունը	ապահովված չեն

Կազմակերպության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն օգտագործվելու են Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների կառավարման գործընթացում՝ ապահովելով Կազմակերպության հիմնական գործունեությունը:

1.7. Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը

Տեղաբաշխումը նախատեսվում է իրականացնել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ նաև՝ Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի կանոններով սահմանված կարգով՝ բացառությամբ Շուկա ստեղծողի կողմից ձեռքբերման ենթակա պարտատոմսերի:

Տեղաբաշխման արդյունքում Բորսայում չտեղաբաշխված ծավալը մինչև տեղաբաշխման օրվա ավարտը ձեռք է բերվում Տեղաբաշխողի կողմից կտրման նվազագույն գնով: Հայտերի բավարարման կտրման նվազագույն գինը համապատասխանեցվելու է պարտատոմսերի տեղաբաշխմանը նախորդող 5 աշխատանքային օրերի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի 36 ամսական ժամկետայնությանը համապատասխանող տոկոսադրույքների միջինին 50 բազիսային կետով գերազանցող արժեքին:

Կազմակերպության և Տեղաբաշխողի կողմից սահմանվում է պոտենցիալ Շուկա ստեղծողի կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերի ծավալ թողարկման ընդհանուր ծավալի 10%-ի չափով, որը Շուկա ստեղծողի կողմից ձեռք է բերվում կտրման նվազագույն գնով:

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը սահմանվում է Կազմակերպության գործադիր տնօրենի որոշմամբ, որի մասին տեղեկությունը տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Կազմակերպությունը և Տեղաբաշխողը հրապարակում են իրենց պաշտոնական կայքերում՝ տեղաբաշխման վերաբերյալ հայտարարության մեջ:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրելու նպատակով Թողարկողը հնարավորինս սեղմ ժամկետում դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ: Հարկ է նշել, որ որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրման հայտը հնարավոր է չբավարարվի: Տեղաբաշխման ավարտից հետո երեք ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Թողարկողի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 2 օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ արժեկտրոնի հաշվեգրված գումարները:

1.8. Այլ էական տեղեկություններ

Կազմակերպության Կանոնադրությունը և ֆինանսական հաշվետվությունները հասանելի են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.nmc.am, ինչպես նաև Ազդագրին կից Հավելվածներում:

1.9. Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ցուցանիշի անվանումը	**30.06.2019**[2]	**2018**[3]	**2017**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	999,176	1,955,637	1,495,304
Սեփական կապիտալի միջին մեծություն	35,271,480	30,840,767	25,162,563
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	**2.83%**	**6.34%**	**5.94%**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	999,176	1,955,637	1,495,304
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	64,979,047	61,721,942	57,703,053
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	**1.54%**	**3.17%**	**2.59%**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	999,176	1,955,637	1,495,304
Գործառնական եկամուտ	1,414,260	2,726,157	2,114,579
Զուտ շահույթի մարժա (NPM), %	**70.65%**	**71.74%**	**70.71%**
Գործառնական եկամուտ	1,414,260	2,726,157	2,114,579
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	64,979,047	61,721,942	57,703,053
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	**2.18%**	**4.42%**	**3.66%**
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	64,979,047	61,721,942	57,703,053
Սեփական կապիտալի միջին մեծություն	35,271,480	30,840,767	25,162,563
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	**1.84**	**2.00**	**2.29**
Զուտ տոկոսային եկամուտներ	1,414,260	2,726,157	2,114,579
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	59,893,237	57,000,114	53,279,565

[2] 2019թ. տվյալների համար աղբյուր են հանդիսացել 2019թ. 2-րդ եռամսյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները, որոնք արտաքին աուդիտի կողմից ստուգված չեն:
[3] 2016-2018թթ տվյալների համար աղբյուր են հանդիսացել արտաքին աուդիտի ենթարկված տարեկան հաշվետվությունները:

Զուտ տոկոսային մարժա (NIM), %	**2.36%**	**4.78%**	**3.97%**
Տոկոսային եկամուտներ	2,530,383	5,023,742	4,598,201
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	59,893,237	57,000,114	53,279,565
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	**4.22%**	**8.81%**	**8.63%**
Տոկոսային ծախսեր	1,116,123	2,297,585	2,483,622
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր[4]	28,365,943	30,231,710	30,969,505
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	**3.93%**	**7.60%**	**8.02%**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	999,176	1,955,637	1,495,304
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	2,631,099	2,631,099	2,044,300
Զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով (EPS), դրամ	**379.76**	**743.28**	**731.45**
Տոկոսային եկամուտներ	2,530,383	5,023,742	4,598,201
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	59,893,237	57,000,114	53,279,565
Տոկոսային ծախսեր	1,116,123	2,297,585	2,483,622
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	28,365,943	30,231,710	30,969,505
ՍՊՐԵԴ	**0.29%**	**1.21%**	**0.61%**

[4] 2019թ. տվյալը չի ներառում միջազգային կազմակերպությունների նկատմամբ այլ պարտավորությունները:

ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Ռիսկային գործոններ

Արժեթղթերում՝ ներառյալ պարտատոմսերում, ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, այդ իսկ պատճառով, ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել, որ Ազդագրում ներկայացված ռիսկերից բացի կարող է նաև առաջանալ այլ անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ ռիսկ, և ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Թողարկողի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի իրացվելիության և, հետևաբար, գնի անկմանը:

2.1.1. Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Տվյալները ներկայացվում են առանց Կազմակերպության տեսակետը արտացոլող մեկնաբանությունների՝ խրախուսելով ներդրողների ինքնուրույն

ուսումնասիրությունը: Ներդրողը պետք է գիտակցի, որ Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով: Այնուամենայնիվ, Թողարկողը տեղեկացնում է նաև, որ իր գործունեությամբ նպաստելու է պարտատոմսերի շուկայի զարգացմանը՝ ակտիվություն ցուցաբերելով պարտատոմսերի թողարկման և ֆոնդային բորսայում դրանց ցուցակման շնորհիվ:

Պարտատոմսերին առնչվող հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել հետևյալները.

- *Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը* պարտատոմսերի շուկայի ծավալի և ցածր զարգացվածության պայմաններում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների առաջացումն է: Վերջինս կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռքբերման գինը:

Կազմակերպությունը պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար վերջիններիս նախատեսում է օժտել որոշակի ներդրումային որակներով, այն է՝ շուկա ստեղծողի (Market Maker) միջոցով ապահովել պարտատոմսերի իրացվելիությունը: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը դրանց շրջանառության ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար ֆինանսապես շահավետ գնով:

- *Արտարժութային ռիսկը:* Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Ուստի, այս իմաստով արտարժութային ռիսկ կարող են կրել այն ներդրողները, ովքեր իրենց դրամական միջոցները սույն պարտատոմսերում ներդնելու նպատակով ստիպված կլինեն իրենց ֆինանսական միջոցները փոխարկել այլ արժույթներից ՀՀ դրամի:
- *Տոկոսադրույքի ռիսկը:* Տոկոսադրույքի փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների կորուստներ կրելու վտանգն է, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, այն կարող է ազդել ինչպես պարտատոմսի գնի, եկամտաբերության, այնպես էլ դրանց գրավչության և իրացվելիության վրա:

Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

- *Վարկային/դեֆոլտի ռիսկ:* Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:
- *Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը,* որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Թողարկողի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող ընդհանուր իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

Վերը նշված ռիսկերից բացի Թողարկողը կարող է բախվել նաև այլ ռիսկերի հետ, որոնք Թողարկողը սույն փաստաթղթում նշելու համար էական չի համարել:

Ֆիզիկական անձ ներդրողներին հայտնում ենք, որ
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

2.2. Հիմնական տեղեկատվություն

Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը

Կազմակերպության անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք օգտագործվելու են Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների կառավարումն օպտիմալացնելու համար:

2.3. Տեղեկատվություն առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ

Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերն անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային են, որոնց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պարտատոմսերի ռեեստրը վարվելու է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից:

2.3.1. Պարտատոմսերի պայմանները

Պարտատոմսերի տեսակը	անվանական արժեկտրոնային
Պարտատոմսերի ձևը	Ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի փոխարկելիությունը	Ոչ փոխարկելի
Պարտատոմսերի թողարկման արժույթը	ՀՀ դրամ
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
Պարտատոմսերի քանակը	350,000 (երեք հարյուր հիսուն հազար) հատ

Պարտատոմսերի թողարկման ծավալը	3,500,000,000 (երեք միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Պարտատոմսերի ռեեստրը	Պարտատոմսերի ռեեստրը ենթակա է վարման «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից
Պարտատոմսերի ապահովվածությունը	առաջարկվող պարտատոմսերն ապահովված չեն
Տեղաբաշխման ձևը	երաշխավորված
Տեղաբաշխող	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ, համաձայն Թողարկողի և «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ միջև 09.10.2019թ. կնքված պարտատոմսերի երաշխավորված եղանակով տեղաբաշխման վերաբերյալ պայմանագրի:
Շուկա Ստեղծող	Կազմակերպությունը նախատեսում է օգտվել Շուկա ստեղծողի ծառայություններից: Պոտենցիալ Շուկա ստեղծողի կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերի ծավալը Կազմակերպության և Տեղաբաշխողի կողմից սահմանվում է թողարկման ընդհանուր ծավալի 10%-ի չափով, որը Շուկա ստեղծողի կողմից ձեռք կբերվի հայտերի բավարարման կտրման նվազագույն գնով, որը համապատասխանեցվելու է պարտատոմսի տեղաբաշխմանը նախորդող 5 աշխատանքային օրերի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի 36 ամսական ժամկետայնությանը համապատասխանող տոկոսադրույքների միջինին 50 բազիսային կետով գերազանցող արժեքին:
Պարտատոմսերի տեղաբաշխումը	Պարտատոմսերը տեղաբաշխվում են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի կողմից սահմանված կարգով: Աճուրդը անցկացվում է մեկ անգամ:

Թողարկումը	Համաձայն պարտատոմսերի թողարկման վերաբերյալ Կազմակերպության Խորհրդի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 25-ին ընդունված թիվ 024Լ որոշման
Պարտատոմսերի թողարկման օրը	ՀՀ ԿԲ կողմից պարտատոմսերի ազդագրի գրանցմանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում: Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը սահմանվում է Կազմակերպության գործադիր տնօրենի որոշմամբ:
Պարտատոմսերի շրջանառության ժամկետը	36 (երեսունվեց) ամիս
Արժեկտրոնի տոկոսադրույքը	Ֆիքսված՝ տարեկան 7.5%
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը	Կիսամյակային (2 անգամ օրացուցային տարվա մեջ)
Արժեկտրոնների հաշվարկման օրերը	Տեղաբաշխման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ և 36-րդ ամիսների համապատասխան օրը: Արժեկտրոնի հաշվարկման և վճարման ամսաթվերը համընկնում են: Եթե արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը
Օրերի հաշվարկման պայմանականությունը	փաստացի/փաստացի DCS=Օրերի փաստացի քանակը, D2M2Y2 - D1M1Y1 DCC=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1 DSN=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2 որտեղ՝ D1M1Y1 գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է.

	D2M2Y2 գործարքի կատարման ամսաթիվն է. D3M3Y3 գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:
Արժեկտրոնի կուտակումը	$AI = FV * \frac{C}{f} * \frac{DCS}{DCC}$ որտեղ AI - կուտակված տոկոս, FV - պարտատոմսերի անվանական արժեք, C - արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույք, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=2՝ կիսամյակային վճարումների դեպքում: Արժեկտրոնի կուտակումը սկսում է հաշվարկվել պարտատոմսերի թողարկման օրվանից,
Պարտատոմսերի գինը	Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով $DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{FV}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$ $\tau = \frac{DSN}{DCC}$ որտեղ՝ **DP** - Պարտատոմսի գինն է, **DSN** - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է, **DCC** -գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է, **f** -արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (2 - կիսամյակային վճարումների համար),

	N -հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը **C** - միավոր պարտատոմսի տարեկան արժեկտրոնը **y** - մինչև մարում եկամտաբերություն, **i** – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից, **FV**- պարտատոմսի անվանական արժեք:
Պարտատոմսերի եկամտաբերությունը	Պարտատոմսերի եկամտաբերությունը հաշվարկվում է նախորդ կետում ներկայացված բանաձևի միջոցով
Պարտատոմսերի մարման օրը	Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 36-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսերի մարման կատարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը,
Արժեկտրոնների վճարումը և պարտատոմսերի մարումը	ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով Պարտատոմսերի մարումը և արժեկտրոնների վճարումն իրականացվում է պարտատոմսերի մարման և/կամ արժեկտրոնների վճարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 24:00–ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ցուցակում առկա տեղեկատվության հիման վրա: Կազմակերպությունը մինչև պարտատոմսերի մարման և/կամ արժեկտրոնների վճարման օրվա ժամը 12:00-ը պարտատոմսերի մարումը և/կամ արժեկտրոնների վճարումն իրականացնելու հանձնարարական է տալիս Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ի հաշվի օպերատորին՝ Դեպոզիտարիայում վարվող դրամային հաշվին ապահովելով պարտատոմսերի մարման և/կամ արժեկտրոնների վճարման համար անհրաժեշտ ամբողջ գումարը: Վճարումներն իրականացվում են անկանխիկ

	ձևով՝ Պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի)՝ Պարտատոմսերի ռեեստրում գրանցված ՀՀ տարածքում գործող բանկերում բացված ՀՀ դրամով բանկային հաշիվներին (այսուհետ՝ բանկային հաշիվ): Վճարումները չեն փոխանցվում այն սեփականատերերին (անվանատերերին), որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ցուցակում և Կազմակերպությունը այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում այդ սեփականատերերի վճարումները երեք աշխատանքային օրվա ընթացքում, փոխանցվում են նոտարի դեպոզիտ:
Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում	Պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրում: Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են: Արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) նույնն են:
Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում	Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանա-փակում չի սահմանվում:
Ցուցակումը	Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Կազմակերպությունը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով: Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով

	սահմանված դեպքերի:

2.3.2. Առաջարկվող պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Կազմակերպության սնանկության դեպքում, Կազմակերպության գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ: Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ՝ համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով:

Առաջարկվող պարտատոմսերի դեպքում, սեփականատերերի պահանջները կբավարարվեն Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի ա) և բ) ենթակետերով սահմանված պահանջները բավարարելուց հետո: Կազմակերպության պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից պարտատոմսերից բխող պահանջները ենթակա չեն վերադասակարգման:

2.3.3. Տեղեկություններ պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքների վերաբերյալ

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

✓ ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը,

✓ իրականացնել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող ցանկացած գործառույթ,

✓ թողարկման օրվանից հաշված կիսամյակային պարբերությամբ՝ համապատասխան արժեկտրոնների վճարման օրերին ստանալ արժեկտրոնային եկամուտը: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,

✓ պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը): Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարման գումարի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,

✓ Թողարկողի կողմից Պարտատոմսերի մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով դատական կարգով օգտվել պարտատիրոջ՝ օրենքով վերապահված իրավունքներից:

✓ օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:

✓ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք:

✓ Օրենքով և իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

Օրենքով և իրավական ակտերով սահմանված պարտատոմսերի սեփականատերերի իրավունքների սահմանափակումներ չկան:

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում ունենալ սեփական (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև կատարել պարտատոմսերի ձեռքբերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման նպատակով:

Կազմակերպության պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է «Հայաստանի

կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից՝ ուղղակիորեն կամ վերջինիս հաշվի օպերատորների միջոցով:

ՀՀ օրենսդրությամբ, Թողարկողի կանոնադրությամբ և Թողարկողի անվանական պարտատոմսերի թողարկման մասին վերջինիս խորհրդի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ սահմանված չեն:

2.3.4. Իրավասու մարմնի որոշումը նոր թողարկման մասին

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ անվանական պարտատոմսերը թողարկվելու են համաձայն Կազմակերպության խորհրդի 2019թ. սեպտեմբերի 25-ին «Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին» թիվ 024Լ որոշման, որով սահմանվել է թողարկել և տեղաբաշխել 3,500,000,000 (երեք միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմսեր՝ արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ: Թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը սահմանվել է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ: Միաժամանակ, սահմանվել է, որ տեղաբաշխումը պետք է իրականացվի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով:

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից պարտատոմսերի վաղաժամկետ հետգնում և մարում չի նախատեսվում՝ բացառությամբ կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու հայտի՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ կողմից մերժման դեպքի, որի պարագայում տեղաբաշխումը համարվելու է չեղյալ, և պարտատոմսերի դիմաց վճարված, ինչպես նաև հաշվեգրված արժեկտորնների գումարները հետ են վերադարձվելու ներդրողներին:

Ֆիզիկական անձ ներդրողներին հայտնում ենք, որ
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

2.3.5. Տեղաբաշխված (տեղաբաշխվող) պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը

Պարտատոմսերի հարկումը

Պարտատոմսերից ստացված եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների.

- ✓ Շահութահարկ,
- ✓ Եկամտային հարկ:

Շահութահարկ

Ըստ ՀՀ Հարկային օրենսգրքի՝ շահութահարկ վճարողներ են համարվում՝

1. Ռեզիդենտ կազմակերպությունները, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունը ի դեմս պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության համայնքները՝ ի դեմս և համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված հատուցման հիմնադրամը:
2. Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերը և նոտարները,
3. Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերը (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի),

4. ոչ ռեզիդենտ կազմակերպությունները, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի (մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով) հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 20 (քսան) տոկոս դրույքաչափով:

Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերի (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 0.01 տոկոս դրույքաչափով:

Ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված տոկոսների մասով շահութահարկը հաշվարկվում և պահվում է 10 (տասը) տոկոս դրույքաչափով, իսկ արժեթղթերի օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելաճի մասով՝ 0 (զրո) տոկոս, եթե՝

- եկամուտները վճարվում են առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին,
- եկամուտները վճարվում են մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին, սակայն այդ եկամուտները չեն վերագրվում մշտական հաստատությանը:

Եկամտային հարկ

Եկամտային հարկ վճարող են համարվում՝

1. ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձիք (ռեզիդենտությունը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ),
2. Անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ որպես ֆիզիկական անձինք, (վերջիններս եկամտային հարկ վճարողներ են համարվում միայն անձնական եկամուտների մասով):

Եկամտային հարկով հարկման օբյեկտ է համարվում՝

1. ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների ձեռնարկատիրական եկամուտների,
2. ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը՝ բացառությամբ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեությունից ստացվող եկամուտների:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց վճարված տոկոսների մասով եկամտային հարկը հաշվարկվում և պահվում է 10 տոկոս դրույքաչափով:

Կարևոր ծանուցում

Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ իր կողմից թողարկվող պարտատոմսերում ներդրումներ կատարելիս ներդրողները արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման վերաբերյալ սույն բաժնում ներկայացված տեղեկատվությունը չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և հիմնվեն վերջինիս վրա, ուստի խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման կամ փոփոխության արդյունքում ներդրողների ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1. Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար

Թողարկման ծավալը	3,500,000,000 (երեք միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Քանակը	350,000 (երեք հարյուր հիսուն հազար) հատ
Անվանական արժեքը, արժույթը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ

- Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով՝ Բորսայի կանոններով սահմանված կարգով՝ բացառությամբ Շուկա ստեղծողի կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերի:
- Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին անմիջապես կարող են մասնակցել միայն Բորսայի անդամները, որոնց ցանկը հասանելի է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ պաշտոնական կայքում՝ www.amx.am: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները կարող են աճուրդին մասնակցել (օգտվել առաջարկից) Բորսայի անդամների միջոցով՝ վերջիններիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:
- Բորսայի տարբեր մասնակիցներ կարող են սահմանել աճուրդին մասնակցելու (առաջարկից օգտվելու) տարբեր գործընթացներ, պարտատոմսերի դիմաց վճարումներ կատարելու մեթոդներ և ժամկետներ, արժեթղթերը ստանալու մեթոդներ և ժամկետներ, արժեթղթերի վերաբերյալ քաղվածք ստանալու ձևեր, ներդրողների հայտերի բավարարման արդյունքների մասին իրազեկման կարգեր և ձևեր, ինչպես նաև սահմանել տարբեր սակագներ: Այդ իսկ պատճառով, Կազմակերպությունը չի կարող սպառիչ տեղեկություններ հրապարակել նշված հարցերի վերաբերյալ և հորդորում է Բորսայի անդամ չհանդիսացող պոտենցիալ ներդրողներին ուսումնասիրել Բորսայի անդամների կողմից առաջարկվող

պայմանները իրենց համար լավագույն տարբերակ գտնելու համար:

- Աճուրդն անցկացվում է տեղաբաշխման օրը ժամը 11:00-ից (առաջարկի իրականացման սկիզբ) մինչև ժամը 13:30 (առաջարկի իրականացման ավարտ):
- Պարտատոմսերի թողարկման օրը՝ ՀՀ ԿԲ կողմից պարտատոմսերի ազդագրի գրանցմանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում: Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը սահմանվում է Կազմակերպության գործադիր տնօրենի որոշմամբ:
- Պարտատոմսերի տեղաբաշխման օրը՝ ՀՀ ԿԲ կողմից պարտատոմսերի ազդագրի գրանցմանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում: Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը սահմանվում է Կազմակերպության գործադիր տնօրենի որոշմամբ, որի մասին տեղեկությունը տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Կազմակերպությունը և Տեղաբաշխողը հրապարակում են իրենց պաշտոնական կայքերում՝ տեղաբաշխման վերաբերյալ հայտարարության մեջ: Կազմակերպությունը և Տեղաբաշխողը նշված տեղեկությունը կարող են հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով:
- Կազմակերպության պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին ա) չի կարող ներկայացվել գնման ոչ մրցակցային հայտ, բ) չի կարող ներկայացվել լրիվ բավարարմամբ հայտ:
- Կազմակերպության պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդն իրականացվելու է դրամական միջոցների և պարտատոմսերի նախնական դեպոնացմամբ՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կանոններով սահմանված կարգով:
- Տեղաբաշխման ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակից գործարքներ կարող է կնքել նախապես դեպոնացված դրամական միջոցների սահմաններում, իսկ տեղաբաշխողը՝ նախապես դեպոնացված արժեթղթերի սահմաններում:
- Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում գնորդները կարող են կատարել դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացումներ և ապադեպոնացումներ՝ Բորսայի և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված ընթացակարգերով:

- Գնորդները պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով գնման մրցակցային հայտեր են ներկայացնում տեղաբաշխման համակարգ՝ տեղաբաշխման օրվա ժամը 11:00-ից մինչև 13:30-ը: Գնորդներն իրավունք ունեն հետ կանչել կամ փոփոխել իրենց կողմից ներկայացված հայտերը և նոր հայտեր մուտքագրել մինչև 13:30-ը: Տեղաբաշխողի կողմից աճուրդի անցկացումը, որի ընթացքում տեղի է ունենում արժեթղթերով առքուվաճառքի գործարքների կնքման գործընթացը, տևում է մինչև տեղաբաշխման օրվա ժամը 15:00-ն:
- Գնման մրցակցային հայտով գործարքները կնքվում են այն գներով, որոնք նշված են գնման հայտերում՝ ըստ գների նվազման հաջորդականության: Միևնույն գին ունեցող հայտերը բավարարվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:
- Որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակցի կողմից ներկայացված մրցակցային հայտերում նշված արժեթղթերի ընդհանուր քանակի համար սահմանափակում չկա: Գնորդը կարող է տեսնել միայն իր կողմից տեղաբաշխման համակարգ ներկայացված բոլոր գնման հայտերը:
- Տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացվում է գործարքի կնքման օրվա ընթացքում:
- Տեղաբաշխման ավարտից հետո Բորսան իր կանոններով սահմանված կարգով կազմակերպում է տեղաբաշխման արդյունքների հրապարակումը իր պաշտոնական կայքում: Կազմակերպությունն իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.nmc.am, տեղաբաշխման ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում է աճուրդի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն:
- Թողարկողի պարտատոմսերի դիմաց սեփականության իրավունքը հավաստող քաղվածքները տրամադրվում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հաշվի օպերատորներիի կողմից սահմանված կարգով և ժամկետներում:
- Տեղաբաշխման աճուրդը կարող է հետաձգվել, ընդմիջվել կամ դադարեցվել, ինչպես նաև աճուրդի ընթացքում տեխնիկական ընդմիջում կարող է հայտարարվել Բորսայի

գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ, Բորսայի կանոններով սահմանված ընթացակարգով: Տեղաբաշխումը կարող է չեղյալ կամ չկայացած համարվել Բորսայի կանոններով սահմանված դեպքերում:

2.4.2. Պարտատոմսերի տեղաբաշխման պլանը

Սույն Ազդագրով ներկայացվող առաջարկն ուղղված է ներդրողների բոլոր խմբերին:

Բորսայի անդամ հանդիսացող ներդրողն իր կողմից ներկայացված հայտի բավարարման մասին տեղեկացվում է աճուրդի արդյունքները ամփոփելուց հետո՝ Բորսայի կանոններով սահմանված կարգով: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց հայտերի բավարարման մասին տեղեկանում են Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:

2.4.3. Առաջարկի գինը

Տեղաբաշխման համակարգում գրանցվելուց հետո տեղաբաշխման մասնակիցները տեղաբաշխման նստաշրջանի բացման պահից տեղաբաշխման համակարգ են մուտքագրում պարտատոմսերի գնման հայտերը: Պարտատոմսերի լրիվ գինը տեղաբաշխման առաջին օրվանից սկսած, հաշվարկվում է 2.3 կետում նշված բանաձևի հիման վրա: Ներդրողները աճուրդը կազմակերպողին ներկայացվող հայտում նշում են ձեռք բերվող պարտատոմսերի պահանջվող եկամտաբերությունը/գինը և պարտատոմսերի այն ծավալը, որը ներդրողը պատրաստ է ձեռք բերել հայտում ներկայացված եկամտաբերությամբ/գնով: Հայտերի բավարարման կտրման նվազագույն գինը համապատասխանեցվելու է պարտատոմսերի տեղաբաշխմանը նախորդող 5 աշխատանքային օրերի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող պետական պարտատոմսերի՝ մինչև մարում եկամտաբերության կորի 36 ամսական ժամկետայնությանը համապատասխանող տոկոսադրույքների միջինին 50 բազիսային կետով գերազանցող արժեքին: Կտրման գնից ցածր գնով ներկայացված հայտերը չեն բավարարվելու: Կտրման գնի վերաբերյալ տեղեկատվությունը կներառվի նաև պարտատոմսերի տեղաբաշխման վերաբերյալ հրապարակվող հայտարարության մեջ:

Տեղաբաշխման աճուրդի ընթացքում պարտատոմսեր ձեռք բերելու համար պոտենցիալ ներդրողները կարող են դիմել Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպություններին և մասնակցել աճուրդին՝ վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Բորսայի անդամների ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում (www.amx.am):

Արժեթղթերի հաշիվները բացվում և սպասարկվում են ՀԿԴ հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկը հասանելի է ՀԿԴ պաշտոնական ինտերնետային կայքում (www.cda.am):

Բորսայի անդամ հանդիսացող ներդրողներից տեղաբաշխման աճուրդի ընթացքում ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվում են միջնորդավճարներ Բորսայի Սակագների մասին կանոններով սահմանված չափերով: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց կողմից ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվող միջնորդավճարների մասին կարող են տեղեկանալ Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին:

Տեղաբաշխումը

Սույն Ազդագրով առաջարկվող պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է մասնագիտացված կազմակերպության (անդերռայթերի) մասնակցությամբ:

Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվելու են մասնագիտացված կազմակերպության՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից՝ համաձայն 09 հոկտեմբերի 2019թ. վերջիններիս միջև կնքված Տեղաբաշխման պայմանագրի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, գրանցման համարը՝ 4, հեռ.՝ +(374 10) 59 23 23, ֆաքս՝ +(374 10) 54 78 94, էլ. փոստ՝ araratbank@araratbank.am, պաշտոնական ինտերնետային կայք՝ www.araratbank.am:

Տեղաբաշխումն իրականացվելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ընդ որում՝ 3,150,000,000 (երեք միլիարդ մեկ հարյուր հիսուն

միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով 315,000 (երեք հարյուր տասնհինգ հազար) հատ պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացվելու է ստանդարտ փակ աճուրդի անցկացման միջոցով՝ բացառելով ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտերի ներկայացումը, իսկ մնացած 350,000,000 (երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 35,000 (երեսունհինգ հազար) հատ պարտատոմսերը ձեռք է բերվելու «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ կողմից հայտերի բավարարման կտրման նվազագույն գնով՝ որպես շուկա ստեղծող՝ երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով:

Տեղաբաշխումն իրականացվում է երաշխավորված եղանակով: Տեղաբաշխողի միջնորդավճարը կազմում է տեղաբաշխման ծավալի 0.2%-ը՝ 7,000,000 ՀՀ դրամ:

Տեղաբաշխման աճուրդի ընթացքում պարտատոմսեր ձեռք բերելու համար պոտենցիալ ներդրողները կարող են դիմել Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպություններին և մասնակցել աճուրդին՝ վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Բորսայի անդամների ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.amx.am: Տեղաբաշխումից հետո երկրորդային շուկայում պարտատոմսերի առքուվաճառքի գործարք կնքելու համար ներդրողները պետք է դիմեն կա՛մ ներդրումային ընկերություններին, կա՛մ բրոքերային ծառայություն մատուցող բանկերին:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձինք պետք է ունենան արժեթղթերի հաշիվներ, որոնք բացվում և սպասարկվում են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկը հասանելի է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ (www.cda.am):

Պարտատոմսեր ձեռք բերող անձը, նախքան ներդրում իրականացնելը որևէ բանկում իր անվամբ բացված դրամային բանկային հաշվի վերաբերյալ տվյալները պետք է ներկայացնի «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ին՝ պարտատոմսերում կատարված ներդրումների մարման և արժեկտրոնային եկամուտների

ստացման համար:

2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի նպատակով Թողարկողը հնարավորինս սեղմ ժամկետում դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ: Հարկ է նշել, որ որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի հայտը հնարավոր է չբավարարվի: Տեղաբաշխման ավարտից հետո երեք ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Կազմակերպության խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 2 օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ արժեկտրոնի հաշվեգրված գումարները:

Կազմակերպության՝ 2016 թվականի նոյեմբեր ամսին տեղաբաշխված 16-րդ և 17-րդ թողարկման ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի անվանական արժեկտրոնային պարտատոմսերը գտնվում են ազատ շրջանառության մեջ Հայաստանի ֆոնդային բորսայում՝ ընդգրկված լինելով պարտատոմսերի հիմնական Abond ցուցակում (նախատեսվում է, որ պարտատոմսերը կմնան ազատ շրջանառության մեջ Հայաստանի ֆոնդային բորսայում՝ մինչև իրենց մարման օրը՝ 2019թ նոյեմբերի 9-ը և 2019թ. նոյեմբերի 28-ը):

Կազմակերպության՝ 2018 թվականի փետրվար ամսին տեղաբաշխված 18-րդ թողարկման ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի անվանական արժեկտրոնային պարտատոմսերը գտնվում են ազատ շրջանառության մեջ Հայաստանի ֆոնդային բորսայում՝ ընդգրկված լինելով պարտատոմսերի հիմնական Abond ցուցակում (նախատեսվում է, որ պարտատոմսերը կմնան ազատ շրջանառության մեջ Հայաստանի ֆոնդային բորսայում՝ մինչև իրենց մարման օրը՝ 2021թ. փետրվարի 23-ը):

Թողարկողը պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտելուց հետո կնքելու է

համապատասխան պայմանագիր երկրորդային շուկայում վաճառքի ակտիվացման գործառույթներ իրականացնողի հետ (շուկա ստեղծող)՝ Թողարկողի պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով: Շուկա ստեղծողը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում իրականացնում է պարտատոմսերի առքի և վաճառքի գնանշումներ: Շուկա ստեղծողի պարտավորության հիմնական պայմանները սահմանվում են վերջինիս և Թողարկողի միջև կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրով և «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կանոններով: Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագրի կնքումից հետո ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր պարտատոմսերի սեփականատերերին և անվանատերերին նման պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

2.6. Լրացուցիչ տեղեկություններ

Սույն Բաժնում ներկայացված տեղեկատվության հավաքագրման և մշակման համար որպես խորհրդատու հանդես է եկել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն: Ներկայացված տեղեկատվությունն անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

Կազմակերպությանը և Կազմակերպության կողմից տեղաբաշխված պարտատոմսերին վարկանշող կազմակերպությունների կողմից որևէ վարկանիշ չի շնորհվել:

ԲԱԺԻՆ 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Անկախ աուդիտորները

Կազմակերպության 2009, 2010, 2011, 2012 և 2013 թվականների անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, որի հասցեն է ՀՀ ք. Երևան 0012, Վաղարշյան 8/1, հեռ.՝ (+374) (10) 26-09-64, ինտերնետային կայք՝ http://www.grantthornton.am, կազմակերպության տնօրեն-բաժնետեր՝ Գագիկ Գյուլբուդաղյան: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեշնլի» անդամ:

Կազմակերպության 2014թ. անկախ աուդիտն իրականացրել է «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ն, որի հասցեն է ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 26/1, հեռ.՝ (+374) (10) 56-67-62, ինտերնետային կայք՝ http://www.kpmg.am, կազմակերպության գործադիր տնօրեն՝ Տիգրան Գասպարյան: «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է «Քեյ-Փի-Էմ-Ջի Ինտերնեշնլ» կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ:

Կազմակերպության 2015, 2016, 2017 և 2018 թվականների անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի եզրակացությունները ներկայացված են Ազդագրին կից Հավելվածներում:

Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Կազմակերպության աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

3.2. Ռիսկային գործոններ

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ Կազմակերպության պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է

ուշադիր դիտարկի ներկայացված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և սույն փաստաթղթում տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերը գնելու վերաբերյալ որոշումն ընդունելը: Ներդրողը պետք է գիտակցի, որ նկարագրված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որոնք Կազմակերպությունը կարող է երբևէ կրել: Կազմակերպությունը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք համարել է էական: Ենթադրաբար կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք Կազմակերպությունն այժմ չի համարում էական, կամ որոնք ներկայումս հայտնի չեն նրան, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է հանգեցնել ներդրողի կողմից ներդրված գումարի մասնակի կամ ամբողջական կորստին:

Կազմակերպության կողմից պարտատոմսերի տեղաբաշխմամբ ստանձնած պարտավորությունների մասնակի կամ ամբողջությամբ չկատարելը կարող է տեղի ունենալ միայն Կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացման պարագայում, ինչն իր հերթին կարող է արդյունք լինել ինչպես ներքին, այնպես և արտաքին ռիսկերի դրսևորման: Ըստ էության՝ Կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացման ռիսկը կապված է հիմնականում Կազմակերպության հետ համագործակցող ԳՖՀ-ների ռիսկի հետ (counterparty risk), որի էությունը կայանում է նրանում, որ ԳՖՀ-ն չի կատարում Կազմակերպության նկատմամբ ստանձնած իր վարկային պարտավորությունները: Ներդրողը պետք է գիտակցի, որ Կազմակերպության գործընկերների կողմից ստանձնած պարտավորությունների հնարավոր չկատարման պատճառ կարող են հանդիսանալ բազմաթիվ ռիսկային գործոններ, որոնք անկառավարելի են Կազմակերպության համար:

Կազմակերպությունը ԳՖՀ-ի հետ կապված ռիսկերը կառավարում/զսպում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման և յուրաքանչյուր ԳՖՀ-ի համար առավելագույն սահմանաչափերի սահմանման միջոցով, ինչպես նաև յուրաքանչյուր ԳՖՀ-ի գծով եռամսյակային կտրվածքով իրականացնում է ֆինանսական գործունեության վերլուծություն՝ հնարավոր ռիսկերը վաղ շրջանում բացահայտելու ու համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար: Հաշվի առնելով, որ վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերը հանդիսանում են Կազմակերպության վարկերի ապահովությունը և կարող են վերոնշյալ

հանգամանքների ի հայտ գալու դեպքում անցնել իրեն՝ Կազմակերպությունը որակյալ պորտֆել ունենալու նպատակով այդ վարկերի նկատմամբ սահմանել է որակի նվազագույն ստանդարտներ և այլ չափանիշներ, որոնք հիմնված են միջազգային լավագույն փորձի վրա[5]:

2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության կողմից տրամադրված վարկերը ամբողջությամբ ապահովված են վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերով:

2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունը չունի Վարկային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է 2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության՝ վարկային ռիսկի ենթարկվելու վատագույն տարբերակը՝ առանց ապահովվածությունը հաշվի առնելու: Հաշվեկշռային ակտիվների համար վարկային ռիսկերը հիմնված են հաշվեկշռային զուտ արժեքների վրա:

Հազար ՀՀ դրամ	Համախառն առավելագույն ռիսկի չափ 2019թ. ***հունիսի*** **30**-ի դրությամբ
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**19,258,433** **774,423**
Վարկեր ֆինանսական կազմակերպություններին	**40,571,960**
Վարկեր աշխատակիցներին	**8,084**
Ընդամենը վարկային ռիսկ	**60,612,900**

Արտաքին ռիսկեր. արտաքին ռիսկերին են դասվում նաև տնտեսությունում տեղի ունեցող զարգացումները: ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը և հիփոթեքային շուկայի փոփոխությունները կարող են բացասաբար ազդել Կազմակերպության վարկավորման ծավալների և հետևաբար ֆինանսական արդյունքների վրա: Աշխարհաքաղաքական և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում ևս կարող են առաջ գալ այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն

[5] Բացի այդ՝ եթե վերաֆինանսավորված հիփոթեքային վարկը 90 օրից ավել ժամկետանց է, ապա այն ենթակա է ամբողջությամբ հետ վճարման ԳՖՀ-ի կողմից:

ունենալ երկրի ընդհանուր տնտեսական վիճակի վրա, կարող են բերել տնտեսական ակտիվության և բնակչության եկամուտների նվազման, որն էլ բացասաբար կանդրադառնա ինչպես հիփոթեքային շուկայի, այնպես և Կազմակերպության վարկավորման ծավալների վրա:

Գիտակցելով վերը նշված ռիսկերը, այնուամենայնիվ, Կազմակերպությունը, մշտապես գնահատելով գործունեության միջավայրի փոփոխությունները և դրանցով պայմանավորված մարտահրավերները, պատրաստ է իրականացնել այլընտրանքային ռազմավարություններ՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել իր գործունեության վրա դրանց բացասական ազդեցությունը:

Ներքին ռիսկեր. ներքին ռիսկերից, որոնք առավել էական են Կազմակերպության համար, Կազմակերպությունը կարևորում է գործառնական ռիսկը: Գործառնական ռիսկերը բավական տարաբնույթ են և կարող են պայմանավորված լինել ինչպես տեխնիկական միջոցների խափանմամբ, այնպես և մարդկային գործոններով: Տեխնիկական միջոցների խափանման հետ կապված ռիսկերից Կազմակերպության համար առավել մեծ նշանակություն ունեն տվյալների բազայի ամբողջական պահպանմանը վտանգող ռիսկերը: Այս առումով Կազմակերպությունը իրականացնում է տվյալների բազայի պարբերաբար արխիվացում, որոնց կրկնօրինակները պահվում են ինչպես Կազմակերպության սերվերի և համակարգիչների մեջ, այնպես և արտաքին կրիչների վրա: Ընդ որում, արտաքին կրիչները պահվում են ինչպես Կազմակերպության տարածքում՝ չիրկիզվող պահարանում, այնպես և Կազմակերպության տարածքից դուրս: Մարդկային գործոններով պայմանավորված ռիսկերը նվազեցնելու նպատակով Կազմակերպությունում ներդրված է ներքին հսկողության համակարգ, ինչի տարր են հանդիսանում գործարքների կրկնակի ստուգումը և առնվազն երկու անձի կողմից հաստատումը, Կազմակերպության վերստուգողի և արտաքին աուդիտորի կողմից պարբերաբար իրականացվող ստուգումները և այլն:

Իրացվելիության ռիսկ. մեկ այլ ռիսկ՝ կապված Կազմակերպության հետ, որը պետք է հաշվի առնեն ներդրողները նախքան ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելը,

իրացվելիության ռիսկն է՝ ռիսկ, որ Կազմակերպությունը չի ունենա բավարար իրացվելիություն սահմանված ժամկետներում ստանձնած պարտավորությունների դիմաց վճարում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարումը իրականացվում է համաձայն Կազմակերպության ներքին կարգերի և ընթացակարգերի՝ Ակտիվների և պասիվների կառավարման կոմիտեի միջոցով: Հարկ է նշել, որ մինչ սույն Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրը Կազմակերպության կողմից չվճարումների կամ ուշ վճարումների դեպքեր չեն եղել:

Վերջին շրջանում Կազմակերպության հետ տեղի չեն ունեցել այնպիսի դեպքեր, որոնք ներդրողը կկարևորեր Կազմակերպության իրացվելիության մասին պատկերացում կազմելու տեսանկյունից: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Կազմակերպությունը կառավարում է ակտիվները՝ հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում՝ հաշվի առնելով ինչպես ընդհանուր շուկայի, այնպես էլ Կազմակերպության համար առանձնահատուկ գործոնները: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով Կազմակերպությունը իր միջոցների մի մասը ներդնում է բարձր իրացվելի ակտիվներում, ինչպես նաև հնարավորինս համապատասխանեցնում է ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետները և ծավալները:

2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների տվյալներն ըստ սպասվելիք մարման ժամկետների ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

Հազար ՀՀ դրամ	**30 հունիսի 2019թ.**[6]							
	Ցպահանջ ինչև 1 ամիս	**1-ից 3 ամիս**	**3-ից 12 ամիս**	***Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար***	**1-ից 3 տարի**	**3 տարուց ավելի**	***12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար***	**Ընդամենը**
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ	**3,753,513**			**3,753,513**	-	-	-	**3,753,513**
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,261,820	2,607,381	8,632,553	**14,501,754**	2,362,306	2,394,373	4,756,679	**19,258,433**
Իրական արժ.չափվող ֆին. Ակտիվներ	7,819	-	-	**7,819**	766,604	-	766,604	**774,423**
Վարկեր Ֆինանսական կազմակերպություններին	481,720	746,312	3,071,551	**4,299,583**	11,226,088	25,046,288	36,272,376	**40,571,960**
Աշխատակիցներին տրված վարկեր	-	1,239	4,821	**6,060**	2,024	-	2,024	**8,084**
Ընդամենը	**7,504,872**	**3,354,932**	**11,708,925**	**22,568,729**	**14,357,023**	**27,440,662**	41,797,684	**64,366,413**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Պարտավորություններ ՀՀ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	-	3,723,618	**3,723,618**	4,441,490	6,812,425	11,253,915	**14,977,534**
Պարտավորություններ միջազգ. ֆին. կազմ. նկ.	-	-	2,739,110	**2,739,110**	1,459,639	2,554,367	4,014,006	**6,753,116**
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	86,066	3,549,227	**3,635,293**	3,000,000	-	3,000,000	**6,635,293**
Ընդամենը	**-**	**86,066**	**10,011,955**	**10,098,021**	**8,901,129**	**9,366,792**	18,267,921	**28,365,942**
Զուտ Դիրք	**7,504,872**	**3,268,866**	**1,696,970**	**12,470,707**	**5,455,894**	**18,073,869**	**23,529,763**	**36,000,470**
Կուտակված ճեղքվածք	**7,504,872**	**10,773,738**	**12,470,707**		**17,926,601**	**36,000,470**		

Արտարժութային ռիսկ. կազմակերպությունը կարևորում է նաև արտարժութային ռիսկի զսպումը: Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը

[6] տվյալները վերցված են Կազմակերպության՝ արտաքին աուդիտի կողմից չստուգված 2019թ. միջանկյալ հաշվետվություններից:

կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Արտարժութային ռիսկի զսպման նպատակով Կազմակերպությունը որդեգրել է արտարժութային դիրքը հնարավորինս փակ պահելու քաղաքականություն:

30.06.2019թ. դրությամբ կազմակերպության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Անվանումը	**Ազատ փոխարկելի արժույթ[7] Հազար ՀՀ դրամ**
Ակտիվներ	30.06.2019թ.[8]
Դրամական միջոցներ	160,634
Պահանջներ այլ ֆին. կազմ. նկատմամբ	4,685,326
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆին. արդյունքի միջոցով չափվող ֆին. ակտիվներ	774,423
Ընդամենը ակտիվներ	**5,718,627**
Պարտավորություններ	
Պարտավորություններ միջազգ. ֆին. կազմ. Նկատմամբ	4,750,980
Այլ պարտավորություններ	118,268
Ընդամենը պարտավորություններ	**4,869,248**
Զուտ դիրք 30.06.2019թ. դրությամբ	**849,379**

Տոկոսադրույքի ռիսկ. տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Կազմակերպության

[7] Ազատ փոխարկելի արժույթը ներկայացնում է ԱՄՆ դոլարը և ԵՎՐՈ-ն
[8] Արտաքին աուդիտ չանցած

ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Կազմակերպությունն իրավունք ունի յուրաքանչյուր երեք տարին մեկ վերանայել իր կողմից բանկերին և վարկային կազմակերպություններին տրամադրած վարկերի տոկոսադրույքները:

3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին

3.3.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ *«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն:*
ռուսերեն՝ *«Национальная Ипотечная Компания» Рефинансирующая Кредитная Организация Закрытое Акционерное Общество.*
անգլերեն՝ «National Mortgage Company» Refinancing Credit Organization Closed Joint Stock Company.

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ
ռուսերեն՝ «Национальная Ипотечная Компания» РКО ЗАО
անգլերեն՝ «National Mortgage Company» RCO CJSC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 22, 7/1:
Կազմակերպության պետական գրանցման համարն է՝ 26:

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 22, 7/1,

Կապի միջոցները՝

հեռ. 56-07-41, 56-09-71
ֆաքս 56-07-41

էլ. Փոստ՝ info@nmc.am,
ինտերնետային կայք՝ www.nmc.am:

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Կազմակերպությունը հիմնադրվել է ՀՀ-ում, Կազմակերպության միակ հիմնադիր՝ ՀՀ ԿԲ (հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6) կողմից, ՀՀ ԿԲ նախագահի 2009թ. հունիսի 3-ի թիվ 1/705Ա որոշմամբ և գրանցվել և լիցենզավորվել է ՀՀ ԿԲ խորհրդի 2009 թվականի հունիսի 16-ի թիվ 182Ա որոշմամբ (վարկային գործունեության լիցենզիա թիվ 26, գրանցման համար՝ թիվ 26):

Կազմակերպությունը փաստացի գործունեությունն սկսել է իրականացնել հիմնադրման պահից՝ 2009թ. հունիսից, երբ համաշխարհային ֆինանսական ճգնաժամը ՀՀ-ում հասավ իր կիզակետին և գրեթե բոլոր բանկերն և վարկային կազմակեպությունները դադարեցրել էին հիփոթեքային վարկավորումը, կամ էապես խստացրել էին վարկավորման պայմանները՝ դրանով իսկ նվազեցնելով վարկերի հասանելիությունը հասարակության լայն շերտերին:

Կազմակերպության ստեղծումը երկու հիմնական նպատակ էր հետապնդում՝ կարճաժամկետ հատվածում ակտիվացնել ՀՀ հիփոթեքային շուկան, երկարաժամկետ հատվածում զարգացնել ՀՀ հիփոթեքային վարկավորման շուկան՝ բնակարանային վարկերի ֆինանսավորման արդյունավետ ենթակառուցվածքի ստեղծման միջոցով:

Կազմակերպությունը, գործունեությունը սկսելուց ի վեր իր բնույթով հանդիսանում է ՀՀ հիփոթեքային շուկայում վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն: Մասնավորապես, Կազմակերպությունը, որպես իրացվելության երկրորդային շուկայի օպերատոր, ֆիզիկական անձանց չի տրամադրում հիփոթեքային վարկեր, այլ համագործակցում է ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հետ (այսուհետ՝ Գործընկեր ֆինանսական հաստատություն կամ ԳՖՀ)՝ վերաֆինանսավորելով վերջիններիս կողմից տրամադրված այն հիփոթեքային վարկերը, որոնք համապատասխանում են Կազմակերպության կողմից սահմանված չափանիշներին և պահանջներին: Ներկայումս Կազմակերպությունը համագործակցում է 23

ԳՖՀ՝ 16 առևտրային բանկերի և 7 վարկային կազմակերպությունների հետ (Կազմակերպության հետ համագործակցող ԳՖՀ-ների ցանկը ներկայացված է սույն փաստաթղթի 3.4 Բիզնեսի նկարագիրը բաժնում): Կազմակերպության հիմնական նպատակն է մատչելի պայմաններով երկարաժամկետ միջոցներ տրամադրելով ԳՖՀ-ներին՝ ՀՀ հիփոթեքային շուկայում ստեղծել այնպիսի պայմաններ, որ հիփոթեքային վարկերը հասանելի/մատչելի դառնան այն ընտանիքների համար, որոնք ունեն միջին եկամուտներ և բնակարանային պայմանների բարելավման անհրաժեշտություն:

Ի սկզբանե լինելով վերաֆինանսավորող կազմակերպություն՝ Կազմակերպությունը ստեղծվել է որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն, քանի որ ստեղծման պահին (2009թ. հունիս) ՀՀ ԿԲ կողմից հաստատված «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 14-ով սահմանված վարկային կազմակերպությունների տիպերի (խմբերի) մեջ չկար «Վերաֆինանսավորող վարկային կազմակերպություն» տեսակը և Կազմակերպության գործունեության համար առավել համապատասխան խումբը հանդիսանում էր «Ունիվերսալ Վարկային Կազմակերպությունը»: 2011 թվականի օգոստոսի 30-ի ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 225-Ն որոշմամբ «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 14-ում կատարված փոփոխությունների արդյունքում ավելացել է վարկային կազմակերպությունների նոր տիպ, այն է՝ վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություններ /ՎՎԿ/: Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո (2011 թվականի հոկտեմբերի 1), Կազմակերոպությունը սահմանված կարգով փոխել է տիպը և ներկայումս հանդիսանում է վերաֆինսավորում իրականացնող վարկային կազմակերպություն:

Կազմակերպությունը մասնաճյուղեր և ներկայացուցչություններ չունի:

3.3.2. Ներդրումները

Իր գործունեության սկզբից ի վեր Կազմակերպությունը էական ներդրումներ չի

կատարել և մոտ ապագայում չի նախատեսում իրականացնել:

3.4. Բիզնեսի նկարագիրը

3.4.1. Հիմնական գործունեությունը

Կազմակերպությունը ներկայումս համագործակցում է 23 գործընկեր ֆինանսական հաստատությունների հետ և վերաֆինանսավորում է վերջիններիս կողմից տրամադրվող հիփոթեքային վարկերի հետևյալ տեսակները՝

- պատրաստի բնակելի անշարժ գույքի ձեռքբերման վարկեր,
- բազմաբնակարան բնակելի շենքում կառուցման փուլում գտնվող բնակարանի ձեռքբերման վարկեր,
- բնակելի անշարժ գույքի վերանորոգման վարկեր,
- բնակելի անշարժ գույքի կառուցապատման վարկեր,

Կազմակերպության գործընկեր հաստատությունների ցանկը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

N	ԳՖՀ-Ի ԱՆՎԱՆՈՒՄԸ
	ԳՖՀ (բանկեր)
1	«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
2	«Ամերիաբանկ» ՓԲԸ
3	«ԱյԴի» ՓԲԸ
4	«Արարատբանկ» ԲԲԸ
5	«Արդշինբանկ» ՓԲԸ
6	«Արմսվիսբանկ» ՓԲԸ
7	«Արցախբանկ» ՓԲԸ
8	«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ
9	«Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
10	«Ինեկոբանկ» ՓԲԸ
11	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
12	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

13	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
14	«Յունիբանկ» ՓԲԸ
15	«Էվոկաբանկ» ՓԲԸ
16	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
	ԳՖՀ (վարկային կազմակերպություններ)
17	«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ
18	«Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ
19	«Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ
20	«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ
21	«ՄԱՅԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՍՊԸ
22 **23**	«Ջի Ընդ Էյ» ՈՒՎԿ ՍՊԸ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ

Վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերի բարձր որակը ապահովելու, ինչպես նաև նպատակ ունենալով ստանդարտացնել հիփոթեքային վարկավորման գործընթացը՝ Կազմակերպությունը սահմանել է Հիփոթեքային վարկերի որակի նվազագույն ստանդարտներ (այսուհետ՝ նաև ՈՆՍ), որոնց պետք է բավարարեն վերաֆինանսավորման ներկայացվող բոլոր վարկերը: ՈՆՍ սահմանված չափանիշները վերաբերում են ինչպես հնարավոր վարկառուի վարկունակության գնահատմանը, այնպես և անհրաժեշտ փաստաթղթերին և հիփոթեքային վարկավորման մնացած ասպեկտներին:

2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության գործընկեր ֆինանսական հաստատություններին տրամադրված վարկերը կազմել են 40,571,960 հազար ՀՀ դրամ:

Կազմակերպության կողմից տրամադրված վարկերի միջոցով մինչ 2019թ. հունիսի 30-ն ընդհանուր առմամբ վերաֆինանսավորվել է 10,966 հատ վարկ 94.3 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր պայմանագրային գումարով: Վերաֆինանսավորված վարկերի միջին գումարը կազմել է 8.6 մլն ՀՀ դրամ, միջին կշռված տոկոսադրույքը՝ 12.3%, միջին կշռված ժամկետը՝ 13.8 տարի:

Ստորև ներկայացված է Կազմակերպության կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի դինամիկան.



Կազմակերպության կողմից վերաֆինանսավորված վարկերն առ 30.06.2019թ.՝ ըստ նպատակի, եղել են՝

Նպատակ	Քանակ (հատ)	Ծավալ (մլն ՀՀ դրամ)
Ձեռքբերում	7,394	78,040.3
Վերանորոգում	3,361	13,171
Կառուցապատում	211	3,135.5

Ստորև ներկայացվում է Կազամկերպության վարկային պորտֆելի աճի դինամիկան (ներառված են նաև աշխատակիսներին տրամադրված վարկերն ու հաշվեգրված տոկոսները).



Ըստ աշխարհագրական բաշխվածության վերաֆինանսավորված վարկերի մեծ մասը տրամադրված է եղել Երևան քաղաքում: 2009թ-ից մինչ 2019թ. հունիսի 30-ը վարկերի բաշխվածությունը Երևանում և ՀՀ մարզերում ունեցել է հետևյալ տեսքը՝

	Երևան		Մարզեր	
	Գումար (մլն ՀՀ դրամ)	Քանակ (հատ)	Գումար (մլն ՀՀ դրամ)	Քանակ (հատ)
30.06.2019թ.	74,016	7,058	20,331	3,908
31.12.2018թ.	69,977	6,770	19,006	3,702
31.12.2017թ.	61,450	6,089	16,615	3,282
31.12.2016թ.	52,274	5,186	14,336	2,805
31.12.2015թ.	42,320	4,281	11,952	2,315
31.12.2014թ.	32,584	3,373	9,700	1,860
31.12.2013թ.	25,663	2,683	7,927	1,541
31.12.2012թ.	18,924	2,049	6,068	1,231
31.12.2011թ.	12,932	1,417	4,181	903
31.12.2010թ.	7,419	817	2,322	494
31.12.2009թ.	1,968	230	438	106

Կազմակերպության միջոցներով վերաֆինանսավորած վարկերի ծավալում 30.06.19թ. դրությամբ մարզերում տրամադրված վարկերին բաժին է ընկել 22%:

Կազմակերպության վերաֆինանսավորած վարկերի տվյալներով առավել ակտիվ են Երևանին հարակից մարզերը (Արարատ, Արմավիր, Կոտայք) և Սյունիքի ու Շիրակի մարզերը:

Չնայած վերաֆինանսավորված վարկերի գծով վարկերի ռիսկը կրում են ԳՖՀ-ները, Կազմակերպությունն ընթացիկ հսկողություն է իրականացնում վերոնշյալ վարկերի նկատմամբ:

Կազմակերպությունը վերաֆինանսավորումն իրականացնում է ինչպես սեփական կապիտալի, այնպես և ներգրավված միջոցների հաշվին: Իր առաքելության շրջանակներում Կազմակերպությունը մասնակցում է ՀՀ հիփոթեքային շուկայում իրականացվող տարբեր ծրագրերին: Կազմակերպությունը Ֆրանսիական Զարգացման Գործակալության և Եվրոմիության հետ համատեղ իրականացնում է բնակարանային պայմանների և էներգաարդյունավետության բարելավմանն ուղղված ծրագիր: Նշված ծրագրով վարկերի գծով թիրախային խումբ են հանդիսանում ցածր և միջին եկամտի մակարդակ ունեցող թվով 3,000 տնային տնտեսություններ: Ծրագիրն ուղղված է խթանելու ցածր և միջին եկամտի մակարդակի ունեցող բնակչության բնակարանների վերանորոգումը, հատկապես՝ մարզերում (Ծրագրին չի մասնակցում միայն Երևան քաղաքի «Կենտրոն» վարչական շրջանը), ինչպես նաև խթանելու ֆինանսական հաստատությունների կողմից էներգաարդյունավետ վերանորոգում ֆինանսավորելու նպատակով փոքրածավալ և առավել երկարաժամկետ վարկերի տրամադրումը:

Գերմանական KfW բանկի ֆինանսավորմամբ Կազմակերպության կողմից իրականացվող «Բնակարանային ֆինանսավորում, 4-րդ փուլ» ծրագրի ներքո տրամադրվում են բնակարանային էներգաարդյունավետության վարկեր (ծրագրով սահմանված էներգաարդյունավետության (ԷԱ) չափանիշներին բավարարող բնակելի տան կառուցապատման, ձեռքբերման և վերանորոգման վարկեր), ինչպես նաև Մարզային վարկեր (վարկատեսակից օգտվելու համար անհրաժեշտ է, որպեսզի կառուցվող, ձեռք բերվող կամ վերանորոգվող բնակելի անշարժ գույքը գտնվի ՀՀ մարզերում):

Բացի ֆինանսական միջոցների ուղղակի տրամադրումից, Կազմակերպությունն իր գործընկեր ֆինանսական հաստատություններին տրամադրում է խորհրդատվություն ինչպես ընդհանուր հիփոթեքային վարկավորման, այնպես և Կազմակերպության կողմից սահմանված պահանջների և Կազմակերպության կողմից ներդրվող նոր վարկատեսակների վերաբերյալ:

Կազմակերպությունը մշտապես կատարելագործում է իր գործունեությունը՝

համապատասխանեցնելով շուկայի պահանջներին, և աշխատանքներ է տանում առաջարկվող պրոդուկտների տեսականին ընդլայնելու ուղղությամբ:

3.4.2. Հիմնական շուկաները

Հանդիսանալով հիփոթեքային վարկերը վերաֆինանսավորող հաստատություն՝ Կազմակերպության գործունեությունը մեծապես կապված է ՀՀ հիփոթեքային շուկայում տիրող իրավիճակից և հետագա զարգացումներից: Այդ իսկ պատճառով, ՀՀ հիփոթեքային շուկան մշտապես ուսումնասիրվում է Կազմակերպության կողմից:

Ստորև ներկայացված է ՀՀ հիփոթեքային շուկան բնութագրող տվյալների դինամիկան՝ սկսած 2014թ-ից[9].



Գործունեության ողջ ընթացքում Կազմակերպությունը մեծապես նպաստել է ՀՀ հիփոթեքային վարկավորման շուկայի կայացմանը և զարգացմանը:

Ակնկալվում է, որ հիփոթեքային վարկավորման ծավալների աճի հետ մեկտեղ Կազմակերպության վարկավորման ծավալները մոտ ապագայում նույնպես կաճեն: Նման

[9] աղբյուրը՝ www.cba.am

եզրահանգման օգտին է վկայում նաև այն փաստը, որ Կազմակերպությունը ըստ էության հանդիսանում է ՀՀ հիփոթեքային շուկայում միակ վերաֆինանսավորում իրականացնող կազմակերպությունը[10]: Չնայած մրցակիցների բացակայությանը, Կազմակերպությունը բավականին ճկուն քաղաքականություն է վարում հիփոթեքային շուկայում՝ գործելով շուկայի պահանջներին համահունչ և արագ արձագանքելով դրանց զարգացման վերջին միտումներին:

Ստորև ներկայացված է կազմակերպության դիրքը վարկային կազմակերպությունների շուկայում (որպես 2019թ. շահույթի ցուցանիշներ դիտարկվել են միայն 2-րդ եռամսյակի ոչ կուտակային տվյալները)՝

	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ. II եռ.
ԱԿՏԻՎՆԵՐ	2	1	1	1	2	2	2	2	2	3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ	3	1	2	3	3	2	2	2	2	2
ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	1	1	2	2	2	2	2	2	2	2
ՇԱՀՈՒՅԹ	6	4	4	4	3	3	4	3	5	5
ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	2	1	1	1	1	1	1	2	3	3
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	4	3	3	2	2	2	1	1	1	2

3.5. Կազմակերպության կառուցվածքը

Կազմակերպությունը որևէ խմբի անդամ չէ:

Ստորև ներկայացվում է Կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը:

[10] Պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորում իրականացնում է նաև «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ն, որը սակայն չի դիտարկվում որպես Կազմակերպության մրցակից, հաշվի առնելով պետական ծրագրերի սոցիալական ուղղվածությունը և առանձնահատկությունները (պետական ծրագրերի շահառուները չեն ընդգրկվում Կազմակերպության թիրախային խմբի մեջ):


Ընդհանուր ժողով
Վերստուգող
Խորհուրդ
Գործադիր տնօրեն
Ռիսկերի կառավարման բլոկ
Գործառնական բլոկ
Ֆինանսական բլոկ
Վաճառական բլոկ
Գործառնական տնօրեն/ Գործադիր տնօրենի տեղակալ
Ֆինանսական տնօրեն/ Գործադիր տնօրենի տեղակալ
Ռիսկերի կառավարման բաժնի պետ
Վարկերի վերլուծության բաժնի պետ
Գլխավոր հաշվապահ
Ռիսկերի կառավարիչ
Մոնիտորինգի մասնագետ
Մոնիտորինգի մասնագետ
Վարկերի վերլուծաբան/ առաջատար
Վարկերի վերլուծաբան/ առաջատար
Վարկերի վերլուծաբան
Վարկերի վերլուծաբան
Վարկերի վերլուծաբան
Գլխավոր հաշվապահի տեղակալ
Հաշվետար
Ակտիվների և պարտավորությունների կառավարիչ
Գործավար/HR/PR մենեջեր
SS մասնագետ
Իրավախորհրդատու
Տնտեսվար
Վարորդ

3.6. Կազմակերպության հիմնական միջոցները

Կազմակերպությունն իր բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք է բերել հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որոնց արժեքի հանրագումարը չի գերազանցում Կազմակերպության ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 10%-ը: 30.06.2019թ. դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 15.9 մլն ՀՀ դրամ, իսկ ոչ նյութական ակտիվներինը՝ 9.2 մլն ՀՀ դրամ[11]: Կազմակերպությունը փաստացի գործունեությունը ծավալում է ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 22-7/1 հասցեում գտնվող գրասենյակային տարածքում, որը վերցված է երկարաժամկետ վարձակալությամբ:

Կազմակերպության կողմից իր հիմնական միջոցների օգտագործումը սահմանափակող հանգամանքներ չկան:

3.7. Կազմակերպության զարգացման վերջին միտումները

Կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի մեծությունների և լևերիջի գործակցի դինամիկան 2016-2019թթ. ընթացքում ներկայացված է ստորև.



[11] Տվյալների աղբյուր են հանդիսացել Կազմակերպության՝ 2-րդ եռամսյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները, որոնք արտաքին աուդիտի կողմից ստուգված չեն

Կազմակերպության կողմից վերաֆինանսավորված վարկերի ծավալների ու քանակի դինամիկան 2009-2019թթ. ընթացքում ներկայացված են ստորև.



Կազմակերպության գործունեության ցուցանիշների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար պոտենցիալ ներդրողները կարող են ծանոթանալ Կազմակերպության տարեկան և եռամսյակային հաշվետվություններին, որոնք տեղադրված են Կազմակերպության պաշտոնական կայքի (www.nmc.am) «Հաշվետվություններ» մասում:

3.8. Կազմակերպության շահույթի կանխատեսումը

Հաջորդող երկու տարիների համար Կազմակերպության հետագա զարգացման խնդիրները և նպատակները հետևյալն են.

- Կազմակերպությունը կշարունակի իր հիմնական գործունեությունը՝ գործընկեր ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրված բնակարանային հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորումը:

• Կանխատեսվող ժամանակաշրջանում Կազմակերպությունը չի նախատեսում կապիտալի ներգրավում կամ նվազեցում: Կազմակերպության կապիտալը կհամալրվի չբաշխված շահույթի հաշվին՝ շահութաբաժինների բաշխումը չի նախատեսվում:

• Ըստ կանխատեսումների, Կազմակերպության զուտ տոկոսային եկամուտը 2019-2021թթ–ի ընթացքում կաճի *միջին տարեկան* 6%-ով՝ 2019թ.-ի վերջին կազմելով 3.4 մլրդ, 2020թ.-ի վերջին՝ 3.6 մլրդ, իսկ 2021թ.-ի վերջին՝ 3.8 մլրդ ՀՀ դրամ:

• Ըստ կանխատեսումների, Կազմակերպության կողմից իր գործընկերներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2019-2021թթ–ի ընթացքում կաճի տարեկան մոտ 4%-ով՝ 2019թ.-ի վերջին կազմելով 42 մլրդ, 2020թ.-ի վերջին՝ 44 մլրդ, իսկ 2021թ.-ի վերջին՝ 46 մլրդ ՀՀ դրամ: Այդ ժամանակահատվածում (հաջորդող 2.5 տարիների ընթացքում) Կազմակերպությունը նախատեսում է վերաֆինանսավորել գործընկեր բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից բնակչությանը տրամադրվելիք ավելի քան 3,000 վարկ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում:

• Իր գործունեության շրջանակներում Կազմակերպությունը շարունակաբար վերլուծում և վերանայում է իր գործընկերների ցանկը, ինչպես նաև իրականացննում է բնակչության իրազեկման միջոցառումները՝ շեշտադրելով ՀՀ մարզերը:

• Իր գործունեության ֆինանսավորման նպատակով Կազմակերպությունը կշարունակի օգտագործել ներկայում իրեն հասանելի ծրագրային և սեփական միջոցները, ինչպես նաև կապիտալի շուկայից և բանկային համակարգից ստացված միջոցները:

• Միևնույն ժամանակ, Կազմակերպությունը նախատեսում է քայլեր ձեռնարկել արտաքին այլ աղբյուրներից (միջազգային զարգացման գործակալություններից) դրամական միջոցների ներգրավման ուղղությամբ՝ նպատակային ծրագրեր իրականացնելու նպատակով:

• Իրացվելիության կառավարման շրջանակներում Կազմակերպությունը կիրականացնի ներդրումային գործունեություն ՀՀ պետական և կորպորատիվ պարտատոմսերում, ինչը շարունակական բնույթ է կրելու:

• Ինչպես և հիմնադրման օրվանից, Կազմակերպության ռազմավարությունն ուղղված է լինելու խելամիտ և կառավարելի ռիսկայնության և շահութաբերության համակցությանը:

Առաջիկա տարիների համար Կազմակերպության կանխատեսվող եկամուտների, ծախսերի և շահույթի հաշվարկները ներկայացված են ստորև.

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

հ/հ	**ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ (հազ. ՀՀ դրամ)**			
	Անվանում	**31/12/19**	**31/12/20**	**31/12/21**
1	Տոկոսային եկամուտ	*5,348,124*	*5,468,148*	*5,563,735*
2	Տոկոսային ծախսեր	*-1,972,531*	*-1,845,827*	*-1,754,223*
3	**Զուտ տոկոսային եկամուտ**	**3,375,593**	**3,622,321**	**3,809,512**
4	**Արժեզրկումից կորուստներ**	**-50,000**	**-50,000**	**-50,000**
5	Զուտ ոչ տոկոսային եկամուտներ/ծախսեր	*-300,000*	*-300,000*	*-300,000*
6	**Շահույթ/վնաս մինչև հարկումը**	**3,025,593**	**3,272,321**	**3,459,512**
7	Շահութահարկ	*-605,119*	*-654,464*	*-691,902*
8	**Շահույթ/վնաս հարկումից հետո**	**2,420,474**	**2,617,857**	**2,767,609**
9	Այլ համապարփակ եկամուտ	*1,817*	*182*	*18*
10	**Ընդամենը ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ**	**2,422,291**	**2,618,039**	**2,767,627**

Կազմակերպության կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու Կազմակերպության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ գործոնների վրա.

- Կազմակերպության կողմից ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների ծավալներ և տոկոսներ,
- Կազմակերպության համար ընդունելի ռիսկերի սահմանաչափերի և ռիսկայնության մակարդակի սահմանում,
- Կազմակերպության տեխնիկատեղեկատվական հագեցվածության ապահովման ուղղությամբ կատարվող ծախսեր,

- Կազմակերպության անձնակազմի վարձատրության, վերապատրաստման, ինչպես նաև Կազմակերպության պահպանման հետ կապված ծախսեր:

Կազմակերպության կառավարման մարմինները հնարավորություն չունեն ազդելու Կազմակերպության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ գործոնների վրա.

- Հիմնական շուկայական տոկոսադրույքների վարքագծի փոփոխություններ,
- Տնտեսության զարգացման բացասական միտումներ և դրանից բխող հիփոթեքային վարկերի առաջարկի և պահանջարկի նվազում,
- Անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Կազմակերպության բնականոն գործունեությունը:

3.9. Կազմակերպության կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

3.9.1. Կառավարման մարմինների կառուցվածքը, իրավասություններն ու պարտականությունները

Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները.

- Բաժնետերերի ընդհանուր ժողովը (միակ բաժնետերը, այսուհետ նաև՝ ժողով),
- Խորհուրդը,
- Գործադիր տնօրենը:

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.



Կազմակերպության կանոնադրությամբ Կազմակերպության կառավարման մարմիններին վերապահված են հետևյալ իրավասությունները.

1. <u>Բաժնետերերի ընդհանուր ժողովը (ժողով)</u>

Ժողովը Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Ժողովի բացառիկ իրավասություններն են՝

- կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
- Կազմակերպության վերակազմակերպումը.
- Կազմակերպության լուծարումը.
- ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.
- խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.
- հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.
- բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

- բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Կազմակերպության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.
- Կազմակերպությունում խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում Հիփոթեքային ընկերության գործադիր տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
- Կազմակերպության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Կազմակերպության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Կազմակերպության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Կազմակերպության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.
- Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
- Կազմակերպության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների եւ վնասների հաշվի, շահույթների եւ վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.
- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան Կազմակերպության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Կազմակերպության այլ արժեթղթերի Կազմակերպության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.
- ժողովի վարման կարգը.
- հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

- Կազմակերպության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.
- բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.
- գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.
- գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում.
- Կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում.
- Կազմակերպության խորհրդի նախագահի և խորհրդի անդամների աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.
- դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.
- դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.
- հոլդինգային ընկերությունների, առեւտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը.
- հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը.
- օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Ժողովի բացառիկ իրավասությունները չեն կարող փոխանցվել Կազմակերպության խորհրդին, գործադիր տնօրենին կամ այլ անձանց:

2. ***<u>Կազմակերպության խորհուրդը</u>***

Խորհուրդն իրականացնում է Կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

Խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

- Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
- տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.
- ժողովների օրակարգի հաստատումը.
- ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը օրենքին համապատասխան.
- Կազմակերպության կանոնադրության 7.7 կետի "բ", "ժգ", "ժզ", "ժէ-ի" ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.
- պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.
- գույքի շուկայական արժեքի որոշումը՝ օրենքով սահմանված կարգով.
- օրենքով նախատեսված դեպքերում Կազմակերպության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.
- Կազմակերպության գործադիր տնօրենի նշանակումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, նրա վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների հաստատումը, ինչպես նաև վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.
- Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

- Կազմակերպության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
- Կազմակերպության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
- Կազմակերպության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
- Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.
- Կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.
- այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.
- Կազմակերպության գույքի օտարման եւ ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում.
- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.
- Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
- ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.
- Կազմակերպության հաստիքացուցակի հաստատումը.
- օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

Խորհրդի բացառիկ իրավասությունները չեն կարող փոխանցվել Կազմակերպության գործադիր տնօրենին կամ այլ անձանց:

3. ***<u>Կազմակերպության գործադիր տնօրենը</u>***

Կազմակերպության գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է գործադիր տնօրենը: Կազմակերպությունում տնօրինություն չի ստեղծվում: Գործադիր տնօրենը նշանակվում է Ժողովի կողմից:

Կազմակերպության գործադիր տնօրենը.

- տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից.
- ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
- գործում է առանց լիազորագրի.
- տալիս է լիազորագրեր.
- սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
- բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
- խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
- իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
- սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին.
- աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
- իրականացնում է Կազմակերպության կառավարման հետ կապված այն բոլոր լիազորությունները, որոնք վերապահված չեն Կազմակերպության ժողովին կամ խորհրդին, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

- իրականացնում է օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Գործադիր տնօրենի բացակայությամբ գործադիր տնօրենի պարտականություններն իրականացնում է գործադիր տնօրենի տեղակալը:

4. <u>Կազմակերպության գլխավոր հաշվապահը</u>

Կազմակերպության գլխավոր հաշվապահն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

Կազմակերպության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Կազմակերպության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Կազմակերպության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներին Կազմակերպության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.10. Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունը

Կազմակերպությունում աուդիտի կոմիտե չի ստեղծվել:

Կազմակերպությունում ներդրված կորպորատիվ կառավարման սկզբունքները համապատասխանում են «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքով», «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին:

Ընդհանուր ժողով՝ ՀՀ ԿԲ, ի դեմս ՀՀ ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանի:

Խորհուրդ[12]՝

N	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Բնակության վայր	Իրավասություններն ու պարտականությունները	Կազմակերպության գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը
1	Արթուր Ջավադյան	Կազմակերպության խորհրդի նախագահ	ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 43շ. Բն. 24	Կազմակերպում է խորհրդի աշխատանքները, գումարում է խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք, կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը, նախագահում է ժողովներում:	ՀՀ ԿԲ նախագահ
2	Արմենակ Դարբինյան	Կազմակերպության խորհրդի անդամ	ՀՀ, ք. Երևան, Ա.Տիգրանյան նրբ., տուն 7	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:	ՀՀ ԿԲ խորհրդի անդամ

[12] Սույն Ազդագրում ներկայացված անձանց անձնական տվյալները ներկայացված են այդ անձանց համաձայնությամբ:

3	Անդրանիկ Գրիգորյան	Կազմակերպության խորհրդի անդամ	ՀՀ, ք.Աբովյան, 4 մ/շրջան,31 շենք, 14 բն.	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:	ՀՀ ԿԲ ֆինանսական համակարգի կայունության և զարգացման վարչության պետ

Գործադիր տնօրեն՝

Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Բնակության վայր	Իրավասություններն ու պարտականությունները	Կազմակերպության գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը
Էդմոնդ Վարդումյան	Գործադիր տնօրեն	ՀՀ ք. Երևան, Լյուքսեմբուրգի 11շ., բն. 11	Իրականացնում է Կազմակերպության ընթացիկ ղեկավարումը:	Դասավանդում է Երևանի պետական համալսարանում:

Կազմակերպության և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև սույն փաստաթղթի ներկայացման պահի դրությամբ շահերի բախման դեպքեր և հիմքեր չկան:

3.11. Հսկող անձինք

Կազմակերպության հսկող անձինք են հանդիսանում՝

- ՀՀ ԿԲ (հասցե՝ ՀՀ ք. Երևան, Վ. Սարգսյան 6), որպես Կազմակերպության միակ հիմնադիր,
- Գերմանական KfW Entwicklungsbank բանկը (հասցե՝ Palmengarten str. 5-9 60325 Frankfurt, Germany), որպես Կազմակերպության խոշոր վարկատու,
- Գերմանահայկական հիմնադրամ Ծրագրի կառավարման գրասենյակը (Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, Էրեբունի պլազա 4-րդ հարկ 407 սենյակ), որպես գերմանական KfW Entwicklungsbank բանկից ներգրաված վարկային միջոցների օգտագործման վերահսկողությունն ու վարչարարությունն իրականացնող մարմին
- Ֆրանսիական Զարգացման Գործակալությունը (L'Agence Française de Développement) (հասցե՝ 5, rue Roland Barthes– 75598 Paris Cedex 12, France)՝ որպես Կազմակերպության խոշոր վարկատու:

3.12. Տեղեկատվություն Կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

3.12.1 Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Կազմակերպության 2016թ.-2018թ. ֆինանսական հաշվետվությունները և անկախ աուդիտորական եզրակացությունները, ինչպես նաև 2019թ. միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են կից Հավելված 2-ում, ինչպես նաև հասանելի են Կազմակերպության ինտերնետային կայքի (www.nmc.am) Հաշվետվություններ բաժնում:

3.12.2 Կազմակերպության ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2019թ. հունիսի 30-ից մինչև ՀՀ ԿԲ–ի կողմից Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Կազմակերպության ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

3.12.3 Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Սույն փաստաթղթի պատրաստմանը նախորդող 12 ամիսների ընթացքում Կազմակերպության ներգրավվածությամբ դատական, արբիտրաժային և վարչական վարույթներ չեն կիրառվել:

3.13. Լրացուցիչ տեղեկատվություն

Կազմակերպության կանոնադրական կապիտալը

Կազմակերպության կանոնադրական կապիտալը հիմնադրման պահից մինչև 2010թ. դեկտեմբեր ամիսը կազմել է 5.0 մլրդ ՀՀ դրամ, որը բաժանված է եղել 500,000 (հինգ հարյուր հազար) հասարակ (սովորական) բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: 2010թ. դեկտեմբերին և 2011 թվականի մարտին Կազմակերպության ընդհանուր ժողովի (միակ բաժնետիրոջ) որոշումներով լրացուցիչ թողարկվել և տեղաբաշխվել են համապատասխանաբար 50,000 (հիսուն հազար) և 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Երկու դեպքում էլ լրացուցիչ բաժնետոմսերը ամբողջությամբ ձեռք է բերել Կազմակերպության միակ բաժնետեր՝ ՀՀ ԿԲ-ն: 2011թ. հուլիս ամսին Կազմակերպության 800,000 հատ հասարակ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով բաժնետոմսերը փոխարկվել են 800,000 հատ հասարակ 10,225 ՀՀ դրամ անվանական բաժնետոմսերի: Փոխարկման պատճառ է հանդիսացել այն, որ Կազմակերպության բաժնետերերի տարեկան ժողովի որոշմամբ Կազմակերպության 2010թ. շահույթից 180,000,000 ՀՀ դրամ ուղղվել է կանոնադրական կապիտալի համալրմանը: 2012

թվականի հուլիսին Կազմակերպության ընդհանուր ժողովի (միակ բաժնետիրոջ) որոշումով լրացուցիչ թողարկվել և տեղաբաշխվել են 100,000 (մեկ հարյուր հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմս, յուրաքանչյուրը 10,225 ՀՀ դրամ անվանական արժեքով: 2014թ. դեկտեմբերին, 2015թ. փետրվարին և դեկտեմբերին, 2016թ. հունվարին և դեկտեմբերին, ինչպես նաև 2017թ. նոյեմբերին թողարկվել է համապատասխանաբար 97,800 (իննսունյոթ հազար ութ հարյուր), 195,600 (մեկ հարյուր իննսունհինգ հազար վեց հարյուր), 68,500 (վաթսունութ հազար հինգ հարյուր), 195,600 (մեկ հարյուր իննսունհինգ հազար վեց հարյուր), 391,200 (երեք հարյուր իննսունմեկ հազար երկու հարյուր) և 195,600 (մեկ հարյուր իննսունհինգ հազար վեց հարյուր) հատ լրացուցիչ հասարակ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10,225 ՀՀ դրամ անվանական արժեքով: 2018 թվականին Կազմակերպությունն ավելացրել է բաժնետիրական կապիտալը ևս 6,000,020 հազար ՀՀ դրամով, իսկ 2019թ. ընթացքում՝ մինչ 30.06.2019թ., բաժնետիրական կապիտալի ավելացում տեղի չի ունեցել:

2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմել է 26,902,988 հազ. դրամ: Համաձայն Կազմակերպության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 2,631,099 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,225 դրամ անվանական արժեքով:

3.14. Էական պայմանագրեր

Կազմակերպությունը 2011 թվականի հունիսի 24-ին ՀՀ ԿԲ-ի հետ կնքել է վարկային պայմանագիր «Հայաստանում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում – երրորդ փուլ» վարկային ծրագրի շրջանակներում, որի համաձայն Կազմակերպությանը հասանելի են դարձել գերմանական KfW Entwicklungsbank բանկից ներգրաված վարկային միջոցները 20 մլն Եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով, իսկ 2016թ. մարտի 31-ին ստորագրել է եռակողմ վարկային պայմանագիր ՀՀ Կենտրոնական Բանկի և Գերմանիայի Դաշնության KfW զարգացման Բանկի հետ «Հայաստանի բնակարանային

ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում 4-րդ փուլ» ծրագրի շրջանակներում՝ ընդհանուր 20 մլն Եվրո գումարի չափով:

2013թ. դեկտեմբերի 17-ին Կազմակերպությունը 13.7 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր է կնքել Ֆրանսիական Զարգացման Գործակալության հետ բնակարանային միկրո էներգոարդյունավետության վարկավորումը ֆինանսավորելու նպատակով: Ծրագրի շրջանակներում Կազմակերպությունը 2014թ. սեպտեմբերից սկսել է բնակարանային միկրովարկավորման վերաֆինանանսավորումը: Վարկային պայմանագիրը գործում է 12 տարի ժամկետով:

2017թ. հունիս ամսին Կազմակերպությունը կնքել է 2 մլրդ. ՀՀ դրամի վարկային պայմանագիր՝ Սևծովյան առևտրի և զարգացման – Black Sea Trade & Development Bank (BSTDB) բանկի հետ՝ գործընկեր ֆինանսական կազմակերպությունների ֆինանսավորման նպատակով:

3.15. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն

Սույն փաստաթղթում պարտատոմսերի թողարկման հիմնական պայմանների և դրանց տնտեսական հիմնավորվածության հետ կապված որպես խորհրդատու հանդես է եկել «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ն: Այլ անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն ներկայացվող Ազդագրում չի օգտագործվել:

3.16. Այլ տեղեկատվություն

Կազմակերպության կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.nmc.am հասցեով:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի

03/06/2009 թիվ 1/705 Ա որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

16/06/2009թ

Փոփոխված է բաժնետերերի ընդհանուր ժողովի (միակ բաժնետիրոջ)

15/07/2009 թիվ 6 Լ որոշմամբ
26/08/2009 թիվ 15 Լ որոշմամբ
19/10/2010 թիվ 16 Լ որոշմամբ
10/12/2010 թիվ 20 Լ որոշմամբ
16/02/2011 թիվ 04 Լ որոշմամբ
04/03/2011 թիվ 08 Լ որոշմամբ
22/06/2011 թիվ 12 Լ որոշմամբ
07/10/2011 թիվ 14 Լ որոշմամբ
31/10/2011 թիվ 16 Լ որոշմամբ
13/07/2012 թիվ 06 Լ որոշմամբ
17/11/2014 թիվ 004 Լ որոշմամբ
20/01/2015 թիվ 002 Լ որոշմամբ
20/01/2016 թիվ 002 Լ որոշմամբ
19/12/2016 թիվ 007 Լ որոշմամբ
10/11/2017 թիվ 006 Լ որոշմամբ
21/12/2017 թիվ 007 Լ որոշմամբ
07/11/2018 թիվ 005 Լ որոշմամբ

Փոփոխված է բաժնետերերի ընդհանուր ժողովի (միակ բաժնետիրոջ) 20/12/2018 թիվ 007 Լ որոշմամբ

Վարկային կազմակերպության (վարկային կազմակերպության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) պետական գրանցման համարը՝ 26

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝
Արթուր Ջավադյան
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Digitally signed by Arthur Javadyan
Date: 2018.12.27 17:12:31 AMT
Reason: Գրանցված է 26.12.18թ.

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝
Արթուր Ջավադյան
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության

Edmond Vardumyan

Digitally signed by Edmond Vardumyan
Date: 2018.12.25 14:40:34 +04'00'

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

1.1. “Ազգային Հիփոթեքային Ընկերություն” վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (ստորև՝ Հիփոթեքային ընկերություն) իրավաբանական անձ է, որը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա և համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այլ իրավական ակտերի և սույն Կանոնադրության՝ իրավունք ունի իրականացնել վարկային կազմակերպության գործունեություն:

1.2. Հիփոթեքային ընկերությունը հիմնադրվել է փակ բաժնետիրական ընկերության կազմակերպական-իրավական ձևով՝ Հիփոթեքային ընկերության միակ հիմնադիր հանդիսացող Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (հասցե՝ Վազգեն Սարգսյան 6, 0010, Երևան, ՀՀ) նախագահի 2009թ. հունիսի 3-ի թիվ 1/705 Ա որոշմամբ: Հիփոթեքային ընկերությունը կազմավորվել է և գործունեություն է իրականացնում “Վարկային կազմակերպությունների մասին” և “Բաժնետիրական ընկերությունների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան:

1.3. Հիփոթեքային ընկերության պաշտոնական լրիվ ֆիրմային անվանումն է.

հայերեն՝ “Ազգային Հիփոթեքային ընկերություն” վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

անգլերեն՝ “National Mortgage Company” Refinancing Credit Organisation Closed Joint Stock Company

ռուսերեն՝ “Национальная Ипотечная Компания” Рефинансирующая кредитная организация Закрытое Акционерное Обшество

Հիփոթեքային ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է.

հայերեն՝ “Ազգային Հիփոթեքային ընկերություն” ՎՎԿ ՓԲԸ

անգլերեն՝ “National Mortgage Company” RCO CJSC

ռուսերեն՝ “Национальная Ипотечная Компания” РКО ЗАО

1.4. Հիփոթեքային ընկերության իրավաբանական հասցեն է.

Հանրապետության փողոց 22 շենք, 7/1 տարածք, ք. Երևան, 0010, Հայաստանի Հանրապետություն

1.5. Հիփոթեքային ընկերությունը ունի իր ֆիրմային անվանումով, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք: Վերջինս պարունակում է Հիփոթեքային ընկերության ֆիրմային անվանումն հայերեն և անգլերեն լեզուներով:

1.6. Հիփոթեքային ընկերությունը հիմնադրված է անորոշ ժամկետով:

1.7. Հիփոթեքային ընկերությունը, որպես սեփականություն, ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք և պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, իրավունք ունի իր անունից ձեռք բերել և

իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ստանձնել պարտավորություններ և դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:

1.8. Հիփոթեքային ընկերությունը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, իսկ բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Հիփոթեքային ընկերության պարտավորությունների համար: Հիփոթեքային ընկերության պարտավորությունների համար նրա բաժնետերերը պատասխանատվություն են կրում իրենց պատկանող բաժնետոմսերի անվանական արժեքի սահմաններում:

Գլուխ 2. Հիփոթեքային ընկերության գործառնությունները

2.1 Հիփոթեքային ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը՝

1) ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ.

2) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.

3) տրամադրել երաշխիքներ.

4) իր անունից թողարկել և տեղաբաշխել՝

ա. առանց ապահովման պարտատոմսեր՝ Հիփոթեքային ընկերության կանոնադրական կապիտալը չգերազանցող գումարի չափով,

բ. երրորդ անձանց կողմից տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր, որոնց առնվազն 30%-ը պետք է ապահովված լինի միջազգային կազմակերպությունների, ըստ Ստանդարտ և Փուրզ, Ֆիթչ կամ Մուդիզ վարկանշային գործակալությունների տրամադրած վարկանիշների՝ ԱԱԱ (Ааа)-ից ԲԲԲ-(Baa3) վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարությունների, կենտրոնական բանկերի կամ այլ կազմակերպությունների կողմից.

5) իր անունից թողարկել ճանապարհային չեկեր, իրականացնել այդ չեկերի առուվաճառք, թողարկել վարկային քարտեր, իրականացնել այդ քարտերի սպասարկումը.

6) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական).

7) իրականացնել ապահովագրական գործակալի գործունեություն.

8) գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ.

9) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).

10) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

11) մատուցել ֆինանսական խորհրդատվություն.

12) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն.

13) Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

2.2 Հիփոթեքային ընկերությունը ‘Վարկային կազմակերպությունների մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով:

2.3 (Կանոնադրության 2.3 կետն ուժը կորցրած է ճանաչվել Հիփոթեքային ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի (միակ բաժնետիրոջ) 2011 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 16 L որոշմամբ):

2.4 Հիփոթեքային ընկերությունը հրապարակային առաջարկի միջոցով ծառայություններ չի մատուցում ֆիզիկական անձանց:

Գլուխ 3. Հիփոթեքային ընկերության կանոնադրական կապիտալը

3.1. Հիփոթեքային ընկերության հայտարարված կանոնադրական կապիտալը կազմում է 26,902,987,275 (քսանվեց միլիարդ ինը հարյուր երկու միլիոն ինը հարյուր ութսունյոթ հազար երկու հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ:

3.2. Հիփոթեքային ընկերության կանոնադրական կապիտալը բաժանված է 2,631,099 (երկու միլիոն վեց հարյուր երեսունմեկ հազար իննսունինը) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 10,225 (տասը հազար երկու հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ անվանական արժեքով: Բաժնետոմսերը լրիվ վճարված են և ձեռք են բերվել Հիփոթեքային ընկերության միակ բաժնետեր Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից:

3.3. Հիփոթեքային ընկերության հայտարարված կանոնադրական կապիտալը համալրվում է բացառապես ՀՀ դրամով:

3.4. Հիփոթեքային ընկերությունը իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը:

3.5. Հիփոթեքային ընկերության կանոնադրական կապիտալը կարող է նվազեցվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

Գլուխ 4. Հիփոթեքային ընկերության բաժնետոմսերը, բաժնետերերի իրավունքները և պարտականությունները

4.1. Հիփոթեքային ընկերությունը կարող է լրացուցիչ թողարկել հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

4.2. Հիփոթեքային ընկերությունը արտոնյալ բաժնետոմսեր չի թողարկելու:

4.3. Հիփոթեքային ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

4.4. Հիփոթեքային ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը օրենքի և սույն Կանոնադրության համաձայն իրավունք ունի՝

ա) մասնակցել Հիփոթեքային ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ժողովներում հանդես գալ առաջարկություններով և քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

բ) մասնակցել Հիփոթեքային ընկերության կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ՝ Հիփոթեքային ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.

դ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Հիփոթեքային ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

ե) ստանալ Հիփոթեքային ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին.

զ) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

է) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ը) Հիփոթեքային ընկերության լուծարման դեպքում ստանալ ընկերության գույքի իր հասանելիք մասը.

թ) իրականացնել ՀՀ օրենքներով և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4.5. Հիփոթեքային ընկերության յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալու Հիփոթեքային ընկերության վերջին տարեկան հաշվետվության և վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացության պատճենները:

4.6. Հիփոթեքային ընկերության յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին և օրենքով սահմանված այլ փաստաթղթերին, ինչպես նաև անվճար ստանալ այդ փաստաթղթերի պատճենները բաժնետիրոջ գրավոր դիմումի հիման վրա՝ դիմումը Հիփոթեքային ընկերություն ներկայացնելու պահից հինգ օրվա ընթացքում:

4.6. Հիփոթեքային ընկերությունն իրավունք ունի համախմբել (կոնսոլիդացնել) տեղաբաշխված բաժնետոմսերը, որի արդյունքում Հիփոթեքային ընկերության երկու կամ ավելի բաժնետոմսերը փոխարկվում են նույն տեսակի (դասի) մեկ նոր բաժնետոմսի:

4.7. Հիփոթեքային ընկերությունն իրավունք ունի բաժանել տեղաբաշխված բաժնետոմսերը, որի արդյունքում Հիփոթեքային ընկերության տեղաբաշխած մեկ բաժնետոմսը փոխարկվում է նույն տեսակի (դասի) երկու կամ ավելի բաժնետոմսերի:

4.8. Հիփոթեքային ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվում է ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի կողմից:

Գլուխ 5. Նախապատվության իրավունքը

5.1. Բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխման դեպքում Հիփոթեքային ընկերության բաժնետերերը օգտվում են կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասին համամասնորեն տեղաբաշխվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքից, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

5.2. Բաժնետոմսերի տեղաբաշխումն սկսվելու օրվանից առնվազն 30 օր առաջ Հիփոթեքային ընկերության բաժնետերերը գրավոր ծանուցվում են նախապատվության իրավունքի՝ իրենց կողմից իրականացման հնարավորության մասին: Ծանուցումը պետք է պարունակի օրենքով սահմանված տեղեկություններ:

5.3. Բաժնետերն իրավունք ունի իրականացնել իր նախապատվության իրավունքը ամբողջ ծավալով կամ մասնակիորեն՝ բաժնետոմսերի ձեռքբերման մասին Հիփոթեքային ընկերությանը գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է պարունակի օրենքով սահմանված տեղեկություններ: Ընդ որում, ծանուցումը պետք է ներկայացվի բաժնետոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվանից ոչ ուշ քան մեկ օր առաջ:

5.4. Եթե Հիփոթեքային ընկերության որևէ բաժնետեր օտարում է իր բաժնետոմսերը, ապա Հիփոթեքային ընկերության մյուս բաժնետերերը օգտվում են վաճառվող բաժնետոմսերը իրենց բաժնեմասին համամասնորեն ձեռք բերելու նախապատվության իրավունքից՝ այդ բաժնետոմսերի իրացման մասին գրավոր ծանուցվելու պահից 60 օրացուցային օրվա ընթացքում: Եթե բաժնետիրոջ կողմից վաճառվող բաժնետոմսերը՝ գնելու առաջարկի պահից 60 օրացուցային օրվա ընթացքում ձեռք չեն բերվել Հիփոթեքային ընկերության բաժնետերերի կողմից, ապա Հիփոթեքային ընկերությունն իրավունք ունի ձեռք բերել այդ բաժնետոմսերը: Հիփոթեքային ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում վաճառվող բաժնետոմսերի սեփականատերը կարող է առաջարկել դրանք երրորդ անձանց՝ իր

կողմից սահմանված պայմաններով (սակայն ոչ ավելի բարենպաստ պայմաններով, քան սահմանված են եղել բաժնետերերի համար):

Գլուխ 6. Հիփոթեքային ընկերության կառավարման մարմինները

6.1 Հիփոթեքային ընկերության կառավարման մարմիններն են՝

6.1.1 Բաժնետերերի ընդհանուր ժողովը (միակ բաժնետերը, այսուհետ նաև՝ ժողով).

6.1.2 Խորհուրդը.

6.1.3 Գործադիր տնօրենը:

Գլուխ 7. Բաժնետերերի ընդհանուր ժողովը

7.1. Հիփոթեքային ընկերության կառավարման բարձրագույն մարմինը նրա Բաժնետերերի ընդհանուր ժողովն է:

7.2. Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

7.3. Անհետաձգելի հարցերի քննարկման համար կարող է գումարվել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով: Արտահերթ ընդհանուր ժողովը կարող է անցկացվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով:

Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է օրենքի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ: Քվեաթերթիկները ուղարկվում են բաժնետերերին էլեկտրոնային կամ փոստային եղանակով, որը նաև համարվում է ընդհանուր ժողովի մասին ծանուցում:

Հեռակա քվեարկությամբ անցկացվող ընդհանուր ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Հիփոթեքային ընկերության՝ ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները տրամադրվում են բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Հիփոթեքային ընկերության կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ: Բաժնետերերը լրացված քվեաթերթիկները ուղարկում են Հիփոթեքային ընկերության էլեկտրոնային կամ փոստային հասցեով:

7.4. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստում, որի ժամանակ ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա քվեարկությամբ անցկացված նիստ չի համարվում:

Հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում անցկացվող ընդհանուր ժողովի վերաբերյալ ծանուցումն իրականացվում է սույն կանոնադրության 7.11. կետով սահմանված կարգով և ժամկետներում:

7.5. Բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Հիփոթեքային ընկերության բաժնետերերը.

բ) Հիփոթեքային ընկերության գործադիր տնօրենը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

գ) Հիփոթեքային ընկերության վերստուգիչ հանձնաժողովի ղեկավարը և անդամները կամ վերստուգողը՝ որպես դիտորդ.

դ) Հիփոթեքային ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունը առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում).

ե) օրենքով նախատեսված այլ անձինք:

7.6. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Հիփոթեքային ընկերության մասնակիցների ցուցակը կազմվում է գործադիր տնօրենի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Հիփոթեքային ընկերության մասնակիցների ռեեստրի տվյալների հիման վրա: Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Հիփոթեքային ընկերության մասնակիցների ցուցակը ծանոթացման համար տրամադրվում է Հիփոթեքային ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Հիփոթեքային ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են ընկերության բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին: Հիփոթեքային ընկերության բաժնետիրոջ պահանջով Հիփոթեքային ընկերությունը պարտավոր է նաև նրան տրամադրել տեղեկանք՝ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում նրա ընդգրկման մասին:

7.7. Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.

ա) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Հիփոթեքային ընկերության վերակազմակերպումը.

գ) Հիփոթեքային ընկերության լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

ը) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Հիփոթեքային ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Հիփոթեքային ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

թ) Հիփոթեքային ընկերությունում խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում Հիփոթեքային ընկերության գործադիր տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ժ) Հիփոթեքային ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Հիփոթեքային ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Հիփոթեքային ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Հիփոթեքային ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

ժա) Հիփոթեքային ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժբ) Հիփոթեքային ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների եւ վնասների հաշվի, շահույթների եւ վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

ժգ) ‘Բաժնետիրական ընկերությունների մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան Հիփոթեքային ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Հիփոթեքային ընկերության այլ արժեթղթերի Հիփոթեքային ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժդ) ժողովի վարման կարգը.

ժե) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժզ) Հիփոթեքային ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժէ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

ժը) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ ‘Բաժնետիրական ընկերությունների մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.

ժթ) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ ‘Բաժնետիրական ընկերությունների մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում.

ի) Հիփոթեքային ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ ‘Բաժնետիրական ընկերությունների մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում.

իա) Հիփոթեքային ընկերության խորհրդի նախագահի և խորհրդի անդամների աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.

իբ) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.

իգ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.

իդ) հոլդինգային ընկերությունների, առեւտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը.

իե) հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը.

իզ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

7.8. Սույն կանոնադրության 7.7-րդ կետում նշված լիազորությունները պատկանում են Հիփոթեքային ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:

7.9. Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Հիփոթեքային ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

7.10. Բաժնետերերի ընդհանուր ժողովում որոշումներն ընդունվում են քվեարկելու իրավունք ունեցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

7.11. Բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը՝ էլեկտրոնային և/կամ փոստային եղանակով՝ պետք է ուղարկվի ընդհանուր ժողովից առնվազն յոթ օր առաջ: Արտահերթ ընդհանուր ժողովի գումարման համար բաժնետերերի ծանուցման առավել կարճ ժամկետ կարող է սահմանվել, եթե այդ մասին բաժնետերերի միջև համաձայնություն է կայացվել:

7.12. Ձայնի իրավունք տվող բաժնետոոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատերն իրավունք ունի առաջարկություններ ներկայացնել տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ: Բաժնետերերի առաջարկած հարցերն ընդգրկվում են ընդհանուր ժողովի օրակարգում: Ընդհանուր ժողովը պարտավոր չէ քննարկել հարցեր, որոնք օրակարգում ընդգրկված չեն:

7.13. Քվեարկությունը Բաժնետերերի ընդհանուր ժողովում իրականացվում է “ձայնի իրավունք տվող մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն” սկզբունքով:

7.14. Հիփոթեքային ընկերության բաժնետերերը Բաժնետերերի ընդհանուր ժողովում մասնակցելու իրենց իրավունքը կարող են իրականացնել անձամբ կամ գրավոր ձևով լիազորված ներկայացուցչի միջոցով: Բաժնետերերը կարող են լիազորություն տալ նաև այլ բաժնետերերին՝ ընդհանուր ժողովում իրենց անունից հանդես գալու համար:

7.15. Բաժնետերերի ընդհանուր ժողովներն արձանագրվում են: Ժողովի արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ 2 օրինակով, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

7.16 Եթե Հիփոթեքային ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր է հանդիսանում միայն մեկ անձ, ապա ժողովի որոշումները կարող են ընդունվել այդ անձի գրավոր որոշմամբ:

Գլուխ 8. Հիփոթեքային ընկերության խորհուրդը

8.1 Խորհուրդն իրականացնում է Հիփոթեքային ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

8.2 Հիփոթեքային ընկերությունը վարում է խորհրդի անդամների ռեեստր, որը բաց է Հիփոթեքային ընկերության բաժնետերերի ծանոթացման համար և խորհրդի անդամների մասին պարունակում է օրենքով սահմանված տվյալները:

8.3 Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Հիփոթեքային ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

բ) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

գ) ժողովների օրակարգի հաստատումը.

դ) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը օրենքին համապատասխան.

ե) սույն կանոնադրության 7.7 կետի "բ", "ժգ", "ժզ", "ժէ-ի" ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.

զ) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.

է) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ օրենքով սահմանված կարգով.

ը) օրենքով նախատեսված դեպքերում Հիփոթեքային ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

թ) Հիփոթեքային ընկերության գործադիր տնօրենի նշանակումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, նրա վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների հաստատումը, ինչպես նաև վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

ժ) Հիփոթեքային ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

ժա) Հիփոթեքային ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

ժբ) Հիփոթեքային ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

ժգ) Հիփոթեքային ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժդ) Հիփոթեքային ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ժե) Հիփոթեքային ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

ժզ) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

ժէ) Հիփոթեքային ընկերության գույքի օտարման եւ ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ ‘Բաժնետիրական ընկերությունների մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում.

ժը) ‘Բաժնետիրական ընկերությունների մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.

ժթ) Հիփոթեքային ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

ի) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

իա) Հիփոթեքային ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

իբ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

8.4. Խորհրդի անդամներն ընտրվում (նշանակվում) են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:

8.5 Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: Ժողովը կարող է որոշում ընդունել խորհրդի ցանկացած

անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

8.6 Խորհուրդը բաղկացած է երեք անդամից: Խորհրդի անդամներին, որպես իրենց պարտականությունների (գործառույթների) իրականացման դիմաց պարգևավճար (փոխհատուցում), տրվում է ամսական վարձատրություն, որի չափն ու վճարման կարգը սահմանվում են Հիփոթեքային ընկերության խորհրդի կանոնակարգով: Ընդ որում, խորհրդի այն անդամների համար, որոնք չեն հանդիսանում Հիփոթեքային ընկերության միակ բաժնետիրոջ ղեկավար կամ աշխատակից, սահմանվում է վարձատրության ավելի մեծ չափ:

8.7 Խորհրդի նախագահին ընտրում (նշանակում) ժողովը (միակ բաժնետերը): Ժողովը (միակ բաժնետերը) կարող է ցանկացած ժամանակ վերընտրել (վերանշանակել) նախագահին կամ ընտրել (նշանակել) նոր նախագահ:

8.8 Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.

բ) գումարում է խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք.

գ) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

դ) նախագահում է ժողովներում:

8.9 Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

8.10 Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Հիփոթեքային ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Հիփոթեքային ընկերության աուդիտն իրականացնող անձի, Հիփոթեքային ընկերության գործադիր տնօրենի պահանջով: Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է սույն կանոնադրությամբ և ժողովի հաստատած՝ խորհրդի կանոնակարգով: Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) ընդունել որոշումներ:

8.11 Խորհրդի նիստն իրավազոր է եթե ներկա են անդամներից առնվազն երկուսը:

8.12 Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե օրենքով, սույն կանոնադրությամբ կամ ժողովի հաստատած խորհրդի կանոնակարգով այլ բան նախատեսված չէ:

8.13 Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

8.14 Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում:

Գլուխ 9. Հիփոթեքային ընկերության գործադիր տնօրենը

9.1. Հիփոթեքային ընկերության գործունեության ընթացիկ ղեկավարումը իրականացնում է գործադիր տնօրենը: Հիփոթեքային ընկերությունում տնօրինություն չի ստեղծվում: Գործադիր տնօրենը նշանակվում է խորհրդի կողմից: Հիփոթեքային ընկերության մյուս ղեկավարները նշանակվում են գործադիր տնօրենի կողմից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

9.2. Գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում բոլոր այն հարցերը, որոնք օրենքով կամ սույն կանոնադրությամբ չեն հանդիսանում բաժնետերերի ընդհանուր ժողովի, վերստուգիչ հանձնաժողովի կամ վերստուգողի կամ գլխավոր հաշվապահի իրավասությունը:

9.3. Գործադիր տնօրենը՝

ա) տնօրինում է Հիփոթեքային ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Հիփոթեքային ընկերության անունից.

բ) ներկայացնում է Հիփոթեքային ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

գ) գործում է առանց լիազորագրի.

դ) տալիս է լիազորագրեր.

ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

զ) բանկերում բացում է Հիփոթեքային ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

է) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիփոթեքային ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Հիփոթեքային ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հիփոթեքային ընկերության աշխատակիցներին.

ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

ժա) իրականացնում է Հիփոթեքային ընկերության կառավարման հետ կապված այն բոլոր լիազորությունները, որոնք վերապահված չեն Հիփոթեքային ընկերության ժողովին կամ խորհրդին, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

ժբ) իրականացնում է օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

9.4. Գործադիր տնօրենի բացակայությամբ գործադիր տնօրենի պարտականություններն իրականացնում է գործադիր տնօրենի տեղակալը:

Գլուխ 10. Հիփոթեքային ընկերության վերստուգիչ հանձնաժողովը կամ վերստուգողը

10.1. Հիփոթեքային ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ժողովն ընտրում է Հիփոթեքային ընկերության վերստուգիչ հանձնաժողով (վերստուգող): Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) հետևում է Հիփոթեքային ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Հիփոթեքային ընկերության փաստաթղթերի, համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու սույն Կանոնադրությանը:

10.2. Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) իր գործունեության ընթացքում ղեկավարվում է սույն Կանոնադրությամբ, ինչպես նաև ժողովի կողմից հաստատված վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) կանոնակարգով:

10.3. Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) իրականացնում է Հիփոթեքային ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Հիփոթեքային ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ժողովի որոշմամբ, ինչպես նաև Հիփոթեքային ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

10.4. Վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով նրան պետք է ներկայացվեն Հիփոթեքային ընկերության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերն ու բացատրությունները:

10.5. Վերստուգիչ հանձնաժողովի անդամներին (վերստուգողին) ընտրում է ժողովը՝ 3 տարի ժամկետով: Վերստուգիչ հանձնաժողովի անդամների (վերստուգողի) վարձատրության և (կամ) ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են ժողովի որոշմամբ: Վերստուգիչ հանձնաժողովի անդամ (վերստուգող) կարող է լինել Հիփոթեքային ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ:

10.6. Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) հաշվետու է ժողովին: Օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներ հայտնաբերելու դեպքում Վերստուգիչ հանձնաժողովի ղեկավարը կամ վերստուգողը ժողովին է ներկայացնում հաշվետվություն՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

Գլուխ 11. Հիփոթեքային ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

11.1. Հիփոթեքային ընկերությունը կարող է Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս հիմնել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.2. Հիփոթեքային ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները չունեն իրավաբանական անձի կարգավիճակ և գործում են Հիփոթեքային ընկերության անունից՝ վերջինիս կողմից տրված լիազորությունների սահմաններում և հաստատված կանոնադրության հիման վրա:

Գլուխ 12. Ֆինանսական դրույթներ

12.1. Հիփոթեքային ընկերության հաշվապահական հաշվառումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության:

12.2. Հիփոթեքային ընկերության ֆինանսական տարին համընկնում է օրացուցային տարվա հետ:

12.3. Հիփոթեքային ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից նշանակված անկախ աուդիտորական կազմակերպությունը:

12.4. Հիփոթեքային ընկերությունը ստեղծում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահուստային հիմնադրամներ:

12.5. Հիփոթեքային ընկերության զուտ շահույթը կարող է օգտագործվել շահութաբաժինների վճարման, Հիփոթեքային ընկերության գործունեության և պահուստային հիմնադրամին կատարվող մասհանումների նպատակով:

12.6. Հիփոթեքային ընկերության գլխավոր հաշվապահն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

Հիփոթեքային ընկերության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Հիփոթեքային ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Հիփոթեքային ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներին Հիփոթեքային ընկերության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գլուխ 13. Հիփոթեքային ընկերության լուծարումը

13.1. Հիփոթեքային ընկերությունը կարող է լուծարվել օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

13.2. Հիփոթեքային ընկերության ինքնալուծարումն իրականացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

13.3. Հիփոթեքային ընկերության ինքնալուծարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

13.4. Լուծարային հանձնաժողովն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ առնվազն երեք անդամի կազմով:

13.5. Պարտատերերի հանդեպ ունեցած պարտավորությունների մարումից հետո մնացած լուծարային միջոցները բաշխվում են բաժնետերերի միջև՝ նրանց բաժնեմասին համամասնորեն:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ենթահավելված 6

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

«30» հունիսի 2019թ.
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ
ք Երևան, Հանրապետության 22-7/1

Անվանումը	Ծանոթ.	01.04.2019-30.06.2019	01.04.2018-30.06.2018	01.01.2019-30.06.2019	01.01.2018-30.06.2018
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	4	1,278,668	1,259,317	2,530,383	2,453,268
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	4	(572,314)	(579,129)	(1,116,123)	(1,131,586)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներ		**706,354**	**680,188**	**1,414,260**	**1,321,682**
Արժեզրկումից կորուստներ	5	**(43,556)**	**(20,315)**	**(51,422)**	**(51,492)**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	6	-	-	-	-
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	6	(332)	(93)	(438)	(494)
Զուտ կոմիսիոն ծախսեր		**(332)**	**(93)**	**(438)**	**(494)**
Զուտ առևտրային եկամուտ/(վնաս)	7	(16,169)	3,141	(11,926)	(2,693)
Այլ եկամուտներ	8	-	-	-	22
Անձնակազմի գծով ծախսեր	9	(26,586)	(27,326)	(56,152)	(56,069)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածություն	17	(2,827)	(2,141)	(5,302)	(4,247)
Օգտագործման իրավունքով ստացված ակտիվների մաշվածություն	18	(5,388)	-	(10,767)	-
Այլ ծախսեր	10	(5,807)	(10,299)	(13,184)	(33,995)
Շահույթ մինչև հարկում		**605,689**	**623,155**	**1,265,069**	**1,172,714**
Շահութահարկի գծով ծախս	11	(128,565)	(127,399)	(265,893)	(238,550)
Ժամանակաշրջանի շահույթ		**477,124**	**495,756**	**999,176**	**934,164**
Այլ համապարփակ եկամուտ		3,354		1,156	
Ընդամենը ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ		**480,478**	**495,756**	**1,000,332**	**934,164**

Գործադիր տնօրեն Է. Վարդումյան

Գլխավոր հաշվապահ Լ. Դունամալյան

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» «NATIONAL MORTGAGE COMPANY» 02707189

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 12 հուլիսի 2019թ.

Ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթին՝ ներառյալ կից ծանոթագրություններին կարող եք ծանոթանալ WWW.NMC.AM կայքից

Ենթահավելված 7

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական դրության մասին
«30» հունիսի 2019թ.
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ
ք Երևան, Հանրապետության 22-7/1

հազ. դրամ

Անվանումը	Ծանոթ.	30.06.2019թ.	31.12.2018թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ	12	3,753,513	6,070,012
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13	19,258,433	16,604,062
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	14	774,423	1,067,865
Վարկեր ֆինանսական կազմակերպություններին	15	40,571,960	41,489,866
Վարկեր աշխատակիցներին	16	8,084	11,780
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	17	25,075	9,719
Օգտագործման իրավունքով ստացված ակտիվներ	18	50,573	11,412
Այլ ակտիվներ	19	224,040	27,276
Ընդամենը՝ ակտիվներ		**64,666,101**	**65,291,992**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ՀՀ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	20	14,977,534	14,753,423
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	21	0	321,864
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմ. նկատմամբ	22	6,753,116	7,190,605
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն	11	265,893	195,193
Հետաձգված հարկային պարտավորություն	11	75,067	75,067
Թողարկված պարտքային արժեթղթեր	23	6,635,293	7,838,688
Վարձակալության գծով վճարվելիք գումարներ	24	51,332	0
Այլ պարտավորություններ	25	136,220	145,838
Ընդամենը՝ պարտավորություններ		**28,894,455**	**30,520,678**
Սեփական կապիտալ	26		
Բաժնետիրական կապիտալ		26,902,988	26,902,988
Գլխավոր պահուստ		389,102	290,965
Վերագնահատման պահուստ		5,451	4,295
Չբաշխված շահույթ		8,474,105	7,573,066
Ընդամենը՝ սեփական կապիտալ		**35,771,646**	**34,771,314**
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		**64,666,101**	**65,291,992**

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» «NATIONAL MORTGAGE COMPANY» 02707189

Գործադիր տնօրեն Է. Վարդումյան

Գլխավոր հաշվապահ Լ. Դունամալյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 12 հուլիսի 2019թ.

Ենթահավելված 9ա

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների մասին
«30» հունիսի 2019թ.
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ
ք Երևան, Հանրապետության 22-7/1

Անվանումը	01.01.2019-30.06.2019թթ.	01.01.2018-30.06.2018թթ.
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ		
Ստացված տոկոսներ	2,574,284	2,417,208
Վճարված տոկոսներ	(1,113,238)	(1,084,243)
Անձնակազմի և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(50,937)	(45,463)
Գործառնական ակտիվների (աճ) նվազում		
Ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	(2,799,965)	(2,119,222)
Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին	899,456	583,973
Այլ ակտիվներ	(10,195)	(24,961)
Գործառնական պարտավորությունների աճ (նվազում)		
Այլ պարտավորություններ	(17,522)	(15,066)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր՝ մինչև շահութահարկը	**(518,117)**	**(287,774)**
Վճարված շահութահարկ	(393,976)	(303,659)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	**(912,093)**	**(591,433)**
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ		
Ներդրումային արժեթղթերի առք	283,735	(1,380,796)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(5,805)	(1,411)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	**277,930**	**(1,382,207)**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ		
ՀՀ ԿԲ-ից ստացված միջոցներ	2,056,728	1,671,497
ՀՀ ԿԲ-ից ստացված միջոցների մարում	(1,829,257)	(1,622,815)
ՀՀ կառավարությունից ստացված միջոցների մարում	(320,944)	(320,944)
ՀՀ բանկերից ստացված միջոցներ	-	(3,248,280)
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված միջոցներ	(373,834)	(384,210)
Պարտքային արժեթղթերի թողարկումից մուտքեր	-	3,013,273
Պարտքային արժեթղթերի մարում	(1,200,000)	-
Օգտագործման իրավունքով ստացված ակտիվներ	(11,147)	-
Բաժնետիրական կապիտալի թողարկումից մուտքեր	-	-
Ֆինանսական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական հոսքեր	**(1,678,454)**	**(891,479)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում) աճ	(2,312,617)	(2,865,119)
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(3,907)	(5,094)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	**6,070,012**	**3,265,589**
Դրամական միջոցների ակնկալվող պարտքային կորուստների պահուստում փոփոխության ազդեցությունը	**25**	**(9)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**3,753,513**	**395,367**

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» «NATIONAL MORTGAGE COMPANY» 02707189

Գործադիր տնօրեն Է. Վարդումյան

Գլխավոր հաշվապահ Լ. Դունամալյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 12 հուլիսի 2019թ.

Ենթահավելված 8

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին
«30» հունիսի 2019թ.
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ
ք Երևան, Հանրապետության 22-7/1

հազ. դրամ

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ	Դրամական հոսքերի հեջավորում	Այլ ընդարձակ ակտիվների վերագնահատումների օգուտներ	Չբաշխված շահույթ/վնաս	Ընդամենը	Չվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը նախկին
	Կանոնադրական կապիտալ	Հետ գնված կապիտալ	Զուտ գումարը										
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Նախորդ հաշվետու ժամանակաշրջան (I աղյուսակ)													
1. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2018թ. (ստուգված/չստուգված)	20,902,968		20,902,968		217,456		-			5,789,796			26,910,220
2. ԾՀՄՍ_9 ազդեցությունը										(105,305)			(105,305)
3.Վերահաշվարկված մնացորդը	20,902,968		20,902,968		217,456					5,684,491			26,804,915
4. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	-		-		-					-			-
4.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	-		-		-					-			-
5. Համապարփակ եկամուտ													
6. Շահութաբաժիններ													
7. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝										934,164			934,164
8. Ներքին շարժեր, այդ թվում՝					73,509					(73,509)			-
8.1. Մասհանումներ գլխավոր պահուստին					73,509					(73,509)			-
9. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 30 հունիսի 2018թ.	20,902,968		20,902,968		290,965					6,545,146			27,739,079

Հաշվետու ժամանակաշրջան (II այլուսակ)													
10. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2019թ. (ստուգված/չստուգված)	26,902,988		26,902,988		290,965		4,295			7,573,066			34,771,314
11.Վերահաշվարկված մնացորդը	26,902,988		26,902,988		290,965		4,295			7,573,066			34,771,314
12. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	-		-							-			-
12.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	-		-							-			-
13. Համապարփակ եկամուտ							1,156			999,176			1,000,332
14. Շահութաբաժիններ													
15. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝										999,176			999,176
16. Ներքին շարժեր, այդ թվում՝					98,137					(98,137)			-
16.1. Մասհանումներ գլխավոր պահուստին					98,137					(98,137)			-
17. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 30 հունիսի 2019թ.	26,902,988	-	26,902,988	-	389,102	-	5,451	-	-	8,474,105	-	-	35,771,646

Գործադիր տնօրեն Է. Վարդումյան

Գլխավոր հաշվապահ Լ. Դունամալյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 12 հուլիսի 2019թ.

“Ազգային Հիփոթեքային Ընկերություն” ՎՎԿ Փակ Բաժնետիրական Ընկերություն

30 հունիսի 2019թ.

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

“Ազգային Հիփոթեքային Ընկերություն” ՎՎԿ (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնվել է 2009թ. հունիսին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Կազմակերպությունը գրանցվել է 2009թ. հունիսի 16-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից խորհրդի թիվ 182 Ա որոշմամբ, թիվ 26 գրանցման համարով: ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1/1167 Ա որոշմամբ Կազմակերպության տիպը փոփոխվել է ունիվերսալ վարկային կազմակերպությունից վերաֆինանսավորող վարկային կազմակերպության:

Կազմակերպությունը ստեղծվել է ՀՀ հիփոթեքային շուկայի զարգացմանն օժանդակելու նպատակով, որն իրականացվում է բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց տրամադրված հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման միջոցով:

Կազմակերպության գրասենյակը գտնվում է Երևանում, հասցեն է՝ Հանրապետության 22-7/1:

Հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպության աշխատողների միջին թվաքանակը կազմել է 21 մարդ:

2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

2.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ): Ֆինանսական հաշվետվությունները ներառում են Կազմակերպության ֆինանսական գործունեության արդյունքները և դրամական հոսքերը 2019թ. հունվարի 01-ից հունիսի 30-ը ընկած ժամանակաշրջանի համար:

2.2 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն դեպի Կազմակերպություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Կազմակերպությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես “տոկոսային եկամուտ” և “տոկոսային ծախս” օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

2.3 Հարկում

Շահույթի գծով շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բառառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Շահութահարկին վերաբերող հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցվում է:

2.4 Դրամական միջոցների համարժեքներ

Դրամական միջոցների համարժեքները բաղկացած են ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող միջոցներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակահատվածում: Դրամական միջոցների համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Կազմակերպությունն իր գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով:

2.5 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունն օգտագործում է բանկերում բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

2.6 Ֆինանսական գործիքներ

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Կազմակերպության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական գործիքներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- վարկեր և դեբիտորական պարտքեր,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական ակտիվների նման դասակարգումը կատարվում է սկզբնական ճանաչման պահին՝ Կազմակերպության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա՝ հաշվի առնելով ձեռքբերման նպատակները:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները չափվում են իրենց իրական արժեքներով, բացառությամբ հետևյալ ֆինանսական ակտիվների՝

- փոխառությունների և դեբիտորական պարտքերի, որոնք պետք է չափվեն ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, որոնք պետք է չափվեն ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Սկզբնական ճանաչումից հետո Կազմակերպությունը ֆինանսական պարտավորությունները չափում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ

- ֆինանսական պարտավորությունների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Այսպիսի պարտավորությունները պետք է չափվեն իրական արժեքով,
- ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի որակվում որպես ապաճանաչման ենթակա, կամ երբ կիրառելի է շարունակվող ներգրավվածության մոտեցումը:

2.7 Արժեզրկում կամ սպասվող պարտքային կորուստ

2018 թ.-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտավ ՖՀՄՍ 9-ը, որը կիրառելի է այդ ամսաթվին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար:

Համաձայն ՖՀՄՍ 9-ի պահանջների ՀՀՄՍ 39-ով սահմանված "կրած վնասի" մոդելը փոխարինվեց "սպասվող պարտքային վնասի" մոդելով, որի համար պահանջվեց էական դատողություններ անել այն մասին, թե ինչպիսի ազդեցություն կունենան տնտեսական գործոնները սպասվող պարտքային վնասի վրա, և հավանականության հիմունքով որոշել վնասի չափը:

Ըստ ստանդարտի պետք է ճանաչել պահուստ՝ ամորտիզացված արժեքով չափվող բոլոր պարտքային ֆինանսական ակտիվների, ինչպես նաև վարկային պարտավորությունների և երաշխիքների գծով ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ / Expected Loss) համար:

Կազմակերպությունը 2018 թ.-ի հունվարի 1-ից կիրառում է նոր ստանդարտը: Անցման կուտակային ազդեցությունը արտացոլվում է հաշվետու տարվա սկզբի չբաշխված շահույթում, իսկ յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Կազմակերպությունը ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար իրականացնում է արժեզրկման կամ սպասվող պարտքային կորստի գնահատում :

Պահուստի չափը որոշվում է ԱՎԿ-ի հիման վրա, որը կապված է հաջորդ 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ: Գործընկեր ֆինանսական կազմակերպության տրամադրած եւ Կազմակերպության կողմից վերաֆինանսավորված վարկերի գծով ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների դեֆոլտի հավանականությունը գնահատվում է գործընկեր ֆինանսական կազմակերպությունների եւ առաջնային վարկառուների համատեղ դեֆոլտի (joint default) հայեցակարգի ներքո, իսկ մնացած պահանջների դեպքում՝ գործընկերոջ առանձին դեֆոլտի (stand-alone default) հայեցակարգի ներքո:

Անհրաժեշտ հաշվարկի իրականացման համար Կազմակերպությունն ունի մշակված համապատասխան մեթոդաբանություն, համաձայն որի գնահատվում և հաշվարկվում են ֆինանսական ակտիվի հետ կապված հնարավոր կորուստների չափը:

Համաձայն կազմակերպության մեթոդաբանության՝ ԱՎԿ մեծությունը որոշելու համար ֆինանսական ակտիվները խմբավորվում են հետևյալ երեք դասերում.

- **Դաս 1 – Ցածր վարկային ռիսկ ունեցող ֆինանսական ակտիվներ**, որտեղ ներառվում են այն ակտիվները, որոնց վարկային ռիսկը նշանակալիորեն չի ավելացել ակտիվների ձեւավորման պահի նկատմամբ: Ակտիվների վարկային ռիսկի ավելացման ակնհայտ ազդանշան է դիտարկվում մինչեւ 30 օր ժամկետանց օրերի քանակը: Այս խմբում ներառված ակտիվների գծով ԱՎԿ-ի մեծությունը որոշվում է հաջորդ 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հիման վրա:
- **Դաս 2 – Ֆինանսական ակտիվներ որոնց վարկային ռիսկը նշանակալիորեն աճել է:** Այս դասում համախմբվում են այն ակտիվները, որոնց գծով արձանագրվել է

սկզբնական ճանաչման նկատմամբ դեֆոլտի հավանականության նշանակալի աճ: Որպես վարկային ռիսկի նշանակալի ավելացման ակնհայտ ազդանշան դիտարկվում է առնվազն վարկային վճարման 30 օր եւ ավելի ժամկետանց օրերի քանակը: Այս խմբում ներառված ակտիվների գծով ԱՎԿ-ի մեծությունը որոշվում է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում դեֆոլտի հավանականության հիման վրա:

- **Դաս 3 – Արժեզրկված ֆինանսական ակտիվներ:** Այս դասում համախմբվում են այն ակտիվները, որոնց գծով ակնկալվող դրամական հոսքերի վրա վնասաբեր ազդեցություն են թողել մեկ կամ մի քանի իրադարձություններ: Որպես ակտիվի արժեզրկման չափանիշ դիտարկվում է առնվազն վարկային վճարման 90 օր եւ ավելի ժամկետանց օրերի քանակը: Այս խմբում ներառված ակտիվների գծով ԱՎԿ-ի մեծությունը որոշվում է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում դեֆոլտի հավանականության հիման վրա:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը հիմնականում մնում են անփոփոխ ՀՀՄՍ 39-ի պահանջների համեմատ:

Ածանցյալ գործիքները կշարունակեն չափվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

2.8 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- կազմակերպությունը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- կազմակերպությունը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ համարվում կամ լրացել է դրա վաղեմության ժամկետը:

2.9 Հիմնական միջոցներ

Կազմակերպությունը հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները հաշվեկշռում ճանաչում է այն ժամանակ, երբ հավանական է, որ

- այդ ակտիվներին վերագրելի տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն, և
- այդ ակտիվները ունեն արժեք, որը կարող է արժանահավատորեն չափվել:

Կազմակերպության հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները հաշվեկշռում ճանաչվում են իրենց սկզբնական արժեքներով (ինքնարժեքներով): Ակտիվների ինքնարժեքները ընդգրկում են այդ ակտիվների ձեռքբերման գները, ներկրման տուրքերը, հարկերը, տեղակայման ծախսումները և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն կազմակերպության վերադարձման, և ակտիվները իրենց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախսումներ:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը

- շենքեր, շինություններ և փոխանցվող հարմարանքներ 20 տարի,
- հաշվողական և համակարգչային տեխնիկա 1-5 տարի,
- այլ հիմնական միջոցներ 5 տարի,
- մինչև 50 հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցներ 1 տարի,
- ոչ նյութական ակտիվներ 10 տարի:

Վարձակալված հիմնական միջոցի վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային մեթոդի հիմունքով հետևյալ երկու ժամկետներից նվազագույնով. վարձակալման ժամկետ կամ հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետ:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, եթե առկա են արժեզրկման հատկանիշներ:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի պետք է ստուգվի անորոշ օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվի արժեզրկված լինելը՝ դրա հաշվեկշռային արժեքը համեմատելով փոխհատուցվող գումարի հետ:

Բաժնետիրական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Համաձայն գործող կանոնադրության, Կազմակերպությունը արտոնյալ բաժնետոմսեր չի կարող թողարկել: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում

թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

2.10 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվեկշռում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

3 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Կազմակերպության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Փոխկապակցված կողմերի հետ գործառնություններ

Կազմակերպությունը փոխկապակցված կողմերի հետ գործառնությունները իրականացնում է շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Կազմակերպությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Վարկերի և այլ փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստներ

Կազմակերպությունը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք անհրաժեշտ է արժեզրկման պահուստ ձևավորել ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է

պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Կազմակերպությունը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

Հարկային օրենսդրություն

Ղեկավարությունը համոզված է, որ Կազմակերպությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

4 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	01.04.19-30.06.19թթ.	01.04.18-30.06.18թթ.	01.01.19-30.06.19թթ.	01.01.18-30.06.18թթ.
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	916,009	957,007	1,834,220	1,905,188
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	350,063	283,976	669,470	517,719
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	12,596	18,334	26,693	30,361
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	1,278,668	1,259,317	2,530,383	2,453,268

Հազար ՀՀ դրամ	01.04.19-30.06.19թթ.	01.04.18-30.06.18թթ.	01.01.19-30.06.19թթ.	01.01.18-30.06.18թթ.
ՀՀ կառավարությունից ներգրավված միջոցներ	4,347	15,646	9,851	32,157
ՀՀ ԿԲ-ից ներգրավված միջոցներ	299,696	290,672	576,163	553,936
ՀՀ բանկերից ներգրավված միջոցներ	0	0	0	68,844
Միջազգ. ֆինանս. կազմ. ներգրավված միջոցներ	77,432	81,126	153,727	160,733
Թողարկված պարտքային արժեթղթեր	190,005	191,685	374,774	315,916
Վարձակալություն	834	0	1,608	0
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	572,314	579,129	1,116,123	1,131,586

5 Արժեզրկումից կորուստներ

Ստորև ներկայացվում է ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկը՝

Հազար ՀՀ դրամ	01.04.19-30.06.19թթ.	01.04.18-30.06.18թթ.	01.01.19-30.06.19թթ.	01.01.18-30.06.18թթ.
Բանկային ավանդներ	41,695	20,227	55,408	33,203
Թղթակցային հաշիվներ	(60)	(17)	(25)	(31)
Վարկեր ֆինանսական կազմակերպություններին	543	(41)	10	(27)
Վարկեր աշխատակիցներին	0	0	(1)	0
Այլ	1,378	146	(3,970)	18,347
Ընդամենը արժեզրկման կորուստներ	43,556	20,315	51,422	51,492

6 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	01.04.19-30.06.19թթ.	01.04.18-30.06.18թթ.	01.01.19-30.06.19թթ.	01.01.18-30.06.18թթ.
Բանկային և դեպո հաշիվների սպասարկման վճարներ	332	93	438	494
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	332	93	438	494

7 Զուտ եկամուտ/(վնաս) արտարժութային գործարքներից

Հազար ՀՀ դրամ	01.04.19-30.06.19թթ.	01.04.18-30.06.18թթ.	01.01.19-30.06.19թթ.	01.01.18-30.06.18թթ.
Արտարժույթի վերագնահատումից զուտ եկամուտ/(վնաս)	(16,123)	3,141	(11,836)	(2,742)
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ/(վնաս)	(34)	0	(78)	49
Ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից զուտ եկամուտ/(վնաս)	(12)	0	(12)	0
Ընդամենը զուտ առևտրային վնաս	(16,169)	3,141	(11,926)	(2,693)

8 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	01.04.19-30.06.19թթ.	01.04.18-30.06.18թթ.	01.01.19-30.06.19թթ.	01.01.18-30.06.18թթ.
Ստացված տույժեր, տուգանքներ	0	0	0	22
Ընդամենը զուտ առևտրային վնաս	0	0	0	22

9 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	01.04.19-30.06.19թթ.	01.04.18-30.06.18թթ.	01.01.19-30.06.19թթ.	01.01.18-30.06.18թթ.
Աշխատավարձ	25,142	25,731	53,637	53,033
Ուսուցման ծախսեր	225	865	585	1,175
Այլ ծախսեր	1,219	730	1,930	1,861
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	26,586	27,326	56,152	56,069

10 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	01.04.19-30.06.19թթ.	01.04.18-30.06.18թթ.	01.01.19-30.06.19թթ.	01.01.18-30.06.18թթ.
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	530	706	1,124	1261
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) տուրքեր	560	535	713	562
Աուդիտի գծով ծախսեր	0	0	1,800	1,698
Գրասենյակային ծախսեր	14	181	150	259
Ներկայացուցչական ծախսեր	420	299	1,348	404
Ոչ նյութական ակտիվների պահպանման ծախսեր	1,584	1,506	3,168	2,991
Վարձակալության գծով ծախս	0	5,302	0	10,603
Գործուղման ծախսեր	635	0	1,011	247
Այլ ծախսեր	2,064	1,770	3,870	15,970
Ընդամենը այլ ծախսեր	5,807	10,299	13,184	33,995

11 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	01.01.19-30.06.19թթ. ընկած ժամանակահատվածի համար
Ընթացիկ հարկ	265,893
Հետաձգված հարկ	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	265,893

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20%: ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև:

12 Դրամական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	30.06.19թ.	31.12.18թ.
Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	2,998,024	5,569,416
Այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ	755,558	500,690
Արժեզրկում	(69)	(94)
Ներառվում է դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում	3,753,513	6,070,106
Ընդամենը կանխիկ դրամական միջոցների համարժեքներ	3,753,513	6,070,012

13 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	30.06.19թ.	31.12.18թ.
Ժամկետային ավանդներ ՀՀ բանկերում	19,468,900	16,759,121
Արժեզրկում	(210,467)	(155,059)
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	19,258,433	16,604,062

14 Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	30.06.19թ.	31.12.18թ.
ՀՀ ոչ պետական արժեթղթեր	774,423	1,067,865
Ընդամենը արժեթղթեր	774,423	1,067,865

Հազար ՀՀ դրամ	30.06.19թ.	31.12.18թ.
ՀՀ ոչ պետական արժեթղթեր	774,423	1,067,865

15 Վարկեր ֆինանսական կազմակերպություններին

Հազար ՀՀ դրամ	30.06.19թ.	31.12.18թ.
Վարկեր	40,583,664	41,501,560
Արժեզրկում	(11,704)	(11,694)
Ընդամենը վարկեր ֆինանսական կազմակերպություններին	40,571,960	41,489,866

30.06.19թ. դրությամբ հաճախորդներին տրված վարկերում ներառված հաշվեգրված տոկոսային եկամուտը կազմում է 408,048 հազար դրամ:

Տրամադրված վարկերի վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	30.06.19թ.	31.12.18թ.
Վարկեր ՀՀ-ում գործող բանկերին	33,314,801	33,833,408
Վարկեր ՀՀ-ում գործող վարկային կազմակերպություններին	6,860,815	7,241,786
Հաշվեգրված տոկոսներ	408,048	426,366
Արժեզրկում	(11,704)	(11,694)
Ընդամենը վարկեր ֆինանսական կազմակերպություններին	40,571,960	41,489,866

Կազմակերպությունն իրավունք ունի յուրաքանչյուր երեք տարին մեկ վերանայել իր կողմից բանկերին և վարկային կազմակերպություններին տրամադրած վարկերի տոկոսադրույքները:
Ինչպես նշված է 29 (*Ֆինանսական գործիքների իրական արժեք*) ծանոթագրությունում, 30.06.19թ. դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը համընկնում է դրանց հաշվեկշռային արժեքին:
Վարկային պորտֆելին ներհատուկ վարկային, արժութային, իրացվելիության և տոկոսային ռիսկը բացահայտված է 31 (*Ռիսկի կառավարում*) ծանոթագրությունում: Տեղեկատվությունը փոխկապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 28 (*Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ*) ծանոթագրությունում:

16 Վարկեր տրված աշխատակիցներին

Հազար ՀՀ դրամ	30.06.19թ.	31.12.18թ.
Վարկեր	8,086	11,783
Արժեզրկում	(2)	(3)
Ընդամենը աշխատակիցներին տրված վարկեր և փոխատվություններ	8,084	11,780

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	30.06.19թ.	31.12.18թ.
Վարկեր Կազմակերպության հետ կապված ֆիզիկական անձանց	3,561	5,268
Վարկեր Կազմակերպության աշխատակիցներին	4,523	6,515
Հաշվեգրված տոկոսներ	2	0
Արժեզրկում	(2)	(3)
Ընդամենը աշխատակիցներին տրված վարկեր և փոխատվություններ	8,084	11,780

17 Հիմնական միջոցներ և Ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային և հաղորդակցման սարքավորումներ	Այլ հիմնական միջոցներ	Փոխադրամիջոցներ	Գույք և գրասենյակային սարքավորումներ	Ընդամենը
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ					
2019թ. հունվարի 01-ի դրությամբ	30,363	1,013	10,336	6,147	47,859
Ավելացում	8,861	63	-	25	8,949
Նվազեցում	-	-	-	-	-
2019թ. հունիսի 30-ի դրությամբ	39,224	1,076	10,336	6,172	56,808
ԿՈՒՏԱԿՎԱԾՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ					
2019թ. հունվարի 01-ի դրությամբ	22,758	914	10,336	4,132	38,140
Հատկացումներ	2,326	29	-	440	2,795
Վերադարձ	-	-	-	-	-
2019թ. հունիսի 30-ի դրությամբ	25,084	943	10,336	4,572	40,935
Հաշվեկշռային արժեք 2019թ. հունիսի 30-ի դրությամբ	14,140	133	0	1,600	15,873

Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ	Այլ (տնային էջ)	Ընդամենը
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ				
2019թ. հունվարի 01-իդրությամբ	**24,498**	**8,545**	**3,000**	**36,043**
Ավելացում	-	**297**	-	**297**
Նվազեցում	-	-	-	-
2019թ. հունիսի 30-ի դրությամբ	**24,498**	**8,842**	**3,000**	**36,340**
ԿՈՒՏԱԿՎԱԾ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ				
2019թ. հունվարի 01-ի դրությամբ	**18,001**	**5,560**	**1,070**	**24,631**
Հատկացումներ	**1,854**	**503**	**150**	**2,507**
Վերադարձ	-	-	-	-
2019թ. հունիսի 30-ի դրությամբ	**19,855**	**6,063**	**1,220**	**27,138**
Հաշվեկշռային արժեք 2019թ. հունիսի 30-ի դրությամբ	**4,643**	**2,779**	**1,780**	**9,202**

18 Օգտագործման իրավունքով ստացված ակտիվների մաշվածություն

Հազար ՀՀ դրամ	Օգտագործման իրավունքով ստացված ակտիվներ
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ	
2019թ. հունվարի 01-իդրությամբ	**35,994**
Ավելացում	**25,345**
Նվազեցում	**2,640**
2019թ. հունիսի 30-ի դրությամբ	**58,699**
ԿՈՒՏԱԿՎԱԾ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ	
2019թ. հունվարի 01-ի դրությամբ	
Հատկացումներ	**10,766**
Վերադարձ	**2,640**
2019թ. հունիսի 30-ի դրությամբ	**8,126**
Հաշվեկշռային արժեք 2019թ. հունիսի 30-ի դրությամբ	**50,573**

19 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	30.06.19թ.	31.12.18թ.
Այլ կանխավճարներ	**212**	**12**
Այլ կանխավճարված հարկեր	**198,780**	-

Հազար ՀՀ դրամ	30.06.19թ.	31.12.18թ.
Այլ ակտիվներ	25,048	27,264
Արժեզրկում	-	-
Ընդամենը այլ ակտիվներ	224,040	27,276

20 Պարտավորություններ ՀՀ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	30.06.19թ.	31.12.18թ.
ՀՀ ԿԲ-ից ստացված վարկեր	14,977,534	14,753,423
Ընդամենը պարտավորություններ ՀՀ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14,977,534	14,753,423

ՀՀ Կենտրոնական բանկից ներգրավված միջոցները ներկայացնում են «Հայաստանում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում» վարկային ծրագրի շրջանակներում, որը իրականացվում է Կազմակերպության միջոցով: Այս վարկերի վերահսկողությունն ու վարչարարությունը իրականացվում է Գերմանահայկական Հիմնադրամի կողմից: Վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերին ներկայացվում են որոշակի պահանջներ՝ համաձայն գործող Գլխավոր վարկային պայմանագրի և Կազմակերպության Խորհրդի կողմից հաստատված Վերաֆինանսավորման կարգի: Վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:
Հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

21 Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	30.06.19թ.	31.12.18թ.
ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	0	321,864
Ընդամենը պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	0	321,864

ՀՀ կառավարությունից ներգրավված միջոցները ներառում են վարկեր ստացված ՀՀ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում: Այս վարկերի վերահսկողությունն ու վարչարարությունը իրականացվում է Գերմանահայկական

Հիմնադրամի կողմից: Վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերին ներկայացվում են որոշակի պահանջներ՝ համաձայն գործող Գլխավոր վարկային պայմանագրի և Կազմակերպության Խորհրդի կողմից հաստատված Վերաֆինանսավորման կարգի: Վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

Հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը մարել է ՀՀ կառավարությունից ներգրավված պարտավորությունն ամբողջությամբ՝ համաձայն ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրի ժամանակացույցի:

22 Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	30.06.19թ.	31.12.18թ.
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր	6,753,116	7,190,605
Ընդամենը պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**6,753,116**	**7,190,605**

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցները ներառում են վարկեր, այդ թվում ստացված Ֆրանսիական Զարգացման Գործակալությունից՝ բնակարանային միկրովարկերը և էներգոարդյունավետության բարձրացման վարկավորումը, ինչպես նաև Սևծովյան առևտրի և զարգացման – ՍԱԶԲ բանկից՝ Գործընկեր ֆինանսական կազմակերպություններին ֆինանսավորելու նպատակով: Հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

23 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	30.06.19թ.	31.12.18թ.
Ոչ փաստաթղթային պարտատոմսեր	6,510,600	7,710,600
Զեղչատոկոս/Հավելավճար	(1,290)	(1,910)
Արժեկտրոն	125,983	129,998
Ընդամենը կազմ. կողմից թողարկված պարտքային արժեթղթեր	6,635,293	7,838,688

2019թ. հունիսի 30-ի դրությամբ շրջանառության մեջ են գտնվում Կազմակերպության տասնվեցերորդ, տասնյոթերորդ և տասնութերորդ թողարկման պարտատոմսերը՝ համապատասխանաբար 3 տարի, 3 տարի, 3 տարի մարման ժամկետով (ընդհանուր 6.6 մլրդ ՀՀ դրամ ծավալով):

Կազմակերպության կողմից թողարկված միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերը արժեկտրոնային են և ցուցակվել են«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի հիմնական Abond հարթակում:

Մանրամասները ներկայացված են ազդագիր/ծանուցում ներդրողին նյութում, որը տեղադրված է Կազմակերպության ինտերնետային կայքում՝ www.nmc.am **Պարտատոմսեր** բաժնում:

24 Վարձակալության գծով վճարվելիք գումարներ

Հազար ՀՀ դրամ	30.06.19թ.	31.12.18թ.
Վարձակալության գծով վճարվելիք գումարներ	60,134	-
Վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր	(8,802)	-
Ընդամենը վարձակալության գծով վճարվելիք գումարներ	51,332	-

25 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31.03.19թ.	31.12.18թ.
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	16,011	16,830
Այլ պարտավորություններ	120,207	129,008
Պարտավորություններ հարկերի և տուրքերի գծով	2	0
Ընդամենը այլ պարտավորություններ	136,220	145,838

26 Սեփական կապիտալ

2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմել է 26,902,988 հազ. դրամ: Համաձայն Կազմակերպության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 2,631,099 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,225 դրամ անվանական արժեքով:
2019թ. ընթացքում Կազմակերպությունը չի ավելացրել բաժնետիրական կապիտալը:

2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության 100% բաժնետեր հանդիսանում է ՀՀ կենտրոնական բանկը:
2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:
Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և ունեն մեկ ձայնի իրավունք Կազմակերպության տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովներում:

27 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտը աչքի է ընկնում հաճախակի կատարվող փոփոխություններով և լրացումներով: Վերջիններս երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ: Շատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ:

Ղեկավարությունը համոզված է, որ Կազմակերպությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները: 2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության նկատմամբ չի եղել որևէ դատական հայց: Հետևաբար Կազմակերպության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստավորումներ չեն կատարվել:

28 Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 "Փոխկապակցված կողմերի բացահայտում" կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Կազմակերպության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Կազմակերպության վերջնական վերահսկող է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկը:

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները ներառում են Կազմակերպության միակ բաժնետեր՝ ՀՀ կենտրոնական բանկում բացված Կազմակերպության ընթացիկ դրամային հաշվի վարումը, որն իրականացվում է շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով և Կազմակերպության հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի գումարները:

Գործարքների ծավալները, մնացորդները եռամսյակի վերջի դրությամբ հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2019թ.
	Բաժնետեր
Թղթակցային հաշիվ ՀՀ ԿԲ-ում	
Մնացորդը հունվարի 01-ի դրությամբ	5,569,416
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ավելացում	11,923,945
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում նվազում	(14,495,337)
Արժեզրկում	(38)
Մնացորդը հունիսի 30-ի դրությամբ	2,997,986

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2019թ.
	Ղեկավար անձնակազմ
Փոխկապակցված ֆիզիկական անձանց տրված վարկեր	
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	5,268

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2019թ.
	Բաժնետեր
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ավելացում	0
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում նվազում	(1,707)
Արժեզրկում	(1)
Մնացորդը հունիսի 30-ի դրությամբ	3,560

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2019թ.
	Բաժնետեր
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	
Մնացորդը հունվարի 01-ի դրությամբ	14,753,424
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ավելացում	3,209,055
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում նվազում	(2,984,946)
Մնացորդը հունիսի 30-ի դրությամբ	14,977,533

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2019թ.
Աշխատավարձ և այլ վճարումներ	25,374
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	25,374

29 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները համապատասխանում են իրենց մնացորդային արժեքների հետ և ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2019թ.	
	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ	3,753,513	3,753,513
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	19,258,433	19,258,433
Վարկեր ֆինանսական կազմակերպություններին	40,571,960	40,571,960
Վարկեր աշխատակիցներին	8,084	8,084
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Պարտավորություններ ՀՀ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14,977,534	14,977,534
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ	0	0
Պարտավորություններ միջազգ. ֆին. կազմ. նկատմամբ	6,753,116	6,753,116

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2019թ.	
	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
Թողարկված պարտքային արժեթղթեր	6,635,293	6,635,293

Մեկ ամիս և ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվները իրենից ներկայացնում են բանկերում տեղաբաշխված ավանդները և դրամական միջոցների մնացորդները:

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ
Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը համընկնում է դրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են՝ ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման վարկային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին, քանի որ ընթացիկ տոկոսադրույքները նոր գործիքների համար արտահայտում են նախկինում տրամադրված գործիքների տոկոսադրույքները:

Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2019թ.
	Իրական արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	774,423

Բոլոր ցուցակված պարտատոմսերը թողարկվել են ՀՀ-ում հրապարակայնորեն գնանշվող ընկերությունների կողմից:

30 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների:

Հազար ՀՀ դրամ								30 հունիսի 2019թ.
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	**1-ից 3 ամիս**	**3-ից 12 ամիս**	***Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար***	**1-ից 3 տարի**	**3 տարուց ավելի**	***12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար***	**Ընդամենը**
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ	**3,753,513**			**3,753,513**	-	-	-	**3,753,513**
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,261,820	2,607,381	8,632,553	**14,501,754**	2,362,306	2,394,373	4,756,679	**19,258,433**
Իրական արժ.չափվող ֆին. Ակտիվներ	7,819	-	-	**7,819**	766,604	-	766,604	**774,423**
Վարկեր Ֆինանսական կազմակերպություններին	481,720	746,312	3,071,551	**4,299,583**	11,226,088	25,046,288	36,272,376	**40,571,960**
Աշխատակիցներին տրված վարկեր	-	1,239	4,821	**6,060**	2,024	-	2,024	**8,084**
Ընդամենը	**7,504,872**	**3,354,932**	**11,708,925**	**22,568,729**	**14,357,023**	**27,440,662**	41,797,684	**64,366,413**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Պարտավորություններ ՀՀ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	-	3,723,618	**3,723,618**	4,441,490	6,812,425	11,253,915	**14,977,534**
Պարտավորություններ միջազգ. ֆին. կազմ. նկ.	-	-	2,739,110	**2,739,110**	1,459,639	2,554,367	4,014,006	**6,753,116**
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	86,066	3,549,227	**3,635,293**	3,000,000	-	3,000,000	**6,635,293**
Ընդամենը	**-**	**86,066**	**10,011,955**	**10,098,021**	**8,901,129**	**9,366,792**	18,267,921	**28,365,942**
Զուտ Դիրք	**7,504,872**	**3,268,866**	**1,696,970**	**12,470,707**	**5,455,894**	**18,073,869**	**23,529,763**	**36,000,470**
Կուտակված ճեղքվածք	**7,504,872**	**10,773,738**	**12,470,707**		**17,926,601**	**36,000,470**		

31 Ռիսկի կառավարում

Կազմակերպության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության

անխուսափելի հետևանքն են: Այդուհանդերձ, Կազմակերպության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Կազմակերպության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Կազմակերպության ռիսկի կառավարման քաղաքականության նպատակն է ախտորոշել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, և արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Կազմակերպությունը պարբերաբար վերանայում է ռիսկի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայում, ապրանքներում փոփոխություններն արտացոլելու և լավագույն փորձին հետևելու համար:

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Կազմակերպության Ղեկավարության կողմից՝ ըստ Կազմակերպության Խորհրդի հաստատած վարկային քաղաքականության և ներքին կանոնակարգերի: Ղեկավարությունը ախտորոշում, գնահատում և միջոցներ է ձեռնարկում զսպելու ֆինանսական ռիսկերը:

Կարևորագույն ռիսկերն են վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկը: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքների, տոկոսադրույքների և այլ գնային ռիսկերը:

31.1 Վարկային ռիսկ

Կազմակերպության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Կազմակերպությանն կորուստներ կարող է պատճառել: Վարկային ռիսկը Կազմակերպության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկվում: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Կազմակերպության ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտհաշվեկշռային ֆինանսական գործիքներում: Վարկային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Կազմակերպության վարկերի հսկողության բաժնի կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են կազմակերպության Ղեկավարությանը:

30.1.1 Վարկային ռիսկի առավելագույն չափը՝ առանց երաշխիքի կամ այլ վարկային ապահովման

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է 2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության՝ վարկային ռիսկի ենթարկվելու վատագույն տարբերակը՝ առանց ապահովվածությունը հաշվի առնելու: Հաշվեկշռային ակտիվների համար վարկային ռիսկերը հիմնված են հաշվեկշռային զուտ արժեքների վրա:

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	Համախառն առավելագույն ռիսկի չափ 2019թ. ***հունիսի*** **30**-ի դրությամբ
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13	**19,258,433**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	14	**774,423**
Վարկեր ֆինանսական կազմակերպություններին	15	**40,571,960**
Վարկեր աշխատակիցներին	16	**8,084**
Ընդամենը վարկային ռիսկ		**60,612,900**

30.1.2 Վարկային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ
2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության վարկային ռիսկերը ամբողջությամբ կենտրոնացած են ՀՀ-ում:

Արդյունաբերության ճյուղեր
2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության վարկային ռիսկերը ամբողջությամբ կենտրոնացած են Ֆինանսական կազմակերպություններում:

30.1.3 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Կազմակերպությունը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով:

Կազմակերպությունը իր վարկային ռիսկը զսպելու նպատակով կարող է իր հետ համագործակցող հաստատությունների համար սահմանել վարկի տրամադրման առավելագույն սահմանաչափեր: Յուրաքանչյուր հաստատության համար կարող է սահմանվել առանձին սահմանաչափ: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Կազմակերպությունը կարող է սահմանել սահմանաչափեր նաև վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերի վրա ըստ դրանց տրամադրման տարածաշրջանի, վարկառուների առանձին խմբերի և այլ հատկանիշների:

Կազմակերպության կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի 90 և ավել օր ժամկետանց դառնալու դեպքում հաստատությունը պարտավոր է այդ վարկի գումարի չափով մարել Կազմակերպության կողմից ստացված վարկի գումարը:

Կազմակերպությունը վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի նկատմամբ հսկողությունը իրականացնում է համագործակցող հաստատությունների կողմից յուրաքանչյուր ամիս ներկայացվող հաշվետվությունների հիման վրա, ինչպես նաև Կազմակերպության համապատասխան աշխատակցի տեղերում վարկերի ստուգման միջոցով:

Գրավ
Կազմակերպությունը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց ապահովում վերցնելը: Կազմակերպությունը որպես վարկերի և փոխատվությունների համար ապահովման հիմնական միջոց բոլոր վարկառուների հետ կնքում է պահանջի իրավունքի զիջման (ցեսիայի) պայմանագիր, համաձայն որի Կազմակերպությունն իրավունք է ստանում հարկ եղած դեպքում օգտվել Կազմակերպության կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի պայմանագրերից բխող վարկատուի և գրավառուի բոլոր իրավունքներից:

2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության կողմից տրամադրված վարկերը ամբողջությամբ ապահովված են վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերով:

Վարկային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ
2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունը չունի Վարկային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ:

31.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվեն այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Կազմակերպությունը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: 2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունը չի ունեցել առևտրային պորտֆել: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: 2019թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունը չունի շուկայական ռիսկի զգալի կենտրոնացումներ:

Տոկոսադրույքի ռիսկ
Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Կազմակերպության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Կազմակերպությունն իրավունք ունի յուրաքանչյուր երեք տարին մեկ վերանայել իր կողմից բանկերին և վարկային կազմակերպություններին տրամադրած վարկերի տոկոսադրույքները:

Արտարժույթի ռիսկ
Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Արտարժութային ռիսկի զսպման նպատակով Կազմակերպությունը որդեգրել է արտարժութային դիրքը հնարավորինս փակ պահելու քաղաքականություն Ընկերության կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների շրջանակներում:

Կազմակերպության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Անվանումը	Ծանոթ.	Ազատ փոխարկելի արժույթ[1]
Ակտիվներ		
Դրամական միջոցներ	12	160,634
Պահանջներ այլ ֆին. կազմ. նկատմամբ	13	4,685,326
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆին. արդյունքի միջոցով չափվող ֆին. ակտիվներ	14	774,423
Ընդամենը ակտիվներ		**5,718,627**
Պարտավորություններ		
Պարտավորություններ միջազգ. ֆին. կազմ. Նկատմամբ	22	4,750,980
Այլ պարտավորություններ	25	118,268
Ընդամենը պարտավորություններ		**4,869,248**
Զուտ դիրք 30.06.2019թ. դրությամբ		**849,379**

31.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Կազմակերպությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Կազմակերպությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Կազմակերպության հետ մասնավորապես:

[1] Ազատ փոխարկելի արժույթը ներկայացնում է ԱՄՆ դոլարը և ԵՎՐՈ-ն

Կազմակերպության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների:

32 Կապիտալի համարժեքություն

Կազմակերպության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Կազմակերպության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Կազմակերպությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ:

Ժամանակաշրջանի ընթացքում Կազմակերպությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

Վերաֆինանսավորող Վարկային Կազմակերպությունների համար ՀՀ կենտրոնական բանկը սահմանել է նորմատիվային կապիտալի նվազագույն չափ՝ 4,000,000 հազար դրամ գումարով:

Ձև թիվ 30
(եռամսյակային)

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

Վարկային կազմակերպության անվանումը *«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ*
Ամսաթիվը 01/04/19 30/06/19

(հազ. դրամ)

Նորմատիվներ	Փաստացի մեծությունը	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4
Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	26,902,988	4,000,000	խախտում չկա
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	35,499,244	4,000,000	խախտում չկա
Ն1[1] ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցության նվազագույն չափը.	111.20%	12.00%	խախտում չկա
Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	12.60%	30.00%	խախտում չկա

Վարկային կազմակերպության կարգադրության նախագահ (գլխավոր տնօրեն) **Է. Վարդումյան**

Գլխավոր հաշվապահ **Լ. Դունամալյան**

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2018թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 3

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 8

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 9

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 10

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 12

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 14

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական

հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

ՖՀՄՍ 9-ի առաջին անգամ կիրառումը

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների 4.4 ծանոթագրությունում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ 28.1 ծանոթագրությունում:

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՍԽ) թողարկել է ՖՀՄՍ 9-ը *«Ֆինանսական գործիքներ»*, որը փոխարինում է ՀՀՄՍ 39-ին՝ *«Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»*: ՖՀՄՍ 9-ի ներդրման արդյունքում առաջացող հիմնական փոփոխություններն են. Ընկերության արժեզրկումից կորուստները ներկայում հիմնված են ակնկալվող կորուստների, այլ ոչ թե փաստացի կորուստների մոդելի վրա, Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգման և չափման փոփոխությունները, որոնք մանրամասն նկարագրված են ֆինանսական հաշվետվություններին կից 4.4 ծանոթագրությունում:

Ինչպես նկարագրված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում, ֆինանսական ակտիվները դասակարգվել են, իսկ արժեզրկումից կորուստները հաշվառվել են համաձայն ՖՀՄՍ 9-ի *«Ֆինանսական գործիքներ»*: Սա համարվում է աուդիտի առանցքային հարց, քանի որ ՖՀՄՍ 9-ը նոր և բարդ հաշվապահական հաշվառման ստանդարտ է, որը պահանջում է էական դատողություններ ֆինանսական ակտիվների դասակարգման, ինչպես նաև արժեզրկման պահուստների որոշման համար:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են բիզնես մոդելի գնահատումը, որի շրջանակում պահվում են ակտիվները, գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները հիմնավորված են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներով, ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք, ինչպես հարկն է, չեն արտացոլվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման և դասակարգման հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- ուսումնասիրվել է Ընկերության՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգման և չափման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ,
- դիտարկվել և ստուգվել են Ընկերության՝ բիզնես մոդելի գնահատումը և պայմանագրային այն դրամական միջոցների հոսքերի թեստավորումը, որոնք առաջացնում են «միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ» հանդիսացող դրամական հոսքեր (SPPI թեստ)
- ստուգվել են սկզբնական մնացորդների ճշգրտումների համապատասխանությունը:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- ուսումնասիրվել է Ընկերության՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման

քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ,

- գնահատվել է արժեզրկման պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը, ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, պարտքային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը, ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբամական ճշգրտությունը:
- սստուգվել է Ընկերության՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերը տարբեր փուլերում դասակարգելու հիմքերի համապատասխանությունը:
- գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Ընկերության կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:
- Ընկերության ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրության համար մատչելի տեղեկատվություն:
- ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացրել ընթացակարգեր՝ վարկի որակի էական վատթարացման ռիսկերը գնահատելու և անհատական գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկների ժամանակին բացահայտելու նպատակով:
- ստուգվել են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Տեսական հիմնավորումները ընդունվել են, իսկ մոդելների մաթեմատիկական ճշտությունը թեստավորվել,
- արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով ընդունվել են նման տվյալների ընտրության գործընթացը, Ընկերության համար դրա համապատասխանությունը և նման տվյալների նկատմամբ վերահսկողությունն ու կառավարումը,
- մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ թեստավորում պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել),
- ստուգվել է սկզբնական մնացորդների ճշգրտումների համապատասխանությունը:

Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների

պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ:

Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք մեր բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց ներկայացված հարցերից մենք առանձնացնում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտորի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հանրային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցերը չպետք է ներկայացվեն աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրանց ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրանց ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Անկախ աուդիտի առաջադրանքի պատասխանատուն հանդիսանում է Արմեն Հովհաննիսյանը:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Արմեն Հովհաննիսյան
Առաջադրանքի պատասխանատու

19 փետրվարի 2019թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2018	2017
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	7	5,023,742	4,598,201
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	7	(2,297,585)	(2,483,622)
Զուտ տոկոսային եկամուտներ		2,726,157	2,114,579
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ/(վնաս)		41	(356)
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումից զուտ վնաս		(668)	(2,417)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ վնաս		(91)	-
Արժեզրկման ծախս	8	(55,275)	-
Անձնակազմի գծով ծախսեր	9	(146,364)	(139,322)
Այլ ծախսեր	10	(71,528)	(101,227)
Շահույթ մինչև հարկումը		2,452,272	1,871,257
Շահութահարկի գծով ծախս	11	(496,635)	(375,953)
Տարվա շահույթ		1,955,637	1,495,304
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Իրական արժեքի պահուստի շարժ (պարտքային գործիքներ)			
Իրական արժեքի զուտ փոփոխություն տարվա ընթացքում		(8,733)	-
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում		11,999	-
Վերադասակարգում շահույթում կամ վնասում և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում		(897)	-
Շահութահարկ		1,926	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		4,295	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		1,959,932	1,495,304

14-ից 70 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ	12	6,070,012	3,265,589
Պահանջներ բանկերի նկատմամբ	13	16,604,062	12,502,833
Տրամադրված վարկեր	14	41,501,648	42,323,821
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	15	1,067,864	N/A
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	21,130	24,343
Այլ ակտիվներ	17	27,276	35,306
Ընդամենը՝ ակտիվներ		65,291,992	58,151,892
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	18	14,753,423	17,173,297
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	19	321,864	965,468
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	20	7,317,735	8,078,916
Թողարկված պարտքային արժեթղթեր	21	7,838,688	4,751,824
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		195,193	152,781
Հետաձգված հարկային պարտավորություն	11	75,067	102,018
Այլ պարտավորություններ		18,708	17,368
Ընդամենը՝ պարտավորություններ		30,520,678	31,241,672
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	22	26,902,988	20,902,968
Գլխավոր պահուստ		290,965	217,456
Իրական արժեքի պահուստ		4,295	-
Չբաշխված շահույթ		7,573,066	5,789,796
Ընդամենը՝ սեփական կապիտալ		34,771,314	26,910,220
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		65,291,992	58,151,892

Ֆինանսական հաշվետվությունները՝ ներկայացված 8-ից 70 էջերում, հաստատվել են 2019թ. փետրվարի 19-ին և ստորագրվել են Ընկերության գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից:

Էդմոնդ Վարդումյան — Գործադիր տնօրեն

Լիլիթ Դունամալյան — Գլխավոր հաշվապահ

14-ից 70 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,902,968	217,456	-	5,789,796	26,910,220
ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը (ծանոթ. 6)	-	-	-	(98,858)	(98,858)
Վերահաշվարկված հաշվեկշիռը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	20,902,968	217,456	-	5,690,938	26,811,362
Տարվա շահույթ	-	-	-	1,955,637	1,955,637
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	(8,733)	-	(8,733)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների վաճառքից շահույթում կամ վնասում վերադասակարգված զուտ գումար	-	-	(897)	-	(897)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություն			11,999		11,999
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	1,926	-	1,926
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	4,295	-	4,295
Բաժնետիրական կապիտալի ավելացում	6,000,020	-	-	-	6,000,020
Հատկացում պահուստին	-	73,509	-	(73,509)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	6,000,020	73,509	-	(73,509)	6,000,020
Հաշվեկշիռը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,902,988	290,965	4,295	7,573,066	34,771,314

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	18,902,958	158,071	-	4,353,877	23,414,906
Տարվա շահույթ	-	-	-	1,495,304	1,495,304
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	1,495,304	1,495,304
Բաժնետիրական կապիտալի ավելացում	2,000,010	-	-	-	2,000,010
Հատկացում պահուստին	-	59,385	-	(59,385)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	2,000,010	59,385	-	(59,385)	2,000,010
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,902,968	217,456	-	5,789,796	26,910,220

14-ից 70 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	4,878,311	4,469,883
Վճարված տոկոսներ	(2,221,057)	(2,255,814)
Անձնակազմի և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(128,449)	(127,271)
Դրամական միջոցների հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	2,528,805	2,086,798
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	(4,119,222)	(567,875)
Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին	798,336	(2,399,409)
Այլ ակտիվներ	(39,654)	(108,820)
Նվազում գործառնական պարտավորություններում		
Այլ պարտավորություններ	(39,042)	(126,038)
Գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր մինչև շահութահարկը	(870,777)	(1,115,344)
Վճարված շահութահարկ	(454,535)	(332,535)
Գործառնական գործունեության համար օգտագործված միջոցներ	(1,325,312)	(1,447,879)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի առք	(1,065,198)	-
Հիմնական միջոցների և նյութական ակտիվների առք	(5,561)	(4,028)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(1,070,759)	(4,028)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2018	2017
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
ՀՀ բանկերից միջոցների ստացում	4,166,855	3,647,403
ՀՀ բանկերից ստացված միջոցների մարում	(6,568,014)	(2,874,239)
ՀՀ կառավարությունից ստացված միջոցների մարում	(641,888)	(641,888)
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից միջոցների ստացում/(մարում)	(763,359)	1,240,414
Պարտքային արժեթղթերի թողարկումից մուտքեր	3,013,273	-
Պարտքային արժեթղթերի մարում	-	(4,137,300)
Բաժնետիրական կապիտալի թողարկումից մուտքեր	6,000,020	2,000,010
Ֆինանսական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	5,206,887	(765,600)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	2,810,816	(2,217,507)
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(6,299)	18,091
Դրամական միջոցների ակնկալվող պարտքային կորուստների պահուստում փոփոխության ազդեցությունը	(25)	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ (ծանոթ. 6)	3,265,520	5,465,005
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (ծանոթ. 12)	6,070,012	3,265,589

14-ից 70 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնվել է 2009թ. հունիսին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 2009թ. հունիսի 16-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից խորհրդի թիվ 182 Ա որոշմամբ, թիվ 26 գրանցման վկայականով:

Ընկերությունը ստեղծվել է ՀՀ հիփոթեքային շուկայի զարգացմանն օժանդակելու նպատակով, որն իրականացվում է բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց տրամադրված հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման միջոցով:

Ընկերության գրասենյակը գտնվում է Երևանում: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Հանրապետության 22, թիվ 7/1 տարածք:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության աշխատողների միջին թվաքանակը կազմել է 22 մարդ:

2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական ու տնտեսական բարեփոխումները, և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս բարփոխումներից, ինչպես նաև Եվրասիական Տնտեսական Միությունում զարգացումներից, որի հետ շարունակվում է ՀՀ տնտեսության ինտեգրումը:

Ընկերության ղեկավարությունը կարծում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար (նախքան 2018թ. հունվարի 1-ը՝ վաճառքի համար մատչելի ակտիվների համար): Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Ընկերությունն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2018թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել, բայց դեռ կիրառելի չեն:

ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»*

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է *ՀՀՄՍ 39-ին* 2018թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Ընկերությունը 2017թ.-ի համար չի վերաներկայացրել ՖՀՄՍ 9-ի շրջանակում ֆինանսական գործիքների վերաբերյալ համեմատական տեղեկատվությունը: Հետևաբար, 2017թ. համեմատական տեղեկատվությունը ներկայացվում է ՀՀՄՍ 39-ի համաձայն և համադրելի չէ 2018թ. ներկայացված տեղեկատվության հետ: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 9-ի ներդրման հետևանքով առաջացած տարբերությունները ճանաչվել են անմիջապես չբաշխված շահույթում և բացահայտվել 6 ծանոթագրությունում:

Դասակարգման և չափման փոփոխություններ

ՖՀՄՍ 9-ի պահանջով դասակարգման և չափման կատեգորիան որոշելու համար բոլոր ֆինանսական ակտիվները, բացառությամբ բաժնային գործիքների և ածանցյալների, պետք է գնահատվեն կազմակերպության ակտիվների կառավարման բիզնես մոդելի և գործիքների պայմանագրային դրամական միջոցների հոսքերի բնութագրերի համադրությամբ:

ՀՀՄՍ 39-ի համաձայն ֆինանսական ակտիվների (իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, վաճառքի համար մատչելի, մինչև մարման ժամկետը պահվող և ամորտիզացված արժեքով) չափման դասակարգումները փոխարինվել են հետևյալով՝

- պարտքային գործիքներ ամորտիզացված արժեքով,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ, որոնց ապաճանաչումից օգուտը կամ վնասը փոխանցվում է շահույթին կամ վնասին,

- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքներ, որոնց ապաճանաչումից օգուտը կամ վնասը չի փոխանցվում շահույթին կամ վնասին,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական պարտավորությունների հաշվառումը հիմնականում շարունակում է մնալ այնպիսին, ինչպիսին եղել է ՀՀՄՍ 39-ի համաձայն, բացառությամբ կազմակերպության իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտավորությունների գծով սեփական պարտքային ռիսկի մասով առաջացող օգուտի կամ վնասի հաշվառմանը: Այս փոփոխությունները արտացոլվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և հետագա ապադասակարգման դեպքում չեն տեղափոխվում շահույթի կամ վնասի մասին հաշվետվություն:

Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգումը բացատրվում է 4.4.2 ծանոթագրությունում: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 9-ի կիրառման քանակական ազդեցությունը բացահայտվում է ծանոթագրություն 6-ում:

Արժեզրկման հաշվարկի փոփոխություններ

ՖՀՄՍ 9-ի ներդրումը հիմնավոր կերպով փոխել է Ընկերության՝ վարկերի գծով արժեզրկման հաշվառումը փոխարինելով ՀՀՄՍ 39-ի «կրած կորուստների» մոդելը՝ ապագայի վրա հիմնված «ակնկալվող պարտքային կորուստների» մոդելով: ՖՀՄՍ 9-ը պահանջում է Ընկերությունից ճանաչել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չհաշվառվող բոլոր վարկերի և այլ պարտքային ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստները: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ բաժնային գործիքների համար արժեզրկումից կորուստ չի հաշվարկվում:Պահուստը որոշվում է ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա, որը կապված է հաջորդ 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել պարտքային ռիսկի զգալի աճ: Եթե ֆինանսական ակտիվը համապատասխանում է գնված կամ ստեղծված արժեզրկված ֆինանսական ակտիվի սահմանմանը, ապա պահուստը հաշվարկվում է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների փոփոխության հիման վրա:

Ընկերության արժեզրկման գնահատման մանրամասները բացահայտվում են 28.1.2 ծանոթագրությունում: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 9-ի կիրառման քանակական ազդեցությունը բացահայտվում է ծանոթագրության 6-ում:

ՖՀՄՍ 7

ՖՀՄՍ 9-ի և ՀՀՄՍ 39-ի միջև տարբերություններն արտացոլելու համար ՖՀՄՍ 7 *Ֆինանսական գործիքներ. բացահայտումներն* արդիականացվել են, և Ընկերությունն այն ընդունել է ՖՀՄՍ 9-ի հետ միասին՝ 2018թ. հունվարի 1-ից սկսվող տարվա համար: Փոփոխությունները ներառում են անցումային բացահայտումներ, ինչպես նկարագրված է ծանոթագրություն 6-ում, ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների վերաբերյալ որակական և քանակական տեղեկատվություն, ինչպիսիք են օգտագործված ենթադրություններն ու ելակետային տվյալները՝ նշված ծանոթագրություն 28.1.2-ում:

Ներքոհիշյալ այլ ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2018թ-ին, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- ՖՀՄՍ 15 *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» և «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ». պարզաբանումներ (*ՖՀՄՍ 15 *փոփոխություններ)*
- *«2014-2017թթ. ՖՀՄՍ տարեկան բարեփոխումներ.* ՖՀՄՍ 1 *և* ՀՀՄՍ 28 *փոփոխություններ*

- ՖՀՄՄԿ 22 *«Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ»:*

3.5 Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

ՖՀՄՍ 16, «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ը կփոխարինի ՀՀՄՍ 17-ին՝ *«Վարձակալություն»* և նրա 3 մեկանաբանություններին: Այն ամբողջացնում է ՀՀՄՍԽ-ի՝ վարձակալության հաշվառման վերանայման երկարաժամկետ ծրագիրը: Վարձակալությունը կարտացոլվի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ճանաչելով օգտագործման իրավունքը որպես ակտիվ և վարձակալության գծով պարտավորությունը: ՖՀՄՍ 16-ը նախատեսում է 2 կարևոր պարզեցում ցածրարժեք ակտիվների և կարճաժամկետ՝ 12 ամիս կամ պակաս ժամկետով վարձակալությունների համար:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառում, այնուամենայնիվ, Ընկերությունը որոշել է այն վաղաժամ չկիրառել:

Ղեկավարությունը ներկայում գնահատում է ստանդարտի լիարժեք ազդեցությունը: Մինչ այժմ Ընկերությունը՝

- որոշել է օգտվել գործնական նպատակահարմարությունից ՝չկատարելու առկա վարձակալությունների ամբողջական վերանայում և կիրառելու ՖՀՄՍ 16-ը միայն նոր կամ փոփոխված պայմանագրերի դեպքում: Քանի որ որոշ վարձակալություններ կփոխվեն կամ կնորացվեն 2019թ., Ընկերությունը վերագնահատել է այդ վարձակալությունները և սահմանել, որ դրանք պետք է հաշվառվեն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ճանաչելով օգտագործման իրավունքը որպես ակտիվ,
- գնահատել է, որ ամենաէական ազդեցությունը կլինի Ընկերության կողմից ակտիվի՝ որպես օգտագործման իրավունքի և գրասենյակային ու արտադրական շենքերի վարձակալության գծով պարտավորությունը ճանաչելու անհրաժեշտությունը, որոնք ներկայում հաշվարկվում են որպես գործառնական վարձակալություն: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ապագա վարձավճարների նվազագույն չափը կազմել է 35,994 հազար դրամ: Սա կնշանակի, որ վերը նշված արժեքի բնույթը գործառնական վարձակալության ծախսից կփոխվի մաշվածության և տոկոսային ծախսի:
- կանխորոշել է, որ ընթացիկ ֆինանսական վարձակալությունը էական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա,

Ընկերությունը նախատեսում է ներդնել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից սկսած՝ կիրառելով ստանդարտի նորացված հետադարձ մոտեցումը: Ըստ այս մոտեցման՝ ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման համապարփակ ազդեցությունը ճանաչվում է որպես սեփական կապիտալի ճշգրտում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ: Համեմատական տեղեկատվություն չի ներկայացվում:

Այս անցումային մոտեցման ընտրությունը հանգեցնում է քաղաքականության վերաբերյալ Ընկերության կողմից հետագա որոշումների կայացմանը, քանզի կան մի քանի այլ անցումային մեղմացումներ, որոնք կարող են կիրառվել: Դրանք վերաբերում են այն վարձակալություններին, որոնք նախկինում գործել են և կարող են կիրառվել վարձակալություն առ վարձակալություն հիմքով: Ընկերությունը ներկայում գնահատում է անցումային այս մյուս մեղմացումների կիրառման ազդեցությունը:

ՖՀՄՍ 16-ը էական փոփոխություններ չի կատարել վարձատուների հաշվառման գծով, և, հետևաբար, Ընկերությունը չի ակնկալում որևէ փոփոխություն այն վարձակալությունների դեպքում, երբ ինքը հանդես է գալիս որպես վարձատու:

Այլ ստանդարտներ

- ՖՀՄՄԿ 23 «Անորոշություն շահութահարկի մոտեցումների շուրջ» (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից),
- ՖՀՄՍ 9 (փոփոխություններ) «Ֆինանսական գործիքներ» - Կանխավճարների առանձնահատկությունները՝ բացասական փոխհատուցմամբ (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից),
- ՀՀՄՍ 19 (փոփոխություններ) «Աշխատակիցների հատուցումներե - Պլանի փոփոխություն, կրճատում կամ մարում (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից)
- 2015-2017թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-(ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից)

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Ե՛վ ՖՀՄՍ 9-ի, և՛ ՀՀՄՍ 39-ի համաձայն՝ տոկոսային եկամուտը հաշվառվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ամորտիզացված արժեքով չափվող բոլոր ֆինանսական գործիքների, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ինչպես նաև ՀՀՄՍ 39-ի համաձայն՝ մինչև մարման ժամկետը պահվող կամ վաճառքի համար մատչելի դասակարկգվող տոկոսակիր ֆինանսական ակտիվների տոկոսային եկամուտը նույնպես հաշվառվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքը ճշտությամբ զեղչում է գնահատված ապագա դրամական մուտքերը ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի կամ անհրաժեշտության դեպքում՝ ավելի կարճ ժամանակահատվածի ընթացքում, մինչև ֆինանսական ակտիվի զուտ հաշվեկշռային արժեք:

Արդյունավետ տոկոսադրույքը (և, հետեւաբար, ակտիվի ամորտիզացված արժեքը) հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ցանկացած զեղչ կամ հավելավճար, գանձումներ և ծախսեր, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են: Ընկերությունը

ճանաչում է տոկոսային եկամուտը՝ կիրառելով հատույցադրույքը, որը ներկայացնում է վարկի ակնկալվող գործողության ժամկետի նկատմամբ կայուն հատույցադրույքի լավագույն գնահատումը: Այսպիսով, այն ճանաչում է տարբեր փուլերում գանձվող պոտենցիալ տարբեր տոկոսադրույքների ազդեցությունը և գործիքի կյանքի ընթացքում այլ ազդեցությունները (ներառյալ կանխավճարները, տուգանքները և գանձումները):

Եթե ֆինանսական ակտիվի գծով դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ակնկալիքները վերանայվում են պարտքային ռիսկից չբխող պատճառներով, ապա հաշվեկշռում ճշգրտումը հաշվառվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի դրական կամ բացասական ճշգրտում տոկոսային եկամտի ավելացմամբ կամ նվազմամբ: Ճշգրտումը հետագայում ամորտիզացվում է տոկոսային և նմանատիպ եկամտի միջոցով շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս ծանոթագրություն 4.4.6-ում:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հինականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված

դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	483.75	484.10
ՀՀ դրամ/1 Եվրո	553.65	580.10

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և

պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում վարկային կազմակերպություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Ֆինանսական գործիքներ

4.4.1 Ճանաչում և սկզբնական չափում

Ընկերությունն սկզբնապես ճանաչում է վարկերը և փոխատվությունները, ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Ընկերության՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են դրանց ձեռքբերմանը կամ թողարկմանը:

4.4.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ- 2018թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Սկզբնական ճանաչման դեպքում ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Ընկերության ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Ընկերությունը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» կազմված է փողի ժամանակային արժեքի և պարտքային ռիսկի փոխհատուցումից, այլ ռիսկերի և ֆինանսական ակտիվի պահպանման հետ կապված ծախսերի փոխհատուցումից (օրինակ՝ իրացվելիության ռիսկ և վարչական ծախսեր), ինչպես նաև շահույթի մարժայից: Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Ընկերությունը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Գնահատման ժամանակ Ընկերությունը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման առանձնահատկությունները,
- վաղաժամկետ մարման և երկարաձգման հնարավորությունը,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Ընկերության պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի պահանջի իրավունքի ակտիվների պայմանավորվածություններ) և
- առանձնահատկությունները, որոնք փոխում են դրամի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Ընկերությունը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական ակտիվներ- մինչև 2018թ. հունվարի 1-ը գործող քաղաքականություն

Ընկերությունը դասակարգել է իր ֆինանսական ակտիվները հետևյալ դասերից մեկում.

- վարկեր և դեբիտորական պարտքեր,

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով:

4.4.3 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տես նաև ծանոթագրություն 4.4.4) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա տարածվող հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված փոխհատուցման գումարի տարբերությունը (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված ցանկացած կուտակված օգուտը կամ վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Գործարքներում, որոնցում Ընկերությունը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

4.4.4 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Ընկերությունը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են առոչինչ: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տես 4.4.3 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով:

2018թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տես 4.4.6 ծանոթագրություն), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Մինչև 2018թ. հունվարի 1-ը գործող քաղաքականություն

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվել են փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով և ակտիվը չի ապաճանաչվել, ապա ակտիվի արժեզրկումը չափվում է՝ օգտագործելով մինչև փոփոխությունը կիրառվող տոկոսադրույքը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմաններով հիմնավորված նոր ֆինանսական պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4.4.5 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն զտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Ընկերության առևտրային գործունեության ընթացքում:

4.4.6 Արժեզրկում

2018թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Ընկերությունը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով

Ընկերությունը հաշվարկում է ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ ցածր պարտքային ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

Ընկերությունը համարում է, որ պարտքային արժեթղթերը ունեն ցածր պարտքային ռիսկ այն դեպքում, երբ վեջինիս պարտքային ռիսկի վարկանիշը համապատասխանում է համընդհանուր ընդունված «ներդրումային» վարկանիշի սահմանմանը:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք պայմանավորված են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում տեղի ունեցող դեֆոլտ առաջացնող իրադարձություններով:

Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում դեֆոլտի բոլոր հնարավոր դեպքերի հետևանքով:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Ընկերությունը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է 28.1.2 ծանոթագրությունում:

Վերոնշյալի հիման վրա՝ Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և ձեռքբերված կամ ստեղծման պահին արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Ընկերությունը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Ընկերությունը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև

ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:

- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Ընկերությունը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Ձեռքբերված կամ ստեղծման պահին արժեզրկված խումբ - ձեռքբերված կամ ստեղծման պահին արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Ձեռքբերված կամ ստեղծված արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները դեֆոլտի հավանականության, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի, դեֆոլտի ժամանակ վնասի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

- Դեֆոլտի հավանականություն (PD): Այն տվյալ ժամանակահավածում դեֆոլտի հավանականության գնահատումն է: Դեֆոլտ կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակաշրջանի միայն որոշակի ժամանակահատվածում, եթե պարտականությունը նախկինում չի ապաճանաչվել և շարունակում է մնալ պորտֆելում:
- Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD): Այն ներկայացնում է դեֆոլտի ապագա ամսաթվի դրությամբ ռիսկի ենթարկված գումարի չափի գնահատումը՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ռիսկի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսագումարների մարումը՝ անկախ նրանից պայմանագրով նախատեսված է, թե ոչ, պարտավորության սպասվող օգտագործումը և չկատարված վճարումների հաշվեգրված տոկոսները:
- Վնասը դիֆոլտի ժամանակ (LGD): Այն արտահայտում է վնասի չափը, որը առաջանում է տվյալ ժամանակահատվածում վարկի դիֆոլտային կարգավիճակում: Այն հիմնված է պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն հույս ունի ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը: Որպես կանոն, այն արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի (EAD) նկատմամբ տոկոսով:

Դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարը և դեֆոլտի ժամանակ վնասը ավելի մանրամասն բացահայտվում են 28.1.2 ծանոթագրությունում:

Վերանայված ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանասական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տես՝ ծանոթ. 4.4.4), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանասկան ակտիվից ակնկալվող դրամական

միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ զեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- էմիտենտի կամ փոխառուի էական ֆինանսական դժվարություններ,
- պայմանագրային պայմանների խախտում, օրինակ՝ դեֆոլտ կամ վճարման ուշացում,
- վարկերի կամ փոխատվությունների պայմանների այնպիսի վերանայում, որը Ընկերությունն այլ պայմաններում չէր դիտարկի,
- փոխառուի հավանական սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմավորման հավանականություն,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Փոխառուի ֆինանսական դժվարությունների հետևանքով վերանայված վարկը սովորաբար դիտարկվում է որպես արժեզրկված, միայն եթե առկա չէ վկայություն, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքեր չստանալու ռիսկը էականորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- երկրի կարողությունը մուտք գործել կապիտալ շուկաներ նոր պարտքի թողարկման համար:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների (FVOCI) արժեզրկումից կորուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ այդ ակտիվների հաարժեքը հավասար է իրենց իրական արժեքին: Այնուամենայնիվ, արժեզրկումից կորուստները բացահայտվում և ճանաչվում են իրական արժեքի ճշգրտման պահուստում,

Դուրսգրում

Վարկերը և պարտքային գործիքները դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Ընկերությունը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի

աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Ընկերության պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

Մինչև 2018թ. հունվարի 1-ը գործող քաղաքականություն

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ (օրինակ՝ կապիտալի նորմատիվ, զուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա:

Ընկերությունը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են պարտքային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Ընկերությունը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները, հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Ընկերությանը, թե ոչ:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Ընկերության ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում պարտքային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական միջոցների հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով:

Ակտիվների խմբերի ապագա դրամական միջոցների հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են Ընկերության կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Ընկերությանը: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեզրկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

4.5 Դրամական միջոցներ

Դրամական միջոցները բաղկացած են ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից և այլ բանկերում հաշիվներից: Դրամական միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ըմկերությունն օգտագործում է բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերում տեղաբաշխված ֆիքսված ժամկետով ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Տրամադրված վարկեր

Վարկերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների

տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.8 Ներդրումային արժեթղթեր

2018թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ վնասում, նույն ձևով, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և վերադարձ
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Երբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթուղթը ապաճանաչվում է, նախկինում ակնկալվող պարտքային կորուստներում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

4.9 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն - Ընկերությունը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.10 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Համակարգիչներ	1-5	20-100
Գույք և գրասենյակային սարքավորումներ	5	20
Փոխադրամիջոցներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	1-5	20-100

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Ընկերություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.11 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից և արտոնագրերից:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 1-10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի և այլ ոչ նյութական ակտիվների ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.12 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների հաշիվները և թողարկված արժեթղթերը սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.13 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.14 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ

Այս պահուստը արտացոլում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

4.15 Սեգմենտների ներկայացում

Գործառնական սեգմենտը հանդիսանում է Ընկերության բիզնես գործառնությունների բաղկացուցիչ մասը, որոնցից այն կարող է վաստակել եկամուտ և կատարել ծախսեր, ներառյալ Ընկերության այլ որևէ բաղկացուցիչ մասի հետ կապված գործառնություններից եկամուտներն ու ծախսերը: Գործառնական սեգմենտները որոշելիս Ընկերության ղեկավարությունը տարանջատում է Ընկերության այն կոմպոնենտները, որոնք ներառված են ծառայությունների մատուցման մեջ (բիզնես սեգմենտ) և որի համար առկա է ֆինանսական տեղեկատվություն: Բոլոր գործառնական սեգմենտների գործառնական արդյունքները պարբերաբար վերանայվում են Խմբի գլխավոր գործադիր տնօրենի կողմից՝ սեգմենտին միջոցներ հատկացնելու որոշում կայացնելու համար և գնահատելու դրա կատարումը:

Ընկերության գործառնությունները տարանջատված չեն գործառնական սեգմենտների և հանդիսանում են մեկ ամբողջական բիզնես միավոր: Ընկերությունն իր հիմնական եկամուտը ստանում է ՀՀ-ում գրանցված ֆինանսական հաստատությունների հետ վերաֆինանսավորման գործարքներից:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Բիզնես մոդել և միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ

Ընկերությունը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տես 4.4.2 ծանոթագրությունը):

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տե՛ս ծանոթագրություն 25):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տե՛ս ծանոթագրություն 24):

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում կանխատեսվող տեղեկատվության ներառումը (տես 28.1.2 ծանոթագրություն), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տե՛ս ծանոթագրություն 4.4.6):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տե՛ս ծանոթագրություն 23:

Ընկերության ղեկավարությունը չի վերանայել իր նախորդ գնահատումները, այսինքն, չի ապաճանաչել հիմնական միջոցների հետ կապված նախկինում հաշվարկված հետաձգված հարկային պարտավորությունը և շարունակում է իր հարկային հաշվառումը ինչպես նախկինում:

6 Անցման բացահայտում

Ստորև նկարագրվում է ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և չբաշխված շահույթի վրա՝ ներառյալ ՀՀՄՍ 39-ի կրած պարտքային կորուստների հաշվարկների՝ ՖՀՄՍ 9-ի ակնկալվող պարտքային կորուստներով փոխարինման ազդեցությունը:

Հետևյալ աղյուսակում ներկայացվում են Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար ՀՀՄՍ 39-ի համաձայն չափման դասերը և ՖՀՄՍ 9-ի ներքո նոր չափման դասերը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ	Սկզբնական դասակարգում ՀՀՄՍ 39-ի համաձայն	Նոր դասակարգում ՖՀՄ 9-ի համաձայն	Սկզբնական հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն	Նոր հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեք	3,265,589	3,265,520
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեք	12,502,833	12,391,424
Տրամադրված վարկեր	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեք	42,323,821	42,311,727
Ընդամենը ֆինանսական ակտիվներ			58,092,243	57,968,671

Հազար ՀՀ դրամ	Սկզբնական դասակարգում ՀՀՄՍ 39-ի համաձայն	Նոր դասակարգում ՖՀՄ 9-ի համաձայն	Սկզբնական հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն	Նոր հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն
Ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	Ամորտիզացված արժեք	Ամորտիզացված արժեք	17,173,297	17,173,297
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	Ամորտիզացված արժեք	Ամորտիզացված արժեք	965,468	965,468
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Ամորտիզացված արժեք	Ամորտիզացված արժեք	8,078,916	8,078,916
Թողարկված պարտքային արժեթղթեր	Ամորտիզացված արժեք	Ամորտիզացված արժեք	4,751,824	4,751,824
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ			30,969,505	30,969,505

ՀՀՄՍ 39-ի համաձայն հաշվեկշռային արժեքների համադրումը ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված մնացորդների միջև ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերաչափում (ակնկալվող պարտքային կորուստներ)	Հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ			
Ամորտիզացված արժեք			
Դրամական միջոցներ			
Տարեվերջի մնացորդ	3,265,589		
Վերաչափում		(69)	
Տարեսկզբի մնացորդ			3,265,520
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ			
Տարեվերջի մնացորդ	12,502,833		
Վերաչափում		(111,409)	
Տարեսկզբի մնացորդ			12,391,424
Տրամադրված վարկեր			
Տարեվերջի մնացորդ	42,323,821		
Վերաչափում		(12,094)	
Տարեսկզբի մնացորդ			42,311,727
Ընդամենը ամորտիզացված արժեք	58,092,243	(123,572)	57,968,671

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերաչափում (ակնկալվող պարտքային կորուստներ)	Հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
Ֆինանսական պարտավորություններ			
Ամորտիզացված արժեք			
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	17,173,297	-	17,173,297
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	965,468	-	965,468
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	8,078,916	-	8,078,916
Թողարկված պարտքային արժեթղթեր	4,751,824	-	4,751,824
Ընդամենը ամորտիզացված արժեք	30,969,505	-	30,969,505

ՖՀՄՍ 9-ի անցման ազդեցությունը պահուստների և չբաշխված շահույթի վրա ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Պահուստներ և չբաշխված շահույթ
Չբաշխված շահույթ	
Տարեվերջի մնացորդ ՀՀՄՍ 39-ի համաձայն (2017թ. դեկտեմբերի 31)	5,789,796
ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում	(123,572)
Հետաձգված հարկ (ծանոթ. 11)	24,714
Տարեսկզբի մնացորդ ՖՀՄՍ 9-ի համաձայն (2018թ. հունվարի 1)	5,690,938
Ընդամենը սեփական կապիտալի փոփոխություններ ՖՀՄՍ 9-ի ներդրման հետևանքով	98,858

Հետևյալ աղյուսակը համադրում է.

- ՀՀՄՍ 39-ի համաձայն ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման վերջնական պահուստը և
- ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստների սկզբնական պահուստը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ	ՀՀՄՍ 39/ՀՀՄՍ 37-ի համաձայն վարկերի գծով կորուստների պահուստ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերաչափում	ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստներ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
Արժեզրկումից պահուստ			
ՀՀՄՍ 39-ի համաձայն վարկեր և դեբիտորական պարտքեր / ՖՀՄՍ 9-ի համաձայն ամորտիզացված արժեքով ֆինանսական ակտիվներ	-	123,572	123,572
Ընդամենը արժեզրկումից պահուստ	-	123,572	123,572

7 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Տրամադրված վարկեր	3,803,949	3,704,781
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,153,702	893,115
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	65,846	-
Այլ տոկոսային եկամուտներ	245	305
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	5,023,742	4,598,201
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	1,212,620	1,387,496
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	53,434	98,465
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	320,749	237,742
Թողարկված պարտքային արժեթղթեր	710,782	759,919
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	2,297,585	2,483,622

8 Արժեզրկման ծախս/(հակադարձում)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը 2018թ.	Ընդամենը 2017թ.
Դրամական միջոցներ	12	25	25	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13	43,650	43,650	-
Տրամադրված վարկեր	14	(399)	(399)	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	15	11,999	11,999	-
Ընդամենը արժեզրկման ծախս		55,275	55,275	-

9 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	140,527	132,544
Անձնակազմի ուսուցման ծախսեր	1,638	2,469
Անձնակազմի գծով այլ ծախսեր	4,199	4,309
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	146,364	139,322

10 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Ֆինանսական հաշտարար*	-	39,709
Որպես հարկային գործակալ վճարված հարկ շնորհների գծով	13,222	-
Վարձակալության գծով ծախսեր	21,206	22,742
Մաշվածության և ամորտիզացիայի գծով ծախսեր	8,774	10,031
Ծրագրերի սպասարկման ծախսեր	6,255	5,063
Կոմիսիոն և այլ ծախսեր	5,112	4,626
Գործուղման ծախսեր	2,794	3,125
Ապահովագրական ծախսեր	2,061	2,010
Կապի ծախսեր	2,400	2,084
Ներկայացուցչական ծախսեր	1,497	1,591
Այլ ծախսեր	8,207	10,246
Ընդամենը այլ ծախսեր	71,528	101,227

* Վարկային կազմակերպությունների մասին օրենքի փոփոխությունների արդյունքում Ընկերությունը Կենտրոնական բանկից պարզաբանում է ստացել Ֆինանսական համակարգի հաշտարարին վճարումների վերաբերյալ: Այս պարզաբանման համաձայն՝ 2018թ. հունվարի 1-ից վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից Ֆինանսական համակարգի հաշտարարին վճարումներ չեն իրականացվում:

11 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Ընթացիկ հարկի գծով ծախս	496,946	377,188
Հետաձգված հարկ	(311)	(1,235)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	496,635	375,953

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2017թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2018	Արդյունավետ դրույքաչափ (%)	2017	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	2,452,272	-	1,871,257	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	490,454	20	374,251	20
Չնվազեցվող ծախսեր	6,047	-	1,219	-
Արտարժույթի բացասական փոխարժեքային տարբերություն	134	-	483	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	496,635	20	375,953	20

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2017				31 դեկտեմբերի 2018		
	Զուտ մնացորդ	ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Զուտ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Այլ պարտավորություններ	2,890	-	476	-	3,366	3,366	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	5,615	-	807	-	6,422	6,422	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	333	-	82	-	415	415	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(2,340)	14	1,344	-	(982)	-	(982)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(25,006)	22,282	218	-	(2,506)	-	(2,506)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր-պարտքային գործիքներ	-	-	(4,309)	1,926	(2,383)	-	(2,383)
Տրամադրված վարկեր	(83,439)	2,418	1,685	-	(79,336)	-	(79,336)
Այլ ակտիվներ	(71)	-	8	-	(63)	-	(63)
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	(102,018)	24,714	311	1,926	(75,067)	10,203	(85,270)

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2016թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2017թ.
Այլ պարտավորություններ	2,845	45	2,890
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	5,615	5,615
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	333	333
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	2,845	5,993	8,838
Դրամական միջոցներ	(2,573)	233	(2,340)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(23,685)	(1,321)	(25,006)
Տրամադրված վարկեր	(79,738)	(3,701)	(83,439)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(49)	49	-
Այլ ակտիվներ	(53)	(18)	(71)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(106,098)	(4,758)	(110,856)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(103,253)	1,235	(102,018)

12 Դրամական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Բանկային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	5,569,416	2,095,386
Բանկային հաշիվներ այլ բանկերում	500,690	1,170,203
	6,070,106	3,265,589
Արժեզրկումից պահուստ	(94)	-
Ընդամենը դրամական միջոցներ	6,070,012	3,265,589

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցների 92%-ը կենտրոնացված է ՀՀ կենտրոնական բանկում (2017թ.՝ 64%):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2018	
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ		
2018թ. հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	69	69
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	25	25
Մնացորդը տարվա վերջի դրությամբ	94	94

13 Պահանջներ բանկերի նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ժամկետային ավանդներ ՀՀ բանկերում	16,759,121	12,502,833
	16,759,121	12,502,833
Արժեզրկումից պահուստ	(155,059)	-
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16,604,062	12,502,833

Ավանդները բանկերում ունեն 90 օր և ավել մարման ժամկետ, բայց կարճաժամկետ ավանդների մարման ժամկետները պարբերաբար վերանայվում են և երկարաձգվում:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ բանկերում ժամկետային ավանդներից 7,581,583 հազար դրամ գումարով (45%) մնացորդները կենտրոնացված են երկու բանկում (2017թ. մեկ բանկում՝ 4,641,732 հազար դրամ (37%)):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ բանկերում ժամկետային ավանդների արդյունավետ տոկոսադրույքը 8.1% (2017թ-ին՝ 7.3%):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամկետային ավանդներից 1,481,250 հազար դրամ գումարը գրավադրվել է Ընկերության կողմից՝ որպես պարտքային արժեթղթերի գծով երաշխիք (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,482,300 հազար դրամ) (Տես՝ ծանոթագրություն 21):

Այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ

	2018	
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		
2018թ. հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	111,409	111,409
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	43,650	43,650
Մնացորդը տարվա վերջի դրությամբ	155,059	155,059

14 Տրամադրված վարկեր

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2018թ.			31 դեկտեմբերի 2017թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
Վարկեր ՀՀ-ում գործող բանկերին	34,176,846	(8,521)	34,168,325	35,056,917	-	35,056,917
Վարկեր ՀՀ-ում գործող վարկային կազմակերպություններին	7,324,714	(3,171)	7,321,543	7,251,413	-	7,251,413
Վարկեր աշխատակիցներին	11,783	(3)	11,780	15,491	-	15,491
Ընդամենը	41,513,343	(11,695)	41,501,648	42,323,821	-	42,323,821

2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված վարկերի միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 9.5% (2017թ.՝ 9.5%):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 10,970,186 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 26%-ը) ընդհանուր գումարով՝ տրամադրված երկու վարկառուի (2017թ.՝ 11,231,113 հազար դրամ մեկ վարկառուին կամ համախառն վարկային պորտֆելի 27%-ը):

Տրամադրված վարկերը արժեզրկված կամ ժամկետանց չեն:

Տրամադրված վարկերը ապահովված են որակավորված հիփոթեքային ենթավարկերով, որոնք տրամադրվել են վերջնական հաճախորդներին բանկերի և ֆինանսական կազմակերպությունների կողմից: Այսպիսի վարկերի անվանական արժեքը 2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել էր 41,077,213 հազար դրամ (2017թ.՝ 41,891,038 հազար դրամ): Բանկերի և ֆինանսական կազմակերպությունների դեֆոլտի դեպքում՝ Ընկերությունն իրավունք ունի ձեռք բերելու այս վարկերի սեփականության իրավունքը:

Տրամադրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև:

Հազար ՀՀ դրամ		2018
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Վարկեր ՀՀ-ում գործող բանկերին		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	7,952	7,952
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	569	569
Մնացորդ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,521	8,521
Վարկեր ՀՀ-ում գործող վարկային կազմակերպություններին		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	4,139	4,139
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(968)	(968)
Մնացորդ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,171	3,171
Վարկեր աշխատակիցներին		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	3	3
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	-	-
Մնացորդ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3	3

Տնտեսական գործոնների հետագա վերլուծությունը ներկայացված է 28.1.2 ծանոթագրությունում:

Ինչպես նշված է 25 ծանոթագրությունում, 2018 և 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Վարկային պորտֆելի ժամկետային վերլուծությունը տես 27 ծանոթագրությունում:

Վարկային պորտֆելին ներհատուկ պարտքային, արժութային և տոկոսային ռիսկերը բացահայտվում են 28 ծանոթագրությունում: Կապակցված կողմերի մնացորդների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է 24 ծանոթագրությունում:

15 Ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր (պարտքային գործիքներ)	1,067,864	-
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	1,067,864	-

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2018	2017
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	11,999	11,999
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,999	11,999

Վերոնշյալ կորուստների գծով պահուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանզի իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների հաշվեկշռային արժեքը հենց իրենց իրական արժեքն է

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարման ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	
	%	Ժամկետ
Ոչ պետական պարտատոմսեր	5.4-5.6%	2019-2022

16 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային սարքավորումներ	Գույք և գրասենյակային սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	23,791	5,728	10,336	919	33,789	74,563
Ավելացում	1,824	440	-	60	1,704	4,028
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,615	6,168	10,336	979	35,493	78,591
Ավելացում	4,790	105	-	116	550	5,561
Օտարում	(42)	(126)	-	(47)	-	(215)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,363	6,147	10,336	1,048	36,043	83,937
Կուտակված մաշվածություն և ամորտիզացիա						
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	14,799	2,584	9,986	843	16,005	44,217
Տարվա ծախս	4,957	795	350	83	3,846	10,031
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,756	3,379	10,336	926	19,851	54,248
Տարվա ծախս	3,044	880	-	70	4,780	8,774
Օտարում	(42)	(126)	-	(47)	-	(215)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,758	4,133	10,336	949	24,631	62,807
Հաշվեկշիռային արժեք						
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,859	2,789	-	53	15,642	24,343
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,605	2,014	-	99	11,412	21,130

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկբնական արժեքը կազմում է 29,050 հազար դրամ (2017թ. 27,996 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցներ:

Պայմանագրային պարտավորություններ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել պայմանագրային պարտավորություններ կապիտալ ներդրումների գծով (2017թ.-ին՝ նույնպես):

17 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Կանխավճարված ծախսեր	27,170	35,253
Այլ ակտիվներ	106	53
Ընդամենը այլ ակտիվներ	27,276	35,306

18 Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
ՀՀ ԿԲ-ից ստացված վարկեր	14,753,423	13,905,933
ՀՀ բանկերից ստացված վարկեր	-	3,267,364
	14,753,423	17,173,297

ՀՀ կենտրոնական բանկից ներգրավված միջոցները ներկայացնում են «Հայաստանում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում – երրորդ և չորրորդ փուլերի» վարկային ծրագրերից, ինչպես նաև «Հայաստանում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում» վարկային ծրագրի ռեվոլվերային ֆոնդի ստացված վարկերը, որոնք իրականացվում են Ընկերության միջոցով: Այս վարկերի վերահսկողությունն ու վարչարարությունն իրականացվում է Գերմանահայկական Հիմնադրամի կողմից: Վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերին ներկայացվում են որոշակի պահանջներ, համաձայն գործող Գլխավոր վարկային պայմանագրի և Ընկերության Խորհրդի կողմից հաստատված Վերաֆինանսավորման կարգի: Վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ բանկերի նկատմամբ պարտավորությունների գծով արդյունավետ տոկոսադրույքները կազմում են 6.3-ից 11.3%:

ՀՀ ԿԲ-ից ստացված վարկերը 2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ապահովված են՝ 12,863,151 հազար դրամ համախառն արժեք ունեցող վարկերի գումարով (2017թ.՝ 11,896,215 հազար դրամ) (Տես՝ ծանոթագրություն 14): ՀՀ ԿԲ-ն Ընկերության դեֆոլտի դեպքում իրավունք ունի ձեռք բերել այս վարկերի նկատմամբ սեփականության իրավունք:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

ՀՀ բանկերի նկատմամբ պարտավորությունների դրամական հոսքերի համադրումը տես 29 ծանոթագրությունում:

19 Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ

ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները ներկայացնում են վարկեր՝ ստացված ՀՀ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում: Այս վարկերի վերահսկողությունն իրականացվում է Գերմանահայկական Հիմնադրամի կողմից: Վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերին ներկայացվում են որոշակի պահանջներ՝ համաձայն գործող Գլխավոր վարկային պայմանագրի և Ընկերության խորհրդի կողմից հաստատված վերաֆինանսավորման կարգի: Վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների գծով արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 7.21% (2017թ.՝ 7.12%):

ՀՀ կառավարությունից ստացված վարկերը 2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ապահովված են բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված՝ 580,842 հազար դրամ համախառն արժեքով, վարկերի գումարով (2017թ.՝ 1,097,326 հազար դրամ) (Տես՝ ծանոթագրություն 14): Ընկերության դեֆոլտի դեպքում ՀՀ ԿԲ-ն, գործելով ՀՀ կառավարության անունից՝ որպես գործակալ, իրավունք ունի ձեռք բերել այս վարկերի նկատմամբ սեփականության իրավունք: Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2017թ.՝ նույնպես):

ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների դրամական հոսքերի համադրումը տես 29 ծանոթագրությունում:

20 Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Ֆրանսիական Զարգացման Գործակալությունից ստացված վարկեր	5,187,927	5,933,982
Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկից ստացված վարկեր	2,002,678	2,002,678
Այլ պարտավորություններ	127,130	142,256
Ընդամենը պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,317,735	8,078,916

2013թ. դեկտեմբերի 17-ին Ընկերությունը 13,767 հազար ԱՄՆ դոլար գումարով վարկային գծի համաձայնագիր է կնքել Ֆրանսիական Զարգացման Գործակալության հետ միկրոբնակարանային և էներգաարդյունավետության վերանորոգման վարկերի համար: Վարկի մարման ժամետը սահմանվել է 12 տարի՝ մինչև 2025թ-ի դեկտեմբերի 17-ը՝ 3 տարի արտոնյալ մարման ժամկետով:

Ֆրանսիական Զարգացման Գործակալությունից ստացված վարկը ունի ֆիքսված տոկոսադրույք:

2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆրանսիական Զարգացման Գործակալության նկատմամբ պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը ԱՄՆ դոլարով փոխառությունների համար կազմում է 2.0% (2017թ.՝ 2.0%):

Այլ պարտավորությունները ներկայացնում են դրամաշնորհներ (բոնուսային)՝ տրամադրված համապատասխան էներգետիկ ներդրումների համար ցածրից միջին եկամուտ ունեցող տնային տնտեսությունների՝ հատկապես գյուղական և երկրորդային քաղաքների (Երևան քաղաքի կենտրոնը բացառելով), վերանորոգման աշխատանքների և էներգաարդյունավետությունը

բարձրացնելու վարկային ծրագրի զարգացման նպատակով՝ վարկերի մասնակի փոխհատուցում տրամադրելով:

Դրամաշնորհների շարժը հետևյալն է.

	31 դեկտեմբերի 2018թ.		31 դեկտեմբերի 2017թ.	
	Հազար դրամ	Հազար Եվրո	Հազար դրամ	Հազար Եվրո
Հունվարի 1-ին	142,256	279	147,214	288
Տարվա ընթացքում փոխհատուցված	(23,121)	(40)	(16,925)	(31)
Հետվճարված եկամտային հարկ	13,993	24		
Որպես հարկային գործակալ վճարված հարկ	-	-	(5,654)	(10)
Փոխարժեքային տարբերություններ	(5,998)	(11)	17,621	32
Դեկտեմբերի 31-ին	127,130	252	142,256	279

2017թ. հունիսի 28-ին Ընկերությունը 2,000,000 հազար ՀՀ դրամ գումարով վարկային համաձայնագիր է կնքել Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի հետ: Վարկի մարման ժամետը սահմանվել է 36 ամիս՝ մինչև 2020թ-ի հունիսի 27-ը:

Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկից ստացված վարկը ունի ֆիքսված տոկոսադրույք, որը ստացվում է արժեկտրոնի տոկոսադրույքին գումարելով 1.58%՝ տրամադրման օրվանից մինչև վերջնական մարումը:

2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի նկատմամբ պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը ՀՀ դրամով փոխառությունների համար կազմում է 10.29% (2017թ.՝ 10.29%):

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2017թ.՝ նույնպես):

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների դրամական հոսքերի համադրումը տես 26 ծանոթագրությունում:

21 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Արժեկտրոնային պարտատոմսեր	7,838,688	4,751,824
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	7,838,688	4,751,824

7,710,600 հազար դրամ գումարի չափով անվանական արժեքով պարտատոմսերը ցուցակված են ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայում:

2018 թ-ի ընթացքում Ընկերությունը թողարկել և ամբողջությամբ տեղաբաշխել է 3,000,000,000 հազար դրամ անվանական արժեքով արժեկտրոնային պարտատոմսեր մինչև 2021 փետրվար մարման ժամկետով

2017թ-ի ընթացքում Ընկերությունը ամբողջությամբ մարել է զեղչատոկոսային պարտատոմսեր 2,137,300 հազար դրամ անվանական արժեքով և արժեկտրոնային պարտատոմսեր 2,000,000 հազար դրամ անվանական արժեքով:

2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից թողարկված պարտքային արժեթղթերի գծով տարեկան արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 8.1%-11.8% (2017թ.՝ 10.4%-11.8%):

Թողարկված պարտքային արժեթղթերն 2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ապահովված են՝ 1,481,250 հազար դրամ գումարի հաշվեկշռային արժեքով, ՀՀ բանկերում տեղաբաշխված Ժամկետային ավանդներով (2017թ.՝ 1,482,300 հազար դրամ) (Տես ծանոթագրություններ 13):

Տարվա ընթացքում Ընկերությունը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ (2017թ-ին՝ նույնպես):

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2017թ.՝ նույնպես):

Թողարկված պարտքային արժեթղթերի նկատմամբ պարտավորությունների դրամական հոսքերի համադրումը տես 29 ծանոթագրությունում:

22 Սեփական կապիտալ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 26,902,988 հազար դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 2,631,099 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,225 դրամ անվանական արժեքով:

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության 100% բաժնետեր հանդիսանում է ՀՀ կենտրոնական բանկը:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերը ունի մեկ ձայնի իրավունք Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում, և իրավունք ունի ստանալու շահաբաժին:

2018թ. ընթացքում Ընկերությունը ավելացրել է բաժնետիրական կապիտալը 6,000,020 հազար դրամ գումարով (2017-ին՝ 6,000,010 հազար դրամ):

Ընկերության բաժնետիրական կապիտալի ավելացումը իրականացվել է բաժնետերերի կողմից ՀՀ դրամով և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժին և բաշխել շահույթը ՀՀ դրամով:

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Ընկերության կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն 5%-ի չափով:

23 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի

փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության նկատմամբ չի եղել որևէ դատական հայց: Հետևաբար Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր տարածքներ վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Մինչև 1 տարի	10,606	10,606
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	10,606	10,606

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Ընկերությունը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Ընկերությունը ներկայում չունի ապահովագրական ծածկույթ՝ կապված առաջացող սխալների կամ բացթողումների պարտավորությունների հետ:

24 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները, ՀՀ կառավարությունը:

Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկը:

Կապակցված կողմերի հետ գործարքները ներառում են Ընկերության ընթացիկ հաշվի վարումը, ստացված վարկերը և այլն: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2018		2017	
	Բաժնետեր	Ղեկավար անձնակազմ	Բաժնետեր	Ղեկավար անձնակազմ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Դրամական միջոցներ				
Հաշիվներ ՀՀ ԿԲ-ում				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	2,095,386	-	4,178,661	-
Տարվա ընթացքում ավելացում	34,148,174	-	24,524,524	-
Տարվա ընթացքում նվազում	(30,674,144)	-	(26,607,799)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,569,416	-	2,095,386	-
Դրամական միջոցների արժեզրկումից պահուստ	(73)	-	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ	5,569,343	-	2,095,386	-
Տրամադրված վարկեր				
Վարկեր աշխատակիցներին				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	-	9,385	-	8,334
Տարվա ընթացքում աճ	-	145	-	14,054
Տարվա ընթացքում նվազում	-	(4,262)	-	(13,003)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամ	-	5,268	-	9,385
Վարկերի արժեզրկումից պահուստ	-	(1)	-	-
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ	-	5,267	-	9,385
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ				
ՀՀ ԿԲ-ից ստացված վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	13,905,933	-	13,129,512	-
Տարվա ընթացքում աճ	6,454,613	-	5,796,145	-
Տարվա ընթացքում նվազում	(5,607,123)	-	(5,019,724)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,753,423	-	13,905,933	-

Հազար ՀՀ դրամ	2018		2017	
	Բաժնետեր	Ղեկավար անձնակազմ	Բաժնետեր	Ղեկավար անձնակազմ
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	965,468	-	1,609,773	-
Տարվա ընթացքում աճ	106,921	-	197,007	-
Տարվա ընթացքում նվազում	(750,525)	-	(841,312)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	321,864	-	965,468	-
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Արժեզրկման կորուստ	(46)	-	-	-
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	-	145	-	193
Տոկոսային ծախսեր ՀՀ ԿԲ-ից ստացված վարկերի գծով	(1,143,776)	-	(1,074,288)	-
Տոկոսային ծախսեր ՀՀ կառավարությունից ստացված վարկերի գծով	(53,434)	-	(98,465)	-

Տնօրեններին և ղեկավար անձնակազմի այլ անդամներին տարվա ընթացքում տրամադրված 145 հազար դրամի (2017թ.՝ 14,054 հազար դրամ՝ ամսական կտրվածքով՝ 3 տարվա ընթացքում) վարկերը վճարվել են տարվա ընթացքում:

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	64,585	71,506
Այլ փոխհատուցումներ	1,281	1,334
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	65,866	72,840

25 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

25.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ					31 դեկտեմբերի 2018թ.
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ	-	6,070,012	-	6,070,012	6,070,012
Պահանջներ բանկերի նկատմամբ	-	16,604,062	-	16,604,062	16,604,062
Տրամադրված վարկեր	-	41,500,544	-	41,500,544	41,501,648
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	-	14,753,423	-	14,753,423	14,753,423
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	321,864	-	321,864	321,864
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	7,317,735	-	7,317,735	7,317,735
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	8,006,693	-	8,006,693	7,838,688
Այլ պարտավորություններ	-	18,708	-	18,708	18,708

Հազար ՀՀ դրամ					31 դեկտեմբերի 2017թ.
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ	-	3,265,589	-	3,265,589	3,265,589
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	12,502,833	-	12,502,833	12,502,833
Տրամադրված վարկեր	-	42,321,500	-	42,321,500	42,323,821

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2017թ.	
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	-	17,173,297	-	17,173,297	17,173,297
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	965,468	-	965,468	965,468
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	8,078,916	-	8,078,916	8,078,916
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	5,018,022	-	5,018,022	4,751,824
Այլ պարտավորություններ	-	17,368	-	17,368	17,368

Պահանջներ և պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Տրամադրված վարկեր

Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով:

Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի, ՀՀ Կառավարության և միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

ՀՀ ԿԲ-ի, ՀՀ Կառավարության և միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկերի և փոխառությունների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքները, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքին:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերի գնահատված իրական արժեքը սահմանվում է՝ ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

25.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չավող ներդրումային արժեթղթեր	1,067,864	-	-	1,067,864
Ընդամենը	1,067,864	-	-	1,067,864

Գնանշվող ներդրումներ

Բոլոր ցուցակված պարտատոմսերը թողարկվել են Հայաստանում հրապարակայնորեն գնանշվող ընկերությունների կողմից:

26 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ֆինանսական գործիքներով իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

2018 և 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ Ընկերությունը չունի ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ, որոնք ներկայացված են զուտ արժեքով կամ կհաշվանցվեն համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի:

27 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Ընկերության չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 25.3-ում:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա-հանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա-հանրագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ	6,070,012	-	6,070,012	-	-	-	6,070,012
Պահանջներ բանկերի նկատմամբ	1,372,913	8,678,228	10,051,141	6,552,921	-	6,552,921	16,604,062
Տրամադրված վարկեր	468,292	4,284,506	4,752,798	24,218,956	12,529,894	36,748,850	41,501,648
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չավող ներդրումային արժեթղթեր	8,496	1,058	9,554	1,058,310	-	1,058,310	1,067,864
	7,919,713	12,963,792	20,883,505	31,830,187	12,529,894	44,360,081	65,243,586

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա-հանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա-հանրագումար	Ընդամենը
							31 դեկտեմբերի 2018թ.
Պարտավորություններ							
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	-	3,534,606	3,534,606	8,126,754	3,092,063	11,218,817	14,753,423
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	321,864	321,864	-	-	-	321,864
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	126,994	750,884	877,878	4,959,905	1,479,952	6,439,857	7,317,735
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	128,088	128,088	7,710,600	-	7,710,600	7,838,688
Այլ պարտավորություններ	18,708	-	18,708	-	-	-	18,708
	145,702	4,735,442	4,881,144	20,797,259	4,572,015	25,369,274	30,250,418
Զուտ դիրք	7,774,011	8,228,350	16,002,361	11,032,928	7,957,879	18,990,807	34,993,168
Կուտակված ճեղքվածք	7,774,011	16,002,361		27,035,289	34,993,168		

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա-հանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա-հանրագումար	Ընդամենը
							31 դեկտեմբերի 2017թ.
Ակտիվներ							
Դրամական միջոցներ	3,265,589	-	3,265,589	-	-	-	3,265,589
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,698,692	2,919,750	7,618,442	4,884,391	-	4,884,391	12,502,833
Տրամադրված վարկեր	472,192	3,697,082	4,169,274	25,404,955	12,749,592	38,154,547	42,323,821
	8,436,473	6,616,832	15,053,305	30,289,346	12,749,592	43,038,938	58,092,243

Հազար ՀՀ դրամ

	Պահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա-հանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա-հանրագումար	Ընդամենը
Պարտավորություններ							
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	18,021	3,090,325	3,108,346	11,743,988	2,320,963	14,064,951	17,173,297
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	644,524	644,524	320,944	-	320,944	965,468
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	142,099	753,235	895,334	4,962,047	2,221,535	7,183,582	8,078,916
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	41,224	41,224	4,710,600	-	4,710,600	4,751,824
Այլ պարտավորություններ	17,368	-	17,368	-	-	-	17,368
	177,488	4,529,308	4,706,796	21,737,579	4,542,498	26,280,077	30,986,873
Զուտ Դիրք	8,258,985	2,087,524	10,346,509	8,551,767	8,207,094	16,758,861	27,105,370
Կուտակված ճեղքվածք	8,258,985	10,346,509		18,898,276	27,105,370		

28 Ռիսկի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Այդուհանդերձ, Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Ընկերության ռիսկի կառավարման քաղաքականության նպատակն է ախտորոշել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, և արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Ընկերությունը պարբերաբար վերանայում է ռիսկի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայում, ապրանքներում փոփոխություններն արտացոլելու և լավագույն փորձին հետևելու համար:

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Ընկերության Ղեկավարության կողմից՝ ըստ Ընկերության Խորհրդի հաստատած վարկային քաղաքականության և ներքին կանոնակարգերի: Ղեկավարությունը ախտորոշում, գնահատում և միջոցներ է ձեռնարկում զսպելու ֆինանսական ռիսկերը:

Կարևորագույն ռիսկերն են պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկը: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքների, տոկոսադրույքների և այլ գնային ռիսկերը:

28.1 Պարտքային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի
Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից

պարտավորության չկատարելու հետ, որը Ընկերությանը կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Ընկերության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկվում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Ընկերության ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են ավանդներ և այլ պարտքային գործիքներ: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ընկերության վարկերի հսկողության բաժնի կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Ընկերության Ղեկավարությանը:

Ընկերության ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

28.1.1 Վարկերի որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Ընկերության՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված պարտավորվածությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքային պայմանագրերի գումարները:

Հազար ՀՀ դրամ		2018	2017
Ներքին վարկանիշեր	Փուլ 1 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը	Ընդամենը
Դրամական միջոցներ			
Ստանդարտ	6,070,106	6,070,106	3,265,589
Համախառն հաշվեկշռային արժեք	6,070,106	6,070,106	3,265,589
Արժեզրկումից պահուստ	(94)	(94)	-
Զուտ հաշվեկշռային արժեք	6,070,012	6,070,012	3,265,589
Պահանջներ բանկերի նկատմամբ			
Ստանդարտ	16,759,121	16,759,121	12,502,833
Համախառն հաշվեկշռային արժեք	16,759,121	16,759,121	12,502,833
Արժեզրկումից պահուստ	(155,059)	(155,059)	-
Զուտ հաշվեկշռային արժեք	16,604,062	16,604,062	12,502,833
Տրամադրված վարկեր			
Ստանդարտ	41,513,343	41,513,343	42,323,821
Համախառն հաշվեկշռային արժեք	41,513,343	41,513,343	42,323,821
Արժեզրկումից պահուստ	(11,695)	(11,695)	-
Զուտ հաշվեկշռային արժեք	41,501,648	41,501,648	42,323,821
Ներդրումային արժեթղթեր			
Ստանդարտ	1,067,864	1,067,864	-
Հաշվեկշռային արժեք-իրական արժեք	1,067,864	1,067,864	-
Արժեզրկումից պահուստ	(11,999)	(11,999)	-

28.1.2 Արժեզրկման գնահատում

2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող քաղաքականություն

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Ընկերության՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցել հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տես 4.4.6 ծանոթագրությունը):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Ընկերությունը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Ընկերությունը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Ընկերությունը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների չափանիշներ

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները ներկայացված են հետևյալ պարագրաֆներում: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճ դիտարկվում է, երբ Moody's գործակալության վարկանիշը իջնում է երեք նիշով ներդրումային վարկանիշում, Ba1-ից B1 միջակայքում 2 նիշով (Moody's կամ համարժեք S&P և Fitch գործակալություններ) և մեկ նիշով B2-ից (Moody's կամ համարժեք S&P և Fitch գործակալություններ) սկսած միջակայքում:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ: 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին:

- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքի, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Ընկերության կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցէ մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Ընկերությունը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են դեֆոլտի ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված) գործոններով, որոնք մատնանշում են դեֆոլտի ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Դեֆոլտի սահմանում և «առողջացում»

Ընկերությունը համարում է ֆինանսական գործիքը դեֆոլտի ենթարկված, և, հետեւաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Ընկերությունը միջբանկային հաշիվները համարում է դեֆոլտի ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Ընկերություն նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Ընկերություն մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ դեֆոլտի ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուն համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն դեֆոլտում է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վարկային կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Ընկերության քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում դեֆոլտի սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ:

Դեֆոլտի հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի դեֆոլտ հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և պարտքային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Վերջինս հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Վնաս դեֆոլտի ժամանակ (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են դեֆոլտից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար դեֆոլտի ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում դեֆոլտի պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Ընկերության դեֆոլտների վերջին տվյալների վերլուծության վրա:

Կանխատեսվող տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է 4.4.6 ծանոթագրության գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Ընկերությունն օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Ընկերությունը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները: Ստորև բերված աղյուսակում նշվում են

ակնկալվող կորուստների առանցքային շարժառիթները և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ենթադրությունները:

Աղյուսակները ցույց են տալիս ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար յուրաքանչյուր տնտեսական սցենարում օգտագործվող կանխատեսվող առանցքային տնտեսական փոփոխականների արժեքները:

Առանցքային շարժառիթներ	Ակնկալվող պարտքային կորուստների սցենար	Վերագրված հավանակա-նություններ	2018
ՀՆԱ-ի աճ		%	%
	Լավատեսական	20	7.6
	Բազային տարբերակ	50	5.5
	Վատատեսական	30	3.3
Վարկ/ՀՆԱ ճեղքվածք$_{t-3}$			
	Լավատեսական	20	1.35
	Բազային տարբերակ	50	1.35
	Վատատեսական	30	1.35

Մինչև 2018թ. հունվարի 1-ը գործող արժեզրկման գնահատման քաղաքականությունը

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական միջոցների հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Ընկերությունը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

Ընկերությունը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխատվության համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական միջոցների հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ կրեդիտ քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի և փոխատվությունների գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական

իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գնահատմամբ վարկային պորտֆելը չունի անհատական կամ խմբային արժեզրկման որևէ հատկանիշներ: Հետևաբար, Ընկերությունը չի ստեղծել վարկերի գծով հնարավոր կորուստների պահուստ:

28.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պարտքային ռիսկերը ամբողջությամբ տեղաբաշխված են ՀՀ-ում:

Տնտեսության ճյուղեր

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պարտքային ռիսկի ենթարկվող ակտիվներն կենտրոնացված են ֆինանսական կազմակերպություններում:

28.1.4 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Ընկերությունը կարգավորում է պարտքային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի խախտել սահմանված թույլատրելի սահմանաչափերը:

Ընկերությունը իր պարտքային ռիսկը զսպելու նպատակով կարող է իր հետ համագործակցող հաստատությունների համար սահմանել վարկի տրամադրման առավելագույն սահմանաչափեր: Յուրաքանչյուր հաստատության համար կարող է սահմանվել առանձին սահմանաչափ: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Ընկերությունը կարող է սահմանել սահմանաչափեր նաև վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերի վրա ըստ դրանց տրամադրման տարածաշրջանի, վարկառուների առանձին խմբերի և այլ հատկանիշների:

Ընկերության կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի 90 և ավել օր ժամկետանց դառնալու դեպքում վարկառուն պարտավոր է այդ վարկի գումարի չափով մարել Ընկերության կողմից տրամադրված վարկի գումարը:

Ընկերությունը վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի նկատմամբ հսկողությունը իրականացնում է համագործակցող հաստատությունների կողմից յուրաքանչյուր ամիս ներկայացվող հաշվետվությունների հիման վրա, ինչպես նաև Ընկերության համապատասխան աշխատակցի տեղերում վարկերի ստուգման միջոցով:

Գրավ

Ընկերությունը կիրառում է բազմաթիվ միջոցներ պարտքային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց ապահովում վերցնելը: Ընկերությունը որպես վարկերի և փոխատվությունների համար ապահովման հիմնական միջոց բոլոր վարկառուների հետ կնքում է պահանջի իրավունքի զիջման (ցեսիայի) պայմանագիր, համաձայն որի Ընկերությունն իրավունք է ստանում հարկ եղած դեպքում օգտվել Ընկերության կողմից

վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի պայմանագրերից բխող վարկատուի և գրավառուի բոլոր իրավունքներից:

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից տրամադրված վարկերը ամբողջությամբ ապահովված են վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերով:

Պարտքային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն պարտքային ռիսկին, ինչ վարկերը:

28.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվեն այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Ընկերությունը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել առևտրային պորտֆել: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ:

28.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա: Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.		31 դեկտեմբերի 2017թ.	
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	+10	76,700	+10	70,763
ԱՄՆ դոլար	-10	(76,700)	-10	(70,763)

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.		
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ			
Դրամական միջոցներ	5,906,752	163,260	6,070,012
Պահանջներ բանկերի նկատմամբ	11,753,134	4,850,928	16,604,062
Տրամադրված վարկեր	41,501,648	-	41,501,648
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	1,067,864	1,067,864
	59,161,534	6,082,052	65,243,586
Պարտավորություններ			
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	14,753,423	-	14,753,423
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	321,864	-	321,864
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,002,678	5,315,057	7,317,735
Թողարկված պարտքային արժեթղթեր	7,838,688	-	7,838,688
Այլ պարտավորություններ	18,708	-	18,708
	24,935,361	5,315,057	30,250,418
Զուտ դիրք 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	34,226,173	766,996	34,993,168
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	51,308,379	6,783,864	58,092,243
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	24,910,639	6,076,234	30,986,873
Զուտ դիրք 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,397,740	707,630	27,105,370

Ազատ փոխարկելի արտարժույթը ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն:

28.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների:

Ստորև ներկայացվում է 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տես ծանոթագրություն 27-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	**1-12 ամիս**	**1 տարուց ավելի**	**Ընդամենը**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	-	4,551,877	13,672,921	18,224,798
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	331,715	-	331,715
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	1,039,422	6,826,631	7,866,053
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	5,382,788	3,373,500	8,756,288
Այլ պարտավորություններ	18,708	-	-	18,708
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	18,708	11,305,802	23,873,052	35,197,562

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2017թ.			
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	**1 - 12 ամիս**	**1 տարուց ավելի**	**Ընդամենը**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	29,560	4,403,244	17,483,308	21,916,112
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	697,037	331,715	1,028,752
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	142,256	1,055,573	7,870,079	9,067,908
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	536,284	5,133,660	5,669,944
Այլ պարտավորություններ	17,368	-	-	17,368
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	189,184	6,692,138	30,818,762	37,700,084

Ընկերությունը ներգրավել է էական գումարներով միջոցներ ՀՀ կառավարությունից և ՀՀ կենտրոնական բանկից: Նշված միջոցների ցանկացած էական վաղաժամկետ կամ չնախատեսված վերադարձ կարող է բացասաբար անդրադառնալ Ընկերության գործունեության վրա: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ ֆինանսավորման ներկայիս մակարդակը կպահպանվի տեսանելի ապագայում, և միջոցների վերադարձի դեպքում նա կտեղեկացվի նախապես, ինչը հնարավորություն կտա Ընկերությանը ժամանակին իրացնելու իր իրացվելի միջոցները և վերադարձնելու պարտքը:

28.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Ընկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է խորհուրդը, գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում:
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և կորուստների նվազեցման առաջարկվող գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշների մշակում և կիրառում:

Ընկերության ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է վերստուգողի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Վերստուգողի դիտարկումների արդյունքները քննարկվում են Ընկերության ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են խորհրդին:

29 Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքերի համադրում

Ընկերության ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ

	2018					
	Բաժնետիրական կապիտալ	Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	20,902,968	17,173,297	965,468	8,078,916	4,751,824	51,872,473
Դրամային հոսքերից	6,000,020	(2,401,159)	(641,888)	(763,527)	3,013,273	5,206,719
Վճարումներ	-	(6,568,014)	(641,888)	(763,527)	-	(7,973,429)
Ստացված գումար	6,000,020	4,166,855	-	-	3,013,273	13,180,148
Ոչ դրամային հոսքերից	-	(18,715)	(1,716)	2,346	73,591	55,506
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	-	-	-	(9,623)	-	(9,623)
Հետվճարված եկամտային հարկ	-	-	-	13,993	-	13,993
Այլ	-	(18,715)	(1,716)	(2,024)	73,591	51,136
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,902,988	14,753,423	321,864	7,317,735	7,838,688	57,134,698

Հազար ՀՀ դրամ

	2018					
	Բաժնետիրական կապիտալ	Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	18,902,958	16,393,690	1,609,773	6,820,733	8,788,038	52,515,192
Դրամային հոսքերից	2,000,010	466,399	(644,305)	1,235,387	(4,036,214)	(978,723)
Վճարումներ	-	(3,181,004)	(742,770)	(994,216)	(4,782,360)	(9,700,350)
Ստացված գումար	2,000,010	3,647,403	98,465	2,229,603	746,146	8,721,627
Ոչ դրամային հոսքերից	-	313,208	-	22,796	-	336,004
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	-	313,208	-	22,796	-	336,004
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,902,968	17,173,297	965,468	8,078,916	4,751,824	51,872,473

30 Կապիտալի համարժեքություն

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Ընկերության կապիտալը վերահսկվում է օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Ընկերությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանցից փոխառություններ ներգրավելու նպատակով պարտատոմսերի թողարկում և հրապարակայինտեղաբաշխում իրականացնող վարկային կազմակերպությունների նկատմամբ ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանում է 12%, որը Ընկերության համար կիրառելի է դարձել 2011թ-ից, պարտատոմսերի թողարկման հետ կապված:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, գլխավոր պահուստ, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային ռիսկերի գնահատման:

2018 և 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների, կապիտալի համարժեքության նորմատիվի չափը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Աուդիտ չարված	
	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական կապիտալ	32,863,133	26,519,428
Ռիսկով կշռված ակտիվներ	31,114,739	29,336,277
Կապիտալի համարժեքության նորմատիվ	105.6%	90.4%

Ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

2011թ. սեպտեմբերից վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 4,000,000 հազար ՀՀ դրամ գումարով:

Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը որոշվում է տվյալ վարկային կազմակերպության նկատմամբ մեկ փոխառուի կողմից ունեցած բոլոր պարտավորությունների և նրա ընդհանուր կապիտալի հարաբերակցությամբ, որը Ընկերության համար սահմանված է ոչ ավել քան 30%:

2018 և 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Աուդիտ չարված 31 դեկտեմբերի 2018թ.	 31 դեկտեմբերի 2017թ.
Հիմնական կապիտալ	32,863,133	26,519,428
Մեկ փոխառուի գծով ռիսկի գումար	4,527,533	4,615,416
Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափ (N3)	13.8%	17.4%

Ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը պահպանել է մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը:

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2017թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 3

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 7

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 8

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 9

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 10

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի

ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

Վարկերի արժեզրկման գծով պահուստի ձևավորում (Տես՝ ծանոթագրություն 4.7, 5)

Վարկերի արժեզրկման գծով պահուստը հանդիսանում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել վարկերի արժեզրկման գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական արդյունքների վրա: Դատողությունները և ենթադրությունները կարող են վերաբերել արժեզրկման օբյեկտիվ հայտանիշերի գնահատմանը, վարկառուների ֆինանսական վիճակի, ակնկալվող դրամական հոսքերի, գրավների արժեքի և իրացման ժամկետների, ինչպես նաև կրած, սակայն դեռևս չբացահայտված վնասների գնահատմանը:

Մեր կողմից նաև կիրառվել են ընթացակարգեր ուղղված ֆինանսական հաշվետվություններում վարկային ռիսկին, արժեզրկման պահուստի ձևավորման ենթադրություններին և դատողություններին վերաբերող բացահայտումների գնահատմանը:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ

ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի

մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք մեր բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց ներկայացված հարցերից մենք առանձնացնում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտորի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հանրային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցերը չպետք է ներկայացվեն աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրանց ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրանց ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Անկախ աուդիտի առաջադրանքի պատասխանատուն հանդիսանում է Արմեն Հովհաննիսյանը:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Արմեն Հովհաննիսյան
Առաջադրանքի պատասխանատու

20 փետրվարի 2018թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	4,598,201	3,878,757
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(2,483,622)	(2,013,240)
Զուտ տոկոսային եկամուտներ		2,114,579	1,865,517
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ վնաս		(356)	(265)
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումից զուտ օգուտ/(վնաս)		(2,417)	618
Անձնակազմի գծով ծախսեր	7	(139,322)	(141,973)
Այլ ծախսեր	8	(101,227)	(88,913)
Շահույթ մինչև հարկումը		1,871,257	1,634,984
Շահութահարկի գծով ծախս	9	(375,953)	(327,979)
Տարվա շահույթ		1,495,304	1,307,005
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		1,495,304	1,307,005

12-ից 55 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ	10	3,265,589	5,465,005
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	11	12,502,833	11,842,793
Տրամադրված վարկեր	12	42,323,821	39,889,683
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	13	24,343	30,346
Այլ ակտիվներ	14	35,306	26,386
Ընդամենը՝ ակտիվներ		58,151,892	57,254,213
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	15	17,173,297	16,393,690
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	16	965,468	1,609,773
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	8,078,916	6,820,733
Թողարկված պարտքային արժեթղթեր	18	4,751,824	8,788,038
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		152,781	107,973
Հետաձգված հարկային պարտավորություն	9	102,018	103,253
Այլ պարտավորություններ		17,368	15,847
Ընդամենը՝ պարտավորություններ		31,241,672	33,839,307
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	19	20,902,968	18,902,958
Գլխավոր պահուստ		217,456	158,071
Չբաշխված շահույթ		5,789,796	4,353,877
Ընդամենը՝ սեփական կապիտալ		26,910,220	23,414,906
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		58,151,892	57,254,213

Ֆինանսական հաշվետվությունները՝ ներկայացված 7-ից 55 էջերում, հաստատվել են Ընկերության խորհրդի կողմից 2018թ. փետրվարի 20-ին, և ստորագրվել են Ընկերության գլխավոր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից:

Էդմոնդ Վարդումյան — Գործադիր տնօրեն

Մարիամ Ամիրյան — Գլխավոր հաշվապահի ժ/պ

12-ից 55 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2016թ. հունվար 1-ի դրությամբ	12,902,928	107,353	3,097,590	16,107,871
Բաժնետիրական կապիտալի ավելացում	6,000,030	-	-	6,000,030
Հատկացում պահուստին	-	50,718	(50,718)	-
Սեփականատերերի հետ գործարքներ	6,000,030	50,718	(50,718)	6,000,030
Տարվա շահույթ	-	-	1,307,005	1,307,005
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	1,307,005	1,307,005
Հաշվեկշիռը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,902,958	158,071	4,353,877	23,414,906
Բաժնետիրական կապիտալի ավելացում	2,000,010	-	-	2,000,010
Հատկացում պահուստին	-	59,385	(59,385)	-
Սեփականատերերի հետ գործարքներ	2,000,010	59,385	(59,385)	2,000,010
Տարվա շահույթ	-	-	1,495,304	1,495,304
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	1,495,304	1,495,304
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,902,968	217,456	5,789,796	26,910,220

12-ից 55 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	4,469,883	3,769,199
Վճարված տոկոսներ	(2,255,814)	(1,830,529)
Անձնակազմի և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(127,271)	(127,003)
Դրամական միջոցների հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	2,086,798	1,811,667
Ավելացում գործառնական ակտիվներում		
Ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	(567,875)	(7,978,797)
Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին	(2,399,409)	(5,820,881)
Այլ ակտիվներ	(108,820)	(81,860)
Նվազում գործառնական պարտավորություններում		
Այլ պարտավորություններ	(126,038)	(21,306)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	(1,115,344)	(12,091,177)
Վճարված շահութահարկ	(332,535)	(325,749)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	(1,447,879)	(12,416,926)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(4,028)	(7,571)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	(4,028)	(7,571)

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
ՀՀ բանկերից միջոցների ստացում	3,647,403	3,990,101
ՀՀ բանկերից ստացված միջոցների մարում	(2,874,239)	(2,824,940)
ՀՀ կառավարությունից ստացված միջոցների մարում	(641,888)	(641,888)
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված միջոցներ	1,240,414	5,089,123
Պարտքային արժեթղթերի թողարկումից մուտքեր	-	5,388,019
Պարտքային արժեթղթերի մարում	(4,137,300)	-
Բաժնետիրական կապիտալի թողարկումից մուտքեր	2,000,010	6,000,030
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	(765,600)	17,000,445
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(2,217,507)	4,575,948
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	18,091	4,231
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	5,465,005	884,826
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (ծանոթ. 10)	3,265,589	5,465,005

12-ից 55 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնվել է 2009թ. հունիսին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 2009թ. հունիսի 16-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից խորհրդի թիվ 182 Ա որոշմամբ, թիվ 26 գրանցման վկայականով:

Ընկերությունը ստեղծվել է ՀՀ հիփոթեքային շուկայի զարգացմանն օժանդակելու նպատակով, որն իրականացվում է բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց տրամադրված հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման միջոցով:

Ընկերության գրասենյակը գտնվում է Երևանում: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Հանրապետության 22, թիվ 7/1 տարածք:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության աշխատողների միջին թվաքանակը կազմել է 22 մարդ:

2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական ու տնտեսական բարեփոխումները, և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս բարփոխումներից, ինչպես նաև Եվրասիական Տնտեսական Միությունում զարգացումներից, որի հետ շարունակվում է ՀՀ տնտեսության ինտեգրումը:

Ընկերության ղեկավարությունը կարծում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին

համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Ընկերությունն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2017թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Ընկերությունն ավելի վաղ չէր ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որն ուժի մեջ էր մտել, բայց դեռ չէր կիրառվել: Չնայած ներքոհիշյալ ստանդարտներն ու փոփոխություններն առաջին անգամ կիրառվել են 2017թ-ին ՝ դրանք որևէ էական ազդեցություն չունեն Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Բացահայտման նախաձեռնություն (ՀՀՄՍ 7 փոփոխություններ)*
- *Հետաձգված հարկային ակտիվների ճանաչում չիրացված կորուստների համար (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*

2012-2014թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ տարբեր չափանիշներով (ՖՀՄՍ 12 փոփոխություններ)

3.5 Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

ՖՀՄՍ 9, Ֆինանսական գործիքներ (2014)

2014թ. հուլիսին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՍԽ) թողարկել է ՖՀՄՍ 9-ի («Ֆինանսական գործիքներ») վերջնական տարբերակը: ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ: Այն փոխարինում է *ՀՀՄՍ 39-ին («Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»)*

2017թ. հոկտեմբերին ՀՀՄՍԽ-ն թողարկել է Բացասական փոխհատուցմամբ կանխավճարի առանձնահատկությունները (ՖՀՄՍ 9 փոփոխություններ): Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2019թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ:

2014թ. հուլիսին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՍԽ) թողարկել է ՖՀՄՍ 9-ի («Ֆինանսական գործիքներ») վերջնական տարբերակը: ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ: Այն փոխարինում է *ՀՀՄՍ 39-ին («Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»)*:

2017թ. հոկտեմբերին ՀՀՄՍԽ-ն թողարկել է *«Բացասական փոխհատուցմամբ կանխավճարի առանձնահատկությունները»* (ՖՀՄՍ 9 փոփոխություններ): Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2019թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ:

Ընկերությունը կկիրառի 2014թ. հուլիսին թողարկված ՖՀՄՍ 9-ը սկզբնապես 2018թ. հունվարի 1-ին և նույն ամսաթվին կընդունի նաև 2017թ. հոկտեմբերին ՀՀՄՍԽ-ի թողարկած ՖՀՄՍ 9 փոփոխությունները:

Նոր ստանդարտի կիրառումը կարող է էական ազդեցություն ունենալ Ընկերության սեփական կապիտալի սկզբնական մնացորդի վրա 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Ընկերության գնահատումը դեռ նախնական է, քանի որ ոչ բոլոր անցումային աշխատանքներն են ավարտված: Մասնավորապես՝ Ընկերությունը դեռ չի ավարտել ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան հաշվապահական գործընթացների վերանայման և ներքին վերահսկողության փոփոխությունների աշխատանքները, ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկման մոդելների մշակումը և ամփոփումը, ինչպես նաև կարող են փոփոխվել նոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, կիրառված ենթադրությունները, դատողությունները և գնահատման մեթոդները մինչև Ընկերությունը կամփոփի իր առաջին ֆինանսական հաշվետվությունները, որոնք կներառեն սկզբնական կիրառման ամսաթիվը:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգում

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր մոտեցում, որը արտացոլում է այդ ակտիվների կառավարման համար օգտագործվող բիզնես մոդելը և դրանց հետ կապված դրամական միջոցների հոսքերի առանձնահատկությունները:

ՖՀՄՍ 9-ը ֆինանսական ակտիվների համար ներառում է երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ

համապարփակ եկամտի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ընկերությունը, բաժնային գործիքների համար, որոնք չեն պահվում առևտրային նպատակներով, սկզբնական ճանաչման պահին կարող է կատարել իրականան արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) չափելու անհակադարձելի ընտրություն: Այս ընտրությունը յուրաքանչյուր ներդրման համար կատարվում է առանձին:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվները դասակարգվում են վերը նշված դասերից մեկում: ՖՀՄՍ 9-ի կիրառմամբ դադարեցվում են ՀՀՄՍ 39-ով սահմանվող՝ մինչև մարման ժամկետը պահվող, վարկեր և դեբիտորական պարտքեր, վաճառքի համար մատչելի և իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների դասակարգումները:

ՖՀՄՍ 9-ը կանդրադառնա 01 հունվարի 2018թ-ի դրությամբ պահվող ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա հետևյալ կերպ.

- Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և առևտրային նպատակով պահվող ածանցյալ գործիքները, որոնք պահվում են ռիսկի կառավարման նպատակով և որոնք ՀՀՄՍ 39-ի համաձայն չափվում են իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով, համաձայն ՖՀՄՍ 9-ի նույնպես կչափվեն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- Բանկերին և հաճախորդներին տրված վարկերը, որոնք ՀՀՄՍ 39-ի համաձայն դասակարգված են որպես վարկեր և դեբիտորական պարտքեր և չափվում են ամորտիզացված արժեքով, համաձայն ՖՀՄՍ 9-ի ընդհանուր առմամբ նույնպես կչափվեն ամորտիզացված արժեքով,

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ դասակարգման և չափման գնահատումը պարտադիր չէ, որ կներկայացնի ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա այնպես, ինչպես կլինի 2018թ-ի հունվարի 1-ին, քանի որ ՖՀՄՍ 9-ը պահանջում է, որ բիզնես մոդելի գնահատումը կատարվի սկզբնական կիրառման օրվա դրությամբ գոյություն ունեցող փաստերի և հանգամանքների հիման վրա, որը Ընկերության համար հանդիսանալու է 2018թ-ի հունվարի 1-ը:

ՖՀՄՍ 9-ը հիմնականում պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման համար ՀՀՄՍ 39-ի ներկա պահանջները:

Այնուամենայնիվ, համաձայն ՀՀՄՍ 39-ի ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի բոլոր փոփոխությունները սահմանված իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով (FVTPL-ով)՝ ճանաչվում են շահույթ և վնասում, մինչդեռ ՖՀՄՍ 9-ի համաձայն իրական արժեքի այդ փոփոխությունները հիմնականում կներկայացվեն հետևյալ կերպ.

- Պարտավորության սեփական վարկային ռիսկին վերագրելի իրական արժեքի փոփոխության գումարը կներկայացվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (OCI), և
- իրական արժեքի փոփոխության մնացած գումարը կներկայացվի շահույթ և վնասում:

Ֆինանսական ակտիվների, վարկերի տրամադրման պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ի «կրած կորուստների» մոդելը՝ ապագայի վրա հիմնված «ակնկալվող պարտքային կորուստների» մոդելով: Նոր արժեզրկման մոդելի կիրառումը Ընկերությունից կպահանջի զգալի մասնագիտական դատողություններ, թե ինչպես են տնտեսական գործոնների փոփոխություններն ազդում հավանականությամբ կշռված ակնկալվող պարտքային կորուստների վրա:

Ընկերությունը ակնկալվող պարտքային կորուստների պահուստ կճանաչի ստորև նշված այն ֆինանսական գործիքների գծով, որոնք չեն հանդիսանում իրական արժեքով շահույթի և վնասի միջոցով հաշվառվող.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ,
- այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ,
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր,
- պայմանագրային ակտիվներ,
- վարկերի տրամադրման պարտավորվածություններ,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր:

ՖՀՄՍ 9-ի համաձայն բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջները բարդ են և կպահանջեն ղեկավարության դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, հատկապես հետևյալ ոլորտներում.

- գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էական է աճել,
- ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մեջ կանխատեսվող մակրոտնտեսական տեղեկատվության ընդգրկում,
- դեֆոլտի սահմանում:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հիմնական մուտքային տարրերն են հանդիսանալու հետևյալ փոփոխականները.

- դեֆոլտի հավանականություն (PD),
- դեֆոլտի դեպքում վնասի գործակից (LGD),
- դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD):

Ընկերությունը այս ցուցանիշները կստանա ներքին վիճակագրական մոդելներից և այլ պատմական տվյալներից, որոնք օգտագործվում են կարգավորող մոդելներում: Կանխատեսվող տեղեկատվությունը արտացոլեու համար՝ դրանք կճշգրտվեն:

ՖՀՄՍ 9-ի ուժի մեջ մտնելու հետ կապված Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա ամենաէական ազդեցությունն ակնկալվում է, որ կլինի արժեզրկման նոր պահանջների հետևանքով: ՖՀՄՍ 9-ի նոր արժեզրկման մոդելի կիրառումը կհանգեցնի ֆինանսական գործիքների համար արժեզրկումից կորուստների ավելացմանը և փոփոխականությանը: Արժեզրկման նոր պահանջները առավել մեծ ազդեցություն կունենան երկարաժամկետ չապահովված վարկային պրոդուկտների, ինչպիսիք են օվերդրաֆտներն ու վարկային քարտերը, կորուստների պահուստի վրա:

Անցումային դրույթներ

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները հիմնականում կկիրառվեն հետադարձ, բացառությամբ ստորև նշված դեպքերի.

- Ընկերությունը օգտվում է ընտրության առավելությունից, որը թույլ է տալիս չվերահաշվարկել նախորդ ժամանակաշրջանների համեմատական տվյալները ֆինանսական գործիքների դասակարգման և գնահատման (ներառյալ արժեզրկման)

փոփոխությունների առումով: ՖՀՄՍ 9-ի ընդունման արդյունքում առաջացող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերությունները հիմնականում ճանաչվելու են չբաշխված շահույթում և պահուստներում 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ:

- Հետևյալ գնահատումները պետք է կատարվեն այն փաստերի և հանգամանքների հիման վրա, որոնք առկա են սկզբնական կիրառման օրվանից.
  - այն բիզնես մոդելի որոշումը, որի շրջանակում պահվում է ֆինանսական ակտիվը:

Եթե պարտքային գործիքները 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեն ցածր վարկային ռիսկ, ապա Ընկերությունը որոշելու է, որ վարկային ռիսկը էական չի աճել սկզբնական ճանաչումից հետո:

ՖՀՄՍ 15, Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

ՖՀՄՍ 15-ը ներկայացնում է հասույթի ճանաչման նոր պահանջներ՝ փոխարինելով *ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր»,* և որոշ հասույթի հետ կապված մեկնաբանություններ: Նոր ստանդարտը սահմանում է հսկողության վրա հիմնված հասույթի ճանաչման մոդել և տրամադրում է հավելյալ ուղղորդում մանրամասնորեն չլուսաբանված տարբեր բնագավառներում գործող ՖՀՄՍ-ների ներքո, այդ թվում, թե պայմանավորվածությունների համար ինչպես հաշվառել բազմաթիվ կատարողական պարտավորությունները, փոփոխական գնագոյացումը, հաճախորդների փոխհատուցման իրավունքները, մատակարարների հետգնման տարբերակները և այլ ընդհանուր բարդություններ:

ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջաններում: Ընկերության ղեկավարությունը դեռ չի գնահատել ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 16, Վարձակալություն

ՖՀՄՍ 16-ը ներկայացնում է վարձակալության հաշվառման նոր պահանջներ և փոփոխություններ: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, որ վարձակալները պետք է հաշվառեն վարձակալությունները «հաշվապահական հաշվեկշռում»՝ ճանաչելով «օգտագործման իրավունքը» որպես ակտիվ և վարձակալության գծով համապատասխան պարտավորությունը:

Միևնույն ժամանակ ՖՀՄՍ 16-ը՝

- փոփոխում է վարձակալության սահմանումը,
- սահմանում է ակտիվի և պարտավորության հաշվառման պահանջներ, այդ թվում՝ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են ոչ-վարձակալական տարրերը, փոփոխվող վարձակալական վճարները և արտոնյալ (օպցիոն) ժամանակաշրջանները;
- ազատման հնարավորություն է տալիս կարճաժամկետ վարձակալությունների և ցածրարժեք ակտիվների համար,
- փոխում է «վաճառք հետադարձ վարձակալությամբ» պայմանավորվածությունների հաշվառումը,
- մեծապես պահպանում է ՀՀՄՍ 17-ի մոտեցումը՝ վարձատուների հաշվառման մասով;
- ներկայացնում է նոր բացահայտման պահանջներ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերության ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այլ ստանդարտներ

Հետևյալ փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները զգալի ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- 2014-2016թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-ՖՀՄՍ 1 և ՀՀՄՍ 28 փոփոխություններ (ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին)
- ՖՀՄՄԿ 22 «Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ» (ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին)
- ՖՀՄՄԿ 23 «Անորոշություն շահութահարկի մոտեցումների շուրջ» (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին)

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Ընկերության ֆինանսական հաշվետվություններում բոլոր ակտիվները, պարտավորությունները գործառնական արտարժույթով (Ընկերության ներկայացման արտարժույթ) կատարվող գործառնությունները փոխարկվում են ՀՀ դրամի:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	2017թ. դեկտեմբերի 31	2016թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	484.10	483.94
ՀՀ դրամ/1 Եվրո	580.10	512.20

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում վարկային կազմակերպություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Դրամական միջոցներ

Դրամական միջոցները բաղկացած են ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից և այլ բանկերում հաշիվներից: Դրամական միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.5 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.6 Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է միայն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Ընկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են՝ ըստ հետևյալ կատեգորիաների.

- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- վարկեր և դեբիտորական պարտքեր,

Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Ընկերության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Ֆիքսված մարման ժամկետով ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Ընկերությունը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Ընկերության կողմից իրականացվում է մարման ժամկետին ոչ մոտ ակտիվների էական գումարի վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով արժեզրկումից պահուստները:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Ընկերությունն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ (օրինակ՝ կապիտալի նորմատիվ, զուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա:

Ընկերությունը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի

միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Ընկերությունը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները, հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Ընկերությանը, թե ոչ:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Ընկերության ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական միջոցների հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով:

Ակտիվների խմբերի ապագա դրամական միջոցների հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են Ընկերության կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Ընկերությանը: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեզրկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

4.8 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Ընկերությունը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում է Ընկերության շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Ընկերության կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրս գրված վաճառքի և/կամ գնման օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Ընկերությունը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դուրսգրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.9 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն - Ընկերությունը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.10 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Համակարգիչներ	1	100
Գույք և գրասենյակային սարքավորումներ	5	20
Փոխադրամիջոցներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	1-5	20-100

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Ընկերություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.11 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից և արտոնագրերից:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 1-10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի և այլ ոչ նյութական ակտիվների ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.12 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված վարկերը, ինչպես նաև առևտրային բանկերից, միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրաված վարկերը և թողարկված պարտատոմսերը, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.13 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.14 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

4.15 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին հանդիսանում է Ընկերության առևտրային գործունեությունը:

4.16 Սեգմենտների ներկայացում

Ընկերության գործառնությունները կազմում են մեկ գործարար սեգմենտ: Ընկերությունը իր հիմնական շահույթը ստանում է միայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված ֆինանսական կազմակերպությունների հետ իրականացվող վերաֆինանսավորման գործարքներից:

Գործառնական սեգմենտները որոշելիս Ընկերության ղեկավարությունը տարանջատում է Ընկերության այն կոմպոնենտները, որոնք ներառված են ծառայությունների մատուցման մեջ (բիզնես սեգմենտ) և որի համար առկա է ֆինանսական տեղեկատվություն: Բոլոր գործառնական սեգմենտների գործառնական արդյունքները պարբերաբար վերանայվում են Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի կողմից՝ սեգմենտին միջոցներ հատկացնելու որոշում կայացնելու համար և գնահատելու դրա կատարումը:

Ընկերության գործառնությունները տարանջատված չեն գործառնական սեգմենտների և հանդիսանում են մեկ ամբողջական բիզնես միավոր: Ընկերությունն իր հիմնական եկամուտը ստանում է ՀՀ-ում գրանցված ֆինանսական հաստատությունների հետ վերաֆինանսավորման գործարքներից:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու

ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 22):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես՝ ծանոթագրություն 21):

Վարկերի և այլ փոխատվությունների արժեզրկում

Ընկերությունը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական միջոցների հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գնահատմամբ վարկային պորտֆելը չունի անհատական կամ խմբային արժեզրկման որևէ հատկանիշներ: Հետևաբար, Ընկերությունը չի ստեղծել վարկերի գծով հնարավոր կորուսների պահուստ:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես 20 ծանոթագրությունը:

Ընկերության ղեկավարությունը չի վերանայել իր նախորդ գնահատումները, այսինքն չի ապաճանաչել հիմնական միջոցների հետ կապված իր նախկինում գնահատված հետաձգված հարկային պարտավորությունը և շարունակում է կատարել իր հարկային հաշվառումը, ինչպես նախկինում:

6 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Տրամադրված վարկեր	3,704,781	3,374,782
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	893,115	503,594
Այլ տոկոսային եկամուտներ	305	381
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	4,598,201	3,878,757

Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	1,387,496	1,268,578
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	98,465	143,914
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	237,742	89,686
Թողարկված պարտքային արժեթղթեր	759,919	511,062
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	2,483,622	2,013,240

7 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	132,544	134,510
Անձնակազմի ուսուցման ծախսեր	2,469	3,107
Անձնակազմի գծով այլ ծախսեր	4,309	4,356
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	139,322	141,973

8 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Ֆինանսական հաշտարար	39,709	26,899
Վարձակալության գծով ծախսեր	22,742	21,238
Մաշվածության և ամորտիզացիայի գծով ծախսեր	10,031	11,823
Ծրագրերի սպասարկման ծախսեր	5,063	5,010
Կոմիսիոն և այլ ծախսեր	4,626	2,114
Գործուղման ծախսեր	3,125	6,635
Ապահովագրության ծախսեր	2,010	2,217
Կապի ծախսեր	2,084	2,236
Ներկայացուցչական ծախսեր	1,591	1,676
Այլ ծախսեր	10,246	9,065
Ընդամենը այլ ծախսեր	101,227	88,913

9 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Ընթացիկ հարկի գծով ծախս	377,188	299,205
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	-	25
Հետաձգված հարկ	(1,235)	28,749
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	375,953	327,979

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2016թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2017	Արդյունավետ դրույքաչափ (%)	2016	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	1,871,257		1,634,984	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	374,251	20	326,997	20
Չնվազեցվող ծախսեր	1,219	-	1,081	-
Արտարժույթի (դրական)/բացասական փոխարժեքային տարբերություն	483	-	(124)	-
Նախորդ տարվա ընթացիկ հարկին վերաբերող ճշգրտումներ	-	-	25	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	375,953	20	327,979	20

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ պարտավորություններ	2,845	45	2,890
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	5,615	5,615
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	333	333
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	2,845	5,993	8,838
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(26,258)	(1,088)	(27,346)
Տրամադրված վարկեր	(79,738)	(3,701)	(83,439)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(49)	49	-
Այլ ակտիվներ	(53)	(18)	(71)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(106,098)	(4,758)	(110,856)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(103,253)	1,235	(102,018)

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ պարտավորություններ	2,151	694	2,845
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	2,151	694	2,845
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(8,160)	(18,098)	(26,258)
Տրամադրված վարկեր	(68,250)	(11,488)	(79,738)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(189)	140	(49)
Այլ ակտիվներ	(56)	3	(53)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(76,655)	(29,443)	(106,098)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(74,504)	(28,749)	(103,253)

10 Դրամական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	2,095,386	4,178,661
Բանկային հաշիվներ այլ բանկերում	1,170,203	1,286,344
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,265,589	5,465,005

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցների 64% կենտրոնացված է ՀՀ կենտրոնական բանկում (2016թ.՝ 75%):

11 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ժամկետային ավանդներ ՀՀ բանկերում	12,502,833	11,842,793
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	12,502,833	11,842,793

Ավանդները ժամկետանց չեն:

Ավանդները բանկերում ունեն 90 օր և ավել մարման ժամկետ, բայց կարճաժամկետ ավանդների մարման ժամկետները պարբերաբար վերանայվում են և երկարաձգվում:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ բանկերում ժամկետային ավանդներից 4,641,732 հազար դրամ գումարով (37%) մնացորդները կենտրոնացված են երկու բանկում (2016թ. մեկ բանկում՝ 2,429,617 հազար դրամ (21%)):

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամկետային ավանդների արդյունավետ տոկոսադրույքը 7.3% (2016թ-ին՝ 7.3%):

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամկետային ավանդներից 1,452,300 հազար դրամ գումարը ներդրվել է Ընկերության կողմից՝ որպես պարտքային արժեթղթերի գծով երաշխիք (2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,451,820 հազար դրամ) (Տես՝ ծանոթագրություն 18):

12 Տրամադրված վարկեր

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր ՀՀ-ում գործող բանկերին	35,056,917	32,340,125
Վարկեր ՀՀ-ում գործող վարկային կազմակերպություններին	7,251,413	7,530,954
Վարկեր աշխատակիցներին	15,491	18,604
Ընդամենը տրամադրված վարկեր	42,323,821	39,889,683

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված վարկերի միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 9.5% (2016թ.՝ 9.5%):

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 11,231,113 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 27%-ը) ընդհանուր գումարով՝ տրամադրված երկու վարկառուի (2016թ.՝ 5,895,094 հազար դրամ մեկ վարկառուին կամ համախառն վարկային պորտֆելի 15%-ը):

Տրամադրված վարկերը արժեզրկված կամ ժամկետանց չեն:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրամադրված՝ 12,993,541 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վարկերը գրավադրված են որպես ապահովվածություն ԿԲ-ից և ՀՀ կառավարությունից ստացված փոխառությունների և թողարկված պարտատոմսերի (2016թ-ին 17,947,907 հազար դրամ) (Տես ծանոթագրություններ 15, 16 և 18) դիմաց:

Տրամադրված վարկերը ապահովված են որակավորված հիփոթեքային ենթավարկերով, որոնք տրամադրվել են վերջնական հաճախորդներին բանկերի և ֆինանսական կազմակերպությունների կողմից: Այսպիսի վարկերի անվանական արժեքը 2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել էր 41,891,038 հազար դրամ (2016թ.՝ 39,494,744 հազար դրամ): Բանկերի և ֆինանսական կազմակերպությունների դեֆոլտի դեպքում՝ Ընկերությունն իրավունք ունի ձեռք բերելու այս վարկերի սեփականության իրավունքը:

Ինչպես նշված է 22 ծանոթագրությունում, 2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Վարկային պորտֆելի ժամկետային վերլուծությունը տես 24 ծանոթագրությունում:

Վարկային պորտֆելին ներհատուկ պարտքային, արժութային, իրացվելիության և տոկոսային ռիսկը բացահայտված է 25 ծանոթագրությունում: Կապակցված կողմերի մնացորդների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է 21 ծանոթագրությունում:

13 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային սարքավորումներ	Գույք և գրասենյակային սարքավորումներ	Փոխադրա միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Համակարգ-չային ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	23,420	3,602	10,336	920	33,556	71,834
Ավելացում	4,892	2,325	-	42	233	7,492
Օտարում	(4,521)	(199)	-	(43)	-	(4,763)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,791	5,728	10,336	919	33,789	74,563
Ավելացում	1,824	440	-	60	1,704	4,028
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,615	6,168	10,336	979	35,493	78,591
Կուտակված մաշվածություն						
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	14,147	2,212	7,920	741	12,137	37,157
Տարվա ծախս	5,173	571	2,066	145	3,868	11,823
Օտարում	(4,521)	(199)	-	(43)	-	(4,763)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,799	2,584	9,986	843	16,005	44,217
Տարվա ծախս	4,957	795	350	83	3,846	10,031
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,756	3,379	10,336	926	19,851	54,248
Հաշվեկշիռային արժեք						
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,992	3,144	350	76	17,784	30,346
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,859	2,789	-	53	15,642	24,343

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկբնական արժեքը կազմում է 27,996 հազար դրամ (2016թ. 9,228 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցներ:

Պայմանագրային պարտավորություններ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել պայմանագրային պարտավորություններ կապիտալ ներդրումների գծով (2016թ.-ին՝ նույնպես):

14 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գալիք ժամանակաշրջանի ծախսեր	35,253	26,063
Այլ ակտիվներ	53	323
Ընդամենը այլ ակտիվներ	35,306	26,386

15 Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ ԿԲ-ից ստացված վարկեր	13,905,933	13,129,512
ՀՀ բանկերից ստացված վարկեր	3,267,364	3,264,178
	17,173,297	16,393,690

ՀՀ կենտրոնական բանկից ներգրավված միջոցները ներկայացնում են «Հայաստանում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում – երրորդ և չորրորդ փուլերի» վարկային ծրագրերից, ինչպես նաև «Հայաստանում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում» վարկային ծրագրի ռեվոլվերային ֆոնդի ստացված վարկերը, որոնք իրականացվում են Ընկերության միջոցով: Այս վարկերի վերահսկողությունն ու վարչարարությունն իրականացվում է Գերմանահայկական Հիմնադրամի կողմից: Վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերին ներկայացվում են որոշակի պահանջներ, համաձայն գործող Գլխավոր վարկային պայմանագրի և Ընկերության Խորհրդի կողմից հաստատված Վերաֆինանսավորման կարգի: Վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ բանկերի նկատմամբ պարտավորությունների գծով արդյունավետ տոկոսադրույքները կազմում են 6.3-ից 11.3% (2016թ.՝ 7.9-ից 11.3%):

ՀՀ ԿԲ-ից ստացված վարկերը 2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ապահովված են՝ 11,896,215 հազար դրամ համախառն արժեք ունեցող վարկերի գումարով (2016թ.՝ 10,923,694 հազար դրամ) (Տես՝ ծանոթագրություն 12): ՀՀ ԿԲ-ն Ընկերության դեֆոլտի դեպքում իրավունք ունի ձեռք բերել այս վարկերի նկատմամբ սեփականության իրավունք:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

ՀՀ բանկերի նկատմամբ պարտավորությունների դրամական հոսքերի համադրումը տես 26 ծանոթագրությունում:

16 Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ

ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները ներկայացնում են վարկեր՝ ստացված ՀՀ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում: Այս վարկերի վերահսկողությունն իրականացվում է Գերմանահայկական Հիմնադրամի կողմից: Վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերին ներկայացվում են որոշակի պահանջներ՝ համաձայն գործող Գլխավոր վարկային պայմանագրի և Ընկերության խորհրդի կողմից հաստատված վերաֆինանսավորման կարգի: Վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների գծով արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 7.12% (2016թ.՝ 7.12%):

ՀՀ կառավարությունից ստացված վարկերը 2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ապահովված են բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված՝ 1,097,326 հազար դրամ համախառն արժեքով, վարկերի գումարով (2016՝ 1,466,583 հազար դրամ) (Տես՝ ծանոթագրություն 12): Ընկերության դեֆոլտի դեպքում ՀՀ ԿԲ-ն, գործելով ՀՀ կառավարության անունից՝ որպես գործակալ, իրավունք ունի ձեռք բերել այս վարկերի նկատմամբ սեփականության իրավունք: Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2016թ.՝ նույնպես):

ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների դրամական հոսքերի համադրումը տես 26 ծանոթագրությունում:

17 Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆրանսիական Զարգացման Գործակալությունից ստացված վարկեր	5,933,982	6,673,519
Այլ պարտավորություններ	142,256	147,214
Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկից ստացված վարկեր	2,002,678	-
Ընդամենը պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	8,078,916	6,820,733

2013թ. դեկտեմբերի 17-ին Ընկերությունը 13,767 հազար ԱՄՆ դոլար գումարով վարկային գծի համաձայնագիր է կնքել Ֆրանսիական Զարգացման Գործակալության հետ միկրոբնակարանային և էներգաարդյունավետության վերանորոգման վարկերի համար: Վարկի մարման ժամետը սահմանվել է 12 տարի՝ մինչև 2025թ-ի դեկտեմբերի 17-ը՝ 3 տարի արտոնյալ մարման ժամկետով:

Ֆրանսիական Զարգացման Գործակալությունից ստացված վարկը ունի ֆիքսված տոկոսադրույք:

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆրանսիական Զարգացման Գործակալության նկատմամբ պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը ԱՄՆ դոլարով փոխառությունների համար կազմում է 2.0% (2016թ.՝ 2.0%):

Այլ պարտավորությունները ներկայացնում են դրամաշնորհներ (բոնուսային)՝ տրամադրված համապատասխան էներգետիկ ներդրումների համար ցածրից միջին եկամուտ ունեցող տնային տնտեսությունների՝ հատկապես գյուղական և երկրորդային քաղաքների (Երևան քաղաքի կենտրոնը բացառելով), վերանորոգման աշխատանքների և էներգաարդյունավետությունը բարձրացնելու վարկային ծրագրի զարգացման նպատակով՝ վարկերի մասնակի փոխհատուցում տրամադրելով:

Դրամաշնորհների շարժը հետևյալն է.

	2017		2016	
	Հազար դրամ	Հազար Եվրո	Հազար դրամ	Հազար Եվրո
Հունվարի 1-ին	147,214	288	180,292	341
Տարվա ընթացքում փոխհատուցված	(16,925)	(31)	(21,235)	(40)
Որպես հարկային գործակալ վճարված հարկ	(5,654)	(10)	(7,142)	(13)
Փոխարժեքային տարբերություններ	17,621	32	(4,701)	-
Դեկտեմբերի 31-ին	142,256	279	147,214	288

2017թ. հունիսի 28-ին Ընկերությունը 2,000,000 հազար ՀՀ դրամ գումարով վարկային համաձայնագիր է կնքել Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի հետ: Վարկի մարման ժամետը սահմանվել է 36 ամիս՝ մինչև 2020թ-ի հունիսի 27-ը:

Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկից ստացված վարկը ունի ֆիքսված տոկոսադրույք, որը ստացվում է արժեկտրոնի տոկոսադրույքին գումարելով 1.58%՝ տրամադրման օրվանից մինչև վերջնական մարումը:

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի նկատմամբ պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը ՀՀ դրամով փոխառությունների համար կազմում է 10.29%:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2016թ.՝ նույնպես):

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների դրամական հոսքերի համադրումը տես 26 ծանոթագրությունում:

18 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արժեկտրոնային պարտատոմսեր	4,751,824	6,751,977
Զեղչատոկոսային պարտատոմսեր	-	2,036,061
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	4,751,824	8,788,038

4,710,600 հազար դրամ գումարի չափով անվանական արժեքով պարտատոմսերը ցուցակված են ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա-ում:

2017թ-ի ընթացքում Ընկերությունը ամբողջությամբ մարել է զեղչատոկոսային պարտատոմսեր 2,137,300 հազար դրամ անվանական արժեքով և արժեկտրոնային պարտատոմսեր 2,000,000 հազար դրամ անվանական արժեքով:

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից թողարկված պարտքային արժեթղթերի գծով տարեկան արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 10.4%-11.8% (2016թ.՝ 9.8%-11.8%):

Թողարկված պարտքային արժեթղթերն 2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ապահովված են՝ 1,483,224 հազար դրամ գումարի հաշվեկշռային արժեքով, ՀՀ բանկերում տեղաբաշխված Ժամկետային ավանդներով (2016թ.՝ 1,482,436 հազար դրամ և 5,557,630 հազար դրամ հաշվեկշռային արժեքով տրամադրված վարկերով) (Տես ծանոթագրություններ 11 և 12):

Տարվա ընթացքում Ընկերությունը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ: (2016թ-ին՝ նույնպես):

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2016թ.՝ նույնպես):

Թողարկված պարտքային արժեթղթերի նկատմամբ պարտավորությունների դրամական հոսքերի համադրումը տես 26 ծանոթագրությունում:

19 Սեփական կապիտալ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 20,902,968 հազար դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 2,044,300 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,225 դրամ անվանական արժեքով:

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության 100% բաժնետեր հանդիսանում է ՀՀ կենտրոնական բանկը:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերը ունի մեկ ձայնի իրավունք Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում, և իրավունք ունի ստանալու շահաբաժին:

2017թ. ընթացքում Ընկերությունը ավելացրել է բաժնետիրական կապիտալը 2,000,010 հազար դրամ գումարով (2016-ին՝ 6,000,030 հազար դրամ):

Ընկերության բաժնետիրական կապիտալի ավելացումը իրականացվել է բաժնետերերի կողմից ՀՀ դրամով և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժին և բաշխել շահույթը ՀՀ դրամով:

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Ընկերության կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված

բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն 5%-ի չափով:

20 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության նկատմամբ չի եղել որևէ դատական հայց: Հետևաբար Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր տարածքներ վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	10,606	11,557
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	10,606	11,557

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Ընկերությունը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Ընկերությունը ներկայում չունի ապահովագրական ծածկույթ՝ կապված առաջացող սխալների կամ բացթողումների պարտավորությունների հետ:

21 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները, ՀՀ կառավարությունը:

Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկը:

Կապակցված կողմերի հետ գործարքները ներառում են Ընկերության ընթացիկ հաշվի վարումը, ստացված վարկերը և այլն: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2017		2016	
	Բաժնետեր	Ղեկավար անձնակազմ	Բաժնետեր	Ղեկավար անձնակազմ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Դրամական միջոցներ				
Հաշիվներ ՀՀ ԿԲ-ում				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	4,178,661		478,135	-
Տարվա ընթացքում ավելացում	24,524,524		34,817,440	-
Տարվա ընթացքում նվազում	(26,607,799)		(31,116,914)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,095,386		4,178,661	-
Տրամադրված վարկեր				
Վարկեր աշխատակիցներին				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	-	8,334	-	10,921
Տարվա ընթացքում աճ	-	14,054	-	7,519
Տարվա ընթացքում նվազում	-	(13,003)	-	(10,106)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	9,385	-	8,334

Հազար ՀՀ դրամ	2017		2016	
	Բաժնետեր	Ղեկավար անձնակազմ	Բաժնետեր	Ղեկավար անձնակազմ
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ ՀՀ ԿԲ-ից ստացված վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	13,129,512	-	15,217,307	-
Տարվա ընթացքում աճ	5,796,145	-	3,098,780	-
Տարվա ընթացքում նվազում	(5,019,724)	-	(5,186,577)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,905,933	-	13,129,512	-
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	1,609,773		2,253,561	-
Տարվա ընթացքում աճ	197,007		287,758	-
Տարվա ընթացքում նվազում	(841,312)		(931,546)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	965,468		1,609,773	-
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	-	193	-	204
Տոկոսային ծախսեր ՀՀ ԿԲ-ից ստացված վարկերի գծով	(1,074,288)	-	(1,178,657)	-
Տոկոսային ծախսեր ՀՀ կառավարությունից ստացված վարկերի գծով	(98,465)	-	(143,914)	-

Տնօրեններին և ղեկավար անձնակազմի այլ անդամներին տարվա ընթացքում տրամադրված 14,054 հազար դրամի (2016թ.՝ 7,519 հազար դրամ) վարկերը վճարման են ենթակա 3 տարվա ընթացքում:

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	71,506	54,010
Այլ փոխհատուցումներ	1,334	1,623
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	72,840	55,633

22 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

22.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ	-	3,265,589	-	3,265,589	3,265,589
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	12,502,833	-	12,502,833	12,502,833
Տրամադրված վարկեր	-	42,321,500	-	42,321,500	42,323,821
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	-	17,173,297	-	17,173,297	17,173,297
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	965,468	-	965,468	965,468
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	8,078,916	-	8,078,916	8,078,916
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	5,018,022	-	5,018,022	4,751,824
Այլ պարտավորություններ	-	17,368	-	17,368	17,368

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ	-	5,465,005	-	5,465,005	5,465,005
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	11,842,793	-	11,842,793	11,842,793
Տրամադրված վարկեր	-	39,887,111	-	39,887,111	39,889,683
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	-	16,393,690	-	16,393,690	16,393,690
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	1,609,773	-	1,609,773	1,609,773
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	6,820,733	-	6,820,733	6,820,733
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	9,119,567	-	9,119,567	8,788,038
Այլ պարտավորություններ	-	15,847	-	15,847	15,847

Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Տրամադրված վարկեր

Ֆիքսված տոկոսադրույքներով գործիքների գնահատված իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով:

Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի, ՀՀ Կառավարության և միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

ՀՀ ԿԲ-ի, ՀՀ Կառավարության և միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկերի և փոխառությունների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքները, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքին:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերի գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

23 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ֆինանսական գործիքներով իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ Ընկերությունը չունի ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ, որոնք ներկայացված են զուտ արժեքով կամ կհաշվանցվեն համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի:

24 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Ընկերության չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 25.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ	3,265,589	-	3,265,589	-	-	-	3,265,589
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,698,692	2,919,750	7,618,442	4,884,391	-	4,884,391	12,502,833
Տրամադրված վարկեր	472,192	3,697,082	4,169,274	25,404,955	12,749,592	38,154,547	42,323,821
	8,436,473	6,616,832	15,053,305	30,289,346	12,749,592	43,038,938	58,092,243

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար	Ընդամենը
Պարտավորություններ							
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	18,021	3,090,325	3,108,346	11,743,988	2,320,963	14,064,951	17,173,297
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	644,524	644,524	320,944	-	320,944	965,468
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	142,099	753,235	895,334	4,962,047	2,221,535	7,183,582	8,078,916
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	41,224	41,224	4,710,600	-	4,710,600	4,751,824
Այլ պարտավորություններ	17,368	-	17,368	-	-	-	17,368
	177,488	4,529,308	4,706,796	21,737,579	4,542,498	26,280,077	30,986,873
Զուտ Դիրք	8,258,985	2,087,524	10,346,509	8,551,767	8,207,094	16,758,861	27,105,370
Կուտակված ճեղքվածք	8,258,985	10,346,509		18,898,276	27,105,370		

Հազար ՀՀ դրամ

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ	5,465,005	-	5,465,005	-	-	-	5,465,005
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,334,923	5,058,170	9,393,093	2,449,700	-	2,449,700	11,842,793
Տրամադրված վարկեր	1,096,302	2,579,494	3,675,796	23,873,421	12,340,466	36,213,887	39,889,683
	10,896,230	7,637,664	18,533,894	26,323,121	12,340,466	38,663,587	57,197,481

Հազար ՀՀ դրամ

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար	Ընդամենը
Պարտավորություններ							
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	2,317,872	2,691,657	5,009,529	9,428,084	1,956,077	11,384,161	16,393,690
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	646,504	646,504	963,269	-	963,269	1,609,773
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	147,214	751,122	898,336	2,961,068	2,961,329	5,922,397	6,820,733
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	4,118,726	4,118,726	4,669,312	-	4,669,312	8,788,038
Այլ պարտավորություններ	15,847	-	15,847	-	-	-	15,847
	2,480,933	8,208,009	10,688,942	18,021,733	4,917,406	22,939,139	33,628,081
Զուտ Դիրք	8,415,297	(570,345)	7,844,952	8,301,388	7,423,060	15,724,448	23,569,400
Կուտակված ճեղքվածք	8,415,297	7,844,952		16,146,340	23,569,400		

25 Ռիսկի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Այդուհանդերձ, Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Ընկերության ռիսկի կառավարման քաղաքականության նպատակն է ախտորոշել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, և արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Ընկերությունը պարբերաբար վերանայում է ռիսկի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայում, ապրանքներում փոփոխություններն արտացոլելու և լավագույն փորձին հետևելու համար:

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Ընկերության Ղեկավարության կողմից՝ ըստ Ընկերության Խորհրդի հաստատած վարկային քաղաքականության և ներքին կանոնակարգերի: Ղեկավարությունը ախտորոշում, գնահատում և միջոցներ է ձեռնարկում զսպելու ֆինանսական ռիսկերը:

Կարևորագույն ռիսկերն են պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկը: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքների, տոկոսադրույքների և այլ գնային ռիսկերը:

25.1 Պարտքային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Ընկերությանը կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Ընկերության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկվում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Ընկերության ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են ավանդներ և այլ պարտքային գործիքներ: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ընկերության վարկերի հսկողության բաժնի կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Ընկերության Ղեկավարությանը:
Ընկերության ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

25.1.1 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պարտքային ռիսկերը ամբողջությամբ կենտրոնացված են ՀՀ-ում:

Տնտեսության ճյուղեր

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պարտքային ռիսկերը ամբողջությամբ կենտրոնացված են Ֆինանսական կազմակերպություններում:

25.1.2 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Ընկերությունը կարգավորում է պարտքային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի խախտել սահմանված թույլատրելի սահմանաչափերը:

Ընկերությունը իր պարտքային ռիսկը զսպելու նպատակով կարող է իր հետ համագործակցող հաստատությունների համար սահմանել վարկի տրամադրման առավելագույն սահմանաչափեր: Յուրաքանչյուր հաստատության համար կարող է սահմանվել առանձին սահմանաչափ: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Ընկերությունը կարող է սահմանել սահմանաչափեր նաև վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերի վրա ըստ դրանց տրամադրման տարածաշրջանի, վարկառուների առանձին խմբերի և այլ հատկանիշների:

Ընկերության կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի 90 և ավել օր ժամկետանց դառնալու դեպքում վարկառուն պարտավոր է այդ վարկի գումարի չափով մարել Ընկերության կողմից տրամադրված վարկի գումարը:

Ընկերությունը վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի նկատմամբ հսկողությունը իրականացնում է համագործակցող հաստատությունների կողմից յուրաքանչյուր ամիս ներկայացվող հաշվետվությունների հիման վրա, ինչպես նաև Ընկերության համապատասխան աշխատակցի տեղերում վարկերի ստուգման միջոցով:

Գրավ

Ընկերությունը կիրառում է բազմաթիվ միջոցներ պարտքային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց ապահովում վերցնելը: Ընկերությունը որպես վարկերի և փոխատվությունների համար ապահովման հիմնական միջոց բոլոր վարկառուների հետ կնքում է պահանջի իրավունքի զիջման (ցեսիայի) պայմանագիր, համաձայն որի Ընկերությունն իրավունք է ստանում հարկ եղած դեպքում օգտվել Ընկերության կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի պայմանագրերից բխող վարկատուի և գրավառուի բոլոր իրավունքներից:

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից տրամադրված վարկերը ամբողջությամբ ապահովված են վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերով:

Պարտքային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն պարտքային ռիսկին, ինչ վարկերը:

25.1.3 Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական միջոցների հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Ընկերությունը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

Ընկերությունը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխատվության համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական միջոցների հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի և փոխատվությունների գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

25.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվեն այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Ընկերությունը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել առևտրային պորտֆել: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի շուկայական ռիսկի զգալի կենտրոնացումներ:

25.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա: Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	+10	70,763	+10	29,853
ԱՄՆ դոլար	-10	(70,763)	10	(29,853)

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ			2017
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ			
Դրամական միջոցներ	2,729,825	535,764	3,265,589
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,254,733	6,248,100	12,502,833
Տրամադրված վարկեր	42,323,821	-	42,323,821
	51,308,379	6,783,864	58,092,243
Պարտավորություններ			
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	17,173,297	-	17,173,297
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	965,468	-	965,468
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,002,682	6,076,234	8,078,916
Թողարկված պարտքային արժեթղթեր	4,751,824	-	4,751,824
Այլ պարտավորություններ	17,368	-	17,368
	24,910,639	6,076,234	30,986,873
Զուտ դիրք 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,397,740	707,630	27,105,370
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	50,078,224	7,119,257	57,197,481
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	26,807,353	6,820,728	33,628,081
Զուտ դիրք 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,270,871	298,529	23,569,400

Ազատ փոխարկելի արտարժույթը ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն:

25.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Իրացվելիության դիրքը գնահատվում և

կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների:

Ստորև ներկայացվում է 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տես ծանոթագրություն 24-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	**1-12 ամիս**	**1-5 տարի**	**Ընդամենը**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	29,560	4,403,244	17,483,308	21,916,112
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	697,037	331,715	1,028,752
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	142,256	1,055,573	7,870,079	9,067,908
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	536,284	5,133,660	5,669,944
Այլ պարտավորություններ	17,368	-	-	17,368
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	189,184	6,692,138	30,818,762	37,700,084

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	2,317,872	3,855,999	13,862,821	20,036,692
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	742,770	1,028,752	1,771,522
Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	147,214	868,663	6,421,504	7,437,381
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	4,118,726	4,713,701	8,832,427
Այլ պարտավորություններ	15,847	-	-	15,847
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	2,480,933	9,586,158	26,026,778	38,093,869

Ընկերությունը ներգրավել է էական գումարներով միջոցներ ՀՀ կառավարությունից և ՀՀ կենտրոնական բանկից: Նշված միջոցների ցանկացած էական վաղաժամկետ կամ չնախատեսված վերադարձ կարող է բացասաբար անդրադառնալ Ընկերության գործունեության վրա: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ ֆինանսավորման ներկայիս մակարդակը կպահպանվի տեսանելի ապագայում, և միջոցների վերադարձի դեպքում նա կտեղեկացվի նախապես, ինչը հնարավորություն կտա Ընկերությանը ժամանակին իրացնելու իր իրացվելի միջոցները և վերադարձնելու պարտքը:

25.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Ընկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է խորհուրդը, գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,

- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում:
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և կորուստների նվազեցման առաջարկվող գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշների մշակում և կիրառում:

Ընկերության ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է վերստուգողի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Վերստուգողի դիտարկումների արդյունքները քննարկվում են Ընկերության ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են խորհրդին:

26 Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքերի համադրում

Ընկերության ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Բաժնետի-րական կապիտալ	Պարտավո-ություններ ՀՀ բանկերի նկատմամբ	Պարտավո-ություններ ՀՀ կառավարու-թյան նկատմամբ	Պարտավո-ություններ միջազգային ֆինանսական կազմակեր-պությունների նկատմամբ	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ընդամենը
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	18,902,958	16,393,690	1,609,773	6,820,733	8,788,038	52,515,192
Դրամային հոսքերից	2,000,010	466,399	(644,305)	1,235,387	(4,036,214)	(978,723)
Վճարումներ	-	(3,181,004)	(742,770)	(994,216)	(4,782,360)	(9,700,350)
Ստացված գումար	2,000,010	3,647,403	98,465	2,229,603	746,146	8,721,627
Ոչ դրամային հոսքերից	-	313,208	-	22,796	-	336,004
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	-	313,208	-	22,796	-	336,004
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,902,968	17,173,297	965,468	8,078,916	4,751,824	51,872,473

27 Կապիտալի համարժեքություն

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Ընկերության կապիտալը վերահսկվում է օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Ընկերությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանցից փոխառություններ ներգրավելու նպատակով պարտատոմսերի թողարկում և հրապարակայինտեղաբաշխում իրականացնող վարկային կազմակերպությունների նկատմամբ ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանում է 12%, որը Ընկերության համար կիրառելի է դարձել 2011թ-ից, պարտատոմսերի թողարկման հետ կապված:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, գլխավոր պահուստ, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային ռիսկերի գնահատման:

2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների, կապիտալի համարժեքության նորմատիվի չափը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Աուդիտ չարված	
	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Հիմնական կապիտալ	26,519,428	20,693,271
Ռիսկով կշռված ակտիվներ	29,336,277	27,809,440
Կապիտալի համարժեքության նորմատիվ	90.4%	74.4%

Ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

2011թ. սեպտեմբերից վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 4,000,000 հազար ՀՀ դրամ գումարով:

Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը որոշվում է տվյալ վարկային կազմակերպության նկատմամբ մեկ փոխառուի կողմից ունեցած բոլոր

պարտավորությունների և նրա ընդհանուր կապիտալի հարաբերակցությամբ, որը Ընկերության համար սահմանված է ոչ ավել քան 30%:

2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Աուդիտ չարված	
	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Հիմնական կապիտալ	26,519,428	20,693,271
Մեկ փոխառուի գծով ռիսկի գումար	4,615,416	4,064,213
Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափ (N3)	17.4%	19.6%

Ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը պահպանել է մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ,

ԼԻՑԵՆԶԻԱ

Գրանցված է
ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի
16.06.2009թ. թիվ 182 Ա որոշմամբ

Փոփոխված է
ՀՀ ԿԲ նախագահի 19.10.2011թ.
թիվ 1/1167 Ա որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ թիվ 86

Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, սույն վկայականը տրվում է

«Ազգային հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությանը

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փողոց 22 շենք, 7/1 տարածք
Գրանցման համարը՝ 26
Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ՝
16.06.2009թ.

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝

..... Արթուր Ջավադյան

Կ.Տ.

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

Ա. Ջավադյան

Լիցենզիան տրվել է 16.06.2009թ.

Վերաձևակերպվել է ՀՀ ԿԲ խորհրդի 14.10.2011թ.
թիվ 271/Ա որոշմամբ

Վարկային գործունեության լիցենզիա թիվ 26

Սույն լիցենզիան տրվում է «Ազգային հիփոթեքային ընկերություն»
վերաֆինանսավորում իրականացնող վարկային
կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությանը

«Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով վարկային կազմակերպության գործունեություն և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

Գրանցման թիվը 26

AMERICAN BANK NOTE COMPANY.

ՀԱՎԵԼՎԱԾ 4

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ՎՎԿ ՓԲԸ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

2019 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 024 Լ

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, և *ղեկավարվելով* «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետով և «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 8.3 կետի «զ» և 9.3 կետի «ա» ենթակետերով՝

Որոշում է.

1. Թողարկել և տեղաբաշխել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ պարտատոմսեր՝ 3,500,000,000 (երեք միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ պարտատոմսերի թողարկման պայմանները և պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման պայմանները՝ համաձայն հավելվածի (կցվում է):

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն»

ՎՎԿ ՓԲԸ խորհրդի նախագահ՝ Արթուր Ջավադյան

ք. Երևան

03.10.2019թ.

Հավելված

Հաստատված է
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն»
ՎՎԿ ՓԲԸ խորհրդի 2019 թվականի
սեպտեմբերի 25-ի թիվ 024 L որոշմամբ

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպություն) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. **<u>Պարտատոմսերի թողարկման պայմանները</u>**

1.1 Պարտատոմսերի տեսակը՝ անվանական, ֆիքսված արժեկտրոնով,

1.2 Պարտատոմսերի ձևը՝ ոչ փաստաթղթային,

1.3 Պարտատոմսերի փոխարկելիությունը՝ ոչ փոխարկելի,

1.4 Պարտատոմսերի թողարկման ծավալը՝ 3,500,000,000 (երեք միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ,

1.5 Պարտատոմսերի քանակը՝ 350,000 (երեք հարյուր հիսուն հազար) հատ,

1.6 Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ,

1.7 Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը՝ ՀՀ ԿԲ կողմից պարտատոմսերի ազդագրի գրանցմանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում: Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը սահմանվում է Կազմակերպության գործադիր տնօրենի որոշմամբ,

1.8 Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ մինչև պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը,

1.9 Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում՝ պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրում,

1.10 Պարտատոմսերը տեղաբաշխվում են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» («ԷՅԷՄԷՔՍ») ԲԲԸ (այսուհետ՝ Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» (այսուհետ՝ Կանոններ) սահմանված կարգով: Աճուրդը անցկացվում է մեկ անգամ,

1.11 Տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Կազմակերպությունն այդ մասին տեղեկությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Կազմակերպությունը նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով,

1.12 Պարտատոմսերի մարման օրը՝ Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 36-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսերի մարումը կատարվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,

1.13 Արժեկտրոնի տոկոսադրույքը՝ ֆիքսված՝ տարեկան 7.5 (յոթ ամբողջ հինգ տասնորդական) տոկոս,

1.14 Արժեկտրոնի գումարը՝ 375 (երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ մեկ պարտատոմսի դիմաց յուրաքանչյուր արժեկտրոնի վճարման ժամանակ,

1.15 Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային (2 անգամ օրացուցային տարվա մեջ), տեղաբաշխման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ և 36-րդ ամիսների համապատասխան օրը: Արժեկտրոնի հաշվարկման և վճարման ամսաթվերը համընկնում են: Եթե արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը,

1.16 Օրերի հաշվարկման պայմանականությունը՝ փաստացի/փաստացի

DCS=Օրերի փաստացի քանակը, D2M2Y2 - D1M1Y1

DCC=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1

DSN=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2

որտեղ՝

D1M1Y1 գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է.

D2M2Y2 գործարքի կատարման ամսաթիվն է

D3M3Y3 գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

1.17 Արժեկտրոնի կուտակումը՝ $AI = FV * \frac{C}{f} * \frac{DCS}{DCC}$

որտեղ

AI - կուտակված տոկոս,

FV - պարտատոմսերի անվանական արժեք,

C - արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույք,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=2՝ կիսամյակային վճարումների դեպքում:

Արժեկտրոնի կուտակումը սկսում է հաշվարկվել պարտատոմսերի թողարկման օրից,

1.18 Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{FV}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DP- Պարտատոմսի գինն է,

DSN- գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,

DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,

f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N-հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C- տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

y- թողարկման պահին մինչև մարում եկամտաբերություն,

i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից,

FV - պարտատոմսի անվանական արժեք է:

1.19 Պարտատոմսերի շրջանառության ձևը՝ ազատ շրջանառության իրավունքով,

1.20 Պարտատոմսերի մարման երաշխավորումը՝ պարտատոմսերի մարումը չի երաշխավորվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից,

1.21 Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների հաշվառման համակարգը՝ Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացվում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Դեպոզիտարիա) կողմից,

1.22 Արժեկտրոնների վճարումները և պարտատոմսերի մարումն իրականացվում է ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով,

1.23 Պարտատոմսերի մարումը և եկամուտների վճարումն իրականացվում է պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 24:00-ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ցուցակում առկա տեղեկատվության հիման վրա, համաձայն որի՝ Կազմակերպությունը պարտատոմսերի մարման և եկամուտների վճարման նախորդ օրը հանձնարարական է տալիս Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ի հաշվի օպերատորներից մեկին համապատասխան վճարումները վճարման օրը փոխանցել Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածքում գործող բանկերում բացված ՀՀ դրամով բանկային հաշիվներին (այսուհետ՝ բանկային հաշիվ):

1.24 Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են,

1.25 Արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) նույնն են,

1.26 Կազմակերպությունը չի փոխանցում վճարումները այն սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում և Կազմակերպությունը այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում Կազմակերպությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ,

«Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված դեպքերում:

ՀԱՎԵԼՎԱԾ 5

ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

ք.Երևան «09» հոկտեմբերի 2019թ.

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Թողարկող») ի դեմս Գործադիր տնօրեն Էդմոնդ Վարդումյանի, որը գործում է Թողարկողի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ»), ի դեմս Գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանի, որը գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով նաև «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Հիմք ընդունելով Թողարկողի Խորհրդի՝ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին 2019 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 024L որոշումը՝ Թողարկողը նախատեսում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից պարտատոմսերի թողարկման ազդագրի գրանցմանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում (օրը կնշանակվի Թողարկողի Գործադիր տնօրենի որոշմամբ) թողարկել և տեղաբաշխել 3,500,000,000 (երեք միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ ծավալով դրամային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր (այսուհետ՝ «Պարտատոմսեր») հետևյալ պայմաններով.

1.1.1.	*Պարտատոմսերի տեսակը՝*	անվանական արժեկտրոնային
1.1.2.	*Արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝*	կիսամյակային
1.1.3.	*Պարտատոմսերի ձևը՝*	ոչ փաստաթղթային
1.1.4.	*Պարտատոմսերի փոխարկելիությունը՝*	ոչ փոխարկելի
1.1.5.	*Պարտատոմսերի թողարկման արժույթ*	ՀՀ դրամ
1.1.6.	*Պարտատոմսերի թողարկման ծավալը՝*	3,500,000,000 (երեք միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
1.1.7.	*Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝*	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
1.1.8.	*Պարտատոմսերի քանակը՝*	350,000 (երեք հարյուր հիսուն հազար) հատ
1.1.9.	*Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը՝*	ՀՀ կենտրոնական բանկի կողմից պարտատոմսերի թողարկման ազդագրի գրանցմանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում

1.1.10.	*Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝*	36 (երեսունվեց) ամիս
1.1.11.	*Պարտատոմսերի արժեկտրոնային եկամտաբերությունը՝*	Տարեկան 7.5 (յոթ ամբողջ հինգ տասնորդական) տոկոս
1.1.12.	*Պարտատոմսերի շրջանառության ձևը՝*	բացառապես կարգավորվող շուկայում ազատ շրջանառության իրավունքով
1.1.13.	*Պարտատոմսերի շրջանառելիության սահմանափակումներ՝*	Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում չի սահմանվում՝ վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ՀՀ իրավական ակտերին համապատասխան
1.1.14.	*Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը՝*	Երաշխավորված
1.1.15.	*Պարտատոմսերի ապահովվածությունը՝*	Ապահովված չեն
1.1.16.	*Պարտատոմսերի մարումը և արժեկտրոնների վճարումը՝*	Պարտատոմսերի մարումը և արժեկտրոնների վճարումն իրականացվում է պարտատոմսերի մարման և/կամ արժեկտրոնների վճարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 24:00-ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ցուցակում առկա տեղեկատվության հիման վրա: Կազմակերպությունը մինչև պարտատոմսերի մարման և/կամ արժեկտրոնների վճարման օրվա ժամը 12:00-ը պարտատոմսերի մարումը և/կամ արժեկտրոնների վճարումն իրականացնելու հանձնարարական է տալիս Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ի հաշվի օպերատորին՝ Դեպոզիտարիայում վարվող դրամային հաշվին ապահովելով պարտատոմսերի մարման և/կամ արժեկտրոնների վճարման համար անհրաժեշտ ամբողջ գումարը: Վճարումներն իրականացվում են անկանխիկ ձևով՝ Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի՝ Պարտատոմսերի ռեեստրում գրանցված ՀՀ տարածքում գործող բանկերում բացված ՀՀ դրամով բանկային հաշիվներին (այսուհետ՝ բանկային հաշիվ): Վճարումները չեն փոխանցվում այն սեփականատերերին (անվանատերերին), որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ցուցակում և Կազմակերպությունը այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում այդ սեփականատերերի վճարումները երեք աշխատանքային օրվա ընթացքում, փոխանցվում են նոտարի դեպոզիտ:
1.1.17.	*Պարտատոմսերի գնի հաշվարկման բանաձև՝*	Մեկ Պարտատոմսի գինը որոշվելու է հետևյալ բանաձևով.

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{FV}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (2 - կիսամյակային վճարումների համար),

N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվն է,

C - միավոր պարտատոմսի տարեկան արժեկտրոնն է,

Y - մինչև մարում եկամտաբերությունն է,

N - տվյալ պահին մնացած արժեկտրոնի վճարումների քանակն է,

i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից,

FV - պարտատոմսի անվանական արժեք է:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Սույն պայմանագրով Բանկը պարտավորվում է Թողարկողին մատուցել Պարտատոմսերի երաշխավորված տեղաբաշխման հետ կապված սույն պայմանագրի 2.2. կետում նշված ծառայությունները, իսկ Թողարկողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով վճարել մատուցված ծառայությունների համար:

2.2. Բանկը Թողարկողին մատուցում է հետևյալ ծառայությունները՝

2.2.1. Թողարկողի կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա մշակում է Պարտատոմսերի Ազդագիրը (այսուհետ՝ Ազդագիր) և աշխատանքներ է իրականացնում ՀՀ Կենտրոնական բանկում Ազդագրի գրանցման ուղղությամբ:

2.2.2. Սույն պայմանագրի 3-րդ մասով սահմանված կարգով, իրականացնում է Թողարկողի Պարտատոմսերի երաշխավորված տեղաբաշխում:

2.2.3. Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո ամփոփում է տեղաբաշխման արդյունքները, նախապատրաստում է տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին օրենսդրությամբ սահմանված հաշվետվությունները:

2.2.4. Ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում (այսուհետ՝ «Բորսա») Պարտատոմսերի տեղաբաշխման համար և տեղաբաշխումից հետո անհրաժեշտ գործողությունների իրականացման նպատակով:

2.2.5. Կազմակերպում է Բորսայում առևտրին Պարտատոմսերի թույլտվության գործընթացը, Թողարկողի աջակցությամբ պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների, փաստաթղթերի) կազմումը և ներկայացումը Բորսա:

3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Բանկը կազմակերպում է Բորսայում Պարտատոմսերի երաշխավորված տեղաբաշխման գործընթացը և պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների/փաստաթղթերի) Բորսա ներկայացումը: Սույն միջոցառման իրականացման ապահովման շրջանակներում Թողարկողը Բանկին լիազորում է Թողարկողի անունից հանդես գալ Բորսայում, մասնավորապես, Պարտատոմսերի թողարկման գործընթացի կազմակերպման հպմար ներկայացնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր:

3.2. Պարտատոմսերը տեղաբաշխվում են Բորսայի տեղաբաշխման համակարգով ստանդարտ փակ աճուրդի անցկացման միջոցով՝ Բորսայի կանոններով սահմանված կարգով:

3.3. Պարտատոմսերի ձեռքբերման հայտերի ընդունումն ու դրա իրականացման/մերժման հետագա գործընթացը կարգավորվում է Բորսայի համապատասխան ընթացակարգերի համաձայն:

3.4. Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին չեն կարող ներկայացվել.

3.4.1. գնման ոչ մրցակցային հայտ,

3.4.2. լրիվ բավարարմամբ հայտ:

3.5. Կողմերը հայտերի բավարարման կտրման նվազագույն գինը համապատասխանեցնում են պարտատոմսի տեղաբաշխմանը նախորդող 5 աշխատանքային օրերի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի 36 ամսական ժամկետայնությանը համապատասխանող տոկոսադրույքների միջինին 50 բազիսային կետով գերազանցող արժեքին:

3.6. Տեղաբաշխման արդյունքում Բորսայում չտեղաբաշխված ծավալը մինչև տեղաբաշխման օրվա ավարտը ձեռք է բերվում Բանկի՝ կողմից սույն պայմանագրի 3.5 կետում նշված կտրման նվազագույն գնով:

3.7. Սույն պայմանագրի 3.5 և 3.6 կետերում նշված տեղեկատվությունը հրապարակվում է տեղաբաշխման մասին հայտարարության մեջ:

3.8. Տեղաբաշխման աճուրդը կարող է հետաձգվել, ընդմիջվել կամ դադարեցվել, ինչպես նաև աճուրդի ընթացքում տեխնիկական ընդմիջում կարող է հայտարարվել Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ, Բորսայի կանոններով սահմանված կարգով: Տեղաբաշխումը կարող է չեղյալ կամ չկայացած համարվել Բորսայի կանոններով սահմանված կարգով:

4. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ընթացքում Բանկը կազմակերպում է Բորսայում առևտրին Պարտատոմսերի թույլտվության/ցուցակման գործընթացի իրականացումը՝ ներառյալ, Թողարկողի աջակցությամբ պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների/փաստաթղթերի) կազմումը և Բորսա ներկայացումը: Սույն միջոցառման իրականացման ապահովման շրջանակներում Թողարկողը Բանկին լիազորում է Թողարկողի անունից հանդես գալ Բորսայում, մասնավորապես, Թողարկողի Պարտատոմսերի առևտրին թույլտվության գործընթացի կազմակերպման համար ներկայացնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր /այդ թվում՝ գրություններ, տեղեկանքներ և այլն/, ստորագրել, կատարել անհրաժեշտ վճարումներ:

5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Թողարկողն իրավունք ունի՝

5.1.1. Բանկից պահանջել սույն պայմանագրով վերջինիս ստանձնած պարտավորությունների ամբողջովին կատարում:

5.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Բանկի կողմից սույն պայմանագրով մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Բանկի գործունեությանը:

5.1.3. Ողջամիտ և ժրենքին չհակասող ցուցումներ տալ Բանկին՝ ծառայության մատուցման (փաստաթղթերի կազմման և դրանց բովանդակության) վերաբերյալ:

5.1.4. Ծառայության մատուցման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալ Բանկից:

5.2. Թողարկողը պարտավոր է՝

5.2.1. Տեղաբաշխման գործընթացի շրջանակներում կատարել ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև սույն պայմանագրով սահմանված իր պարտականությունները:

5.2.2. Բանկի պահանջով ողջամիտ ժամկետներում տրամադրել նրա կողմից մատուցվող ծառայությունների համար անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև Բանկի պահանջով Բանկին ներկայացնել անհրաժեշտ փաստեր և հիմնավորումներ Թողարկողի կողմից բացահայտման ենթակա տեղեկատվության արժանահավատության և լիարժեքության վերաբերյալ:

5.2.3. Փոխհատուցել Բանկին ներկայացված անարժանահավատ և խեղաթյուրված (բաց թողնված) տեղեկատվության բացահայտման հետևանքով Բանկի կրած այն վնասները, որոնք առաջացել են պետական լիազորված մարմինների կամ Պարտատոմսեր ձեռքբերող ներդրողների պահանջով:

5.2.4. Անհրաժեշտության դեպքում, սույն պայմանագրով տրված լիազորություններից բացի, Բանկին տալ լիազորագրեր սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների պատշաճ մատուցման համար:

5.2.5. Սույն պայմանագրի գործողության ընթացքում չփոփոխել Պարտատոմսերի տեղաբաշխման պայմանները (մասնավորապես՝ սույն պայմանագրի 1.1.1.-1.1.17 կետերում նշվածները) և չկատարել այնպիսի գործողություններ, որոնք կսահմանափակեն

տեղաբաշխման ընթացքը կամ կվատթարացնեն Պարտատոմսերի տեղաբաշխման և շրջանառության պայմանները:

5.2.6. Բանկին ներկայացնել տեղեկատվություն ՀՀ կենտրոնական բանկ և Բորսա ներկայացվող տեղեկությունների և/կամ փաստաթղթերի լրացումների և փոփոխությունների (ընթացիկ, եռամսյակային և տարեկան հաշվետվությունների, էական փաստերի և տեղեկությունների) և դրանց բովանդակության վերաբերյալ:

5.2.7. Սույն պայմանագրով սահմանված ծառայությունների համար Բանկին վճարել սույն պայմանագրով սահմանված վճարները՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:

5.2.8. Սույն պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կատարմանը խոչընդոտող անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու դեպքում անհապաղ տեղեկացնել Բանկին այդ մասին:

5.2.9. Բանկի պահանջով կատարել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ այլ գործողություններ:

5.3. Բանկն իրավունք ունի՝

5.3.1. Թողարկողից պահանջել սույն պայմանագրով վերջինիս ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը:

5.3.2. Թողարկողից ստանալ և օգտագործել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար Թողարկողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ, ինչպես նաև այդ տեղեկությունների արժանահավատության և լիարժեքության (ամբողջականության) վերաբերյալ լրացուցիչ հիմնավորումներ և փաստարկներ, այդ թվում՝ Թողարկողից պահանջել ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձի պարզաբանումները Թողարկողի կողմից ներկայացված տեղեկատվության հավաստիությունը ստուգելու նպատակով:

5.3.3. Սույն պայմանագրի 2.2. կետով սահմանված ծառայությունների մատուցման ընթացքում Թողարկողի հետ կազմակերպել աշխատանքային հանդիպումներ և քննարկել այնպիսի հարցեր, որոնք պահանջում են հրատապ լուծումներ:

5.3.4. Հարցում կատարել Վարկային բյուրոներին Թողարկողի վարկերի և փոխառությունների վերաբերյալ հիմնավոր և հավաստի տեղեկատվություն ստանալու նպատակով:

5.3.5. Իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստանալ վարձատրություն՝ սույն պայմանագրով սահմանված կարգով, ժամկետներում և չափով:

5.4. Բանկը պարտավոր է՝

5.4.1. Տեղաբաշխման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ Բորսայի անդամներին տեղեկատվություն տրամադրել Պարտատոմսերի տեղաբաշխման մասին:

5.4.2. Տեղաբաշխման գործընթացի շրջանակներում կատարել ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված՝ իր կողմից ստանձնած պարտականությունները:

5.4.3. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը սկսել ոչ ուշ, քան սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու և Թողարկողի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը Բանկին տրամադրելու հաջորդ օրվանից:

5.4.4. Պատշաճ որակով մատուցել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները:

5.4.5. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով և ողջամիտ ժամկետներում:

5.4.6. ՀՀ օրենսդրության շրջանակներում ապահովել կատարվող գործառնությունների գաղտնիությունը:

5.4.7. Պարտատոմսերի տեղաբաշխումից հետո, մեկ աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողին տրամադրել Պարտատոմսերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը տեղաբաշխման օրվա դրությամբ:

5.4.8. Թողարկողին տրամադրել տեղեկություններ տեղաբաշխման աճուրդի մասնակիցների և ներկայացված հայտերի վերաբերյալ:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Սույն Պայմանագրի առարկա Պարտատոմսերի՝ Բորսայում առևտրի թույլատրմանը (կամ սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված՝ Բանկից անկախ պատճառներով Բորսայում առևտրին Պարտատոմսերի թույլատրման մերժմանը) հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում Բանկը Թողարկողին է ներկայացնում սույն պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների հաշիվ-ապրանքագիր:

6.2. Սույն համաձայնագրով նախատեսված ծառայությունների դիմաց Թողարկողը Բանկին վճարում է 7,000,000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ:

6.3. Պարտատոմսերի, տեղաբաշխման և առևտրի թույլատրման հետ կապված բոլոր ծախսերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարումները կատարվում են Թողարկողի կողմից:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

7.2. Կողմը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, եթե դա ծագել է մյուս Կողմի՝ սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով:

7.3. Բորսայի կանոններով սահմանված կարգով Պարտատոմսերը առևտրին չթույլատրման համար Բանկը պատասխանատվություն չի կրում, եթե Բանկն իրականացրել է Պարտատոմսերի առևտրին թույլատրման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները, սակայն առևտրին չթույլատրումը եղել է Բանկից անկախ պատճառներով:

7.4. Սույն պայմանագրով սահմանված ժամկետներում ծառայությունների դիմաց վճարումը չկատարելու դեպքում Թողարկողը Բանկին վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0.13 (զրո ամբողջ տասներեք հարյուրերորդական) տոկոսի չափով, բացառությամբ այն դեպքերի, երբ վճարման չկատարումը պայմանավորված է Բանկի կողմից ծառայությունների ոչ պատշաճ մատուցմամբ: Տույժի վճարումը Թողարկողին չի ազատում իր վրա դրված պարտավորությունները կատարելուց և խախտումները վերացնելու պարտականության կատարումից:

7.4.1. Սույն պայմանագրի 2.2. կետով սահմանված ծառայությունների մատուցումից հրաժարվելու, ոչ պատշաճ կատարելու և/կամ սույն պայմանագիրը Բանկի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծելու դեպքում Բանկը Թողարկողին հետ է վերադարձնում սույն պայմանագրի

6.2 կետում նշված գումարը և վճարում է այդ գումարի 10 (տասը) տոկոսի չափով տուգանք, եթե սույն պայմանագրի լուծումը պայմանավորված չէ Թողարկողի կողմից սույն պայմանագրով նախատեսված՝ Թողարկողի պարտավորությունների ոչ պատշաճ կատարելու հետ:

7.4.2. Սույն պայմանագիրը Թողարկողի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվելու դեպքում Թողարկողի կողմից Բանկին վճարված՝ սույն պայմանագրի 6.2 կետում նշված գումարը Բանկի կողմից հետ չի վերադարձվում, եթե սույն պայմանագրի լուծումը պայմանավորված չէ Բանկի կողմից սույն պայմանագրի 2.2. կետով սահմանված ծառայությունները ոչ պատշաճ կատարելու հետ:

7.5. Սույն պայմանագրի որևէ դրույթի անվավերությունը չի հանգեցնում այլ դրույթի (դրույթների) անվավերության: Կողմերը պարտավորվում են չվիճարկել պայմանագրի լրիվ կամ մասնակի անվավերությունը կամ իրավաբանական ուժը՝ պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունները չկատարելու համար, և միաժամանակ պարտավորվում են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն ու գործողությունները պայմանագրի նպատակը և պայմանները գործող օրենսդրության համաձայն իրականացնելու ուղղությամբ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Սույն պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև առաջացած տարաձայնություններն ու վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Սույնով Թողարկողը հաստատում է, որ Բանկն իրեն ծանոթացրել է ՀՀ-ում ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող իրավական ակտերին:

10.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից և գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված Կողմերի պարտավորությունների լրիվ և պատշաճ կատարումը:

10.3. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս Կողմին նախապես մեկ շաբաթ առաջ պատշաճ ծանուցելով:

10.4. Սույն պայմանագրում Կողմերի համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

10.5. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ապահովել մյուս կողմից ստացված բանկային, ֆինանսական, առևտրային և այլ տեղեկատվության խիստ գաղտնիությունը: Նման տեղեկատվության փոխանցումը երրորդ անձանց հնարավոր է միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

10.6. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱՆԿ
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Պուշկինի 19

ՀՎՀՀ՝ 02500518
թ/հ՝ 103002101519
ՀՀ կենտրոնական բանկ,
հեռ.՝ (+374 10) 59-23-23
ֆաքս.՝ (+374 10) 54-78-94

Գործադիր տնօրեն՝

Աշոտ Օսիպյան

ԹՈՂԱՐԿՈՂ
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 22, 7/1
ՀՎՀՀ՝ 02707189
հ/հ՝ 103006000683
ՀՀ կենտրոնական բանկ
հեռ.՝ (+374 10) 56-07-41, (+374 10) 56-09-71
ֆաքս.՝ (+374 10) 56-07-41

Գործադիր տնօրեն՝

Էդմոնդ Վարդումյան

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Վ. Սարգսյան 26/1
Հեռախոս՝010 511211
Ֆաքս՝(+37410) 511212
Էլ.փոստ՝post@conversebank.am

Տպված է՝15/10/2019 09:47 (UTC+04:00)

Բյուջետային փոխանցում N 002600

Ամսաթիվ	**11/10/2019**	Նույնացուցիչ	**e17a10ae-c377-4739-bb77-099b522d02ed**
Հաշիվ	Շահառուի հաշիվ	Գումար	
1930036293860100	**900005016119**	**AMD**	**50,000.00**
Վճարողի անվանում	**ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՎՎԿ ՓԲԸ**		
Վճարողի բանկ	**ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ**		
ՀՎՀՀ	**02707189**		
Տարածաշրջանի/ՀՏ կոդ	**23**		
Շահառուի անվանում	**Կենտրոնական Բանկ**		
Գումարը բառերով	**Հիսուն հազար դրամ**		
Նպատակ	**Ազդագրի գրանցման վճար**		
Լրացուցիչ տվյալներ			
Հաշվետվողականության կոդ	**PTD/OTM000000E000000OT/0/0**		
Հաղորդագրություն (տող 1)	**-**		
Հաղորդագրություն (տող 2)	**-**		
Հաղորդագրություն (տող 3)	**-**		
Հաղորդագրություն (տող 4)	**-**		

Ստորագրող	**ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՎՎԿ ՓԲԸ Կարապետյան Արամ**
Ամսաթիվ	**11/10/2019 16:23:28.000**
Սարքի անվանում	**DIGIPASS GO ընտանիքի սարք**
Սարքի սերիալ N	**2768209589**
Ստորագրություն	**144146**

Կատարված է բանկի կողմից